

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 50 (1900) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒՐ 5, 2019  
VOLUME 38, NO. 50 (1900) SATURDAY, JANUARY 5, 2019



Պաշտոնաթերթ  
Ս. Գ. Հեղափոխական Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104



HAPPY NEW YEAR

2019

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



**ԽԱՐԱԳՐԱԿԱՆ**

### Յեղափոխութեան Տարին՝ Դէպի Վերաշինութեան Տարին

Իւրաքանչիւր տարուայ աւարտին պարտաւոր ենք վերաքաղ մը ընելով անդրադառնալ անցնող ամիսներուն Հայ ժողովուրդի արձանագրած յաղթանակներուն ու յաջողութիւններուն, դիմագրաւած մարտահրաւերներուն եւ ունեցած բացթողումներուն:

2018 տարին մեր ազգի համար եղաւ յաղթանակներու տարի մը, որու ընթացքին Հայրենաբնակ մեր ժողովուրդը արձանագրեց իր նորագոյն պատմութեան փառահեղ էջերէն մէկը: Քսանամեայ պայքարներէ ետք տապալեցաւ նախկին փտած համակարգը ու սեւ ամպերը հեռացան Հայաստանի երկնակամարէն: Այս բոլորը տեղի ունեցան ժողովրդային, խաղաղ, թաւշեայ յեղափոխութեամբ, որու առաջնորդը հանդիսացաւ նախկին լրագրող, քաղաքական բանտարկեալ, խորհրդարանի անդամ եւ երկար տարիներու ընդդիմադիր գործիչ Նիկոլ Փաշինեանը, որ հակառակ բոլոր կանխատեսումներուն կարողացաւ ոտքի հանել յուսալքուած զանգուածները ու կերտել յաղթանակ մը, որ արժանացաւ ոչ միայն հայութեան, այլ եւ ամբողջ աշխարհի զարմանքին ու հիացմունքին:

Այս յաղթանակով նոր հեռանկարներ բացուեցան հայ ժողովուրդի առջեւ՝ հիմը դնելով «նոր Հայաստանի» մը, ուր յուսալքութիւնը փոխարինուեցաւ լաւատեսութեամբ եւ քաղաքացիներուն տրուեցաւ առիթ՝ իրենց բնածին տաղանդը ի գործ դնելու ու կառուցելու աւելի փայլուն ապագայ մը իրենց զաւակներուն ու թոռներուն համար:

Մինչ այդ, մեր Հայրենիքը կը շարունակէ դիմագրաւել բազում դժուարութիւններ: Ժողովուրդի տնտեսական ու ընկերային վիճակի բարելաւումը, արտագաղթի կասեցումը, փտախտի դէմ պայքարը, երկրի կողոպտուած հարստութեան վերադարձը, դատական համակարգի վերականգնումը այն կարելորագոյն խնդիրներն են, որոնք այսօր ծառայած են նոր իշխանութիւններուն առջեւ: Այս ուղղութեամբ ժողովուրդի ակնկալիքները ու սպասումները շատ մեծ են, սակայն պէտք է գիտակցիլ, որ տասնամեակներու ընթացքին կուտակուած դժուարութիւններու յաղթահարումը կը կարօտի, գերլարուած աշխատանքի, համախմբուածութեան, նուիրումի եւ մանաւանդ ժամանակի:


Հայաստանի մէջ տեղի ունեցող բարեփոխումները սկսած են ծառայել նաեւ մեր բանակի հզօրացման ու դիրքերու ամրապնդման: Արցախի սահմաններու պաշտպանութիւնը ու ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի միջազգային ճանաչումն ու ամրապնդումը կը շարունակէ մնալ մեր ազգի համար առաջնահերթութիւն: Պատերազմի վտանգը միշտ առկայ է ու թշնամին իր ամէնօրեայ սպառնալիքներով կը փորձէ միակողմանի զիջումներ պարտադրել Արցախահայութեան: Այստեղ հրամայական է որ, շարունակուի Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութիւնը՝ սանձելու համար Ատրաշխանական կողմի ռազմական ձգտումները, ժողովուրդը կառչած պահելու իր հողին ու մեծ զոհողութիւններու գնով ձեռք ձգուած անկախութեանը:

Հայաստանի ժողովուրդի յաղթանակը ունեցաւ նաեւ իր դրական ներգործութիւնը սփիւռքի վրայ: Վերջին տարիներու իր թմբիւրէն դուրս բերաւ սփիւռքահայութիւնը: Անտարբերութիւնը փոխարինուեցաւ խանդավառութեամբ, մտահոգութիւնը փոխարինուեցաւ լաւատեսութեամբ: Սփիւռքը իր դիմագրաւած բազում դժուարութիւններու յաղթահարման ու հայապահպանման աշխատանքներուն գծով արդիւնքներու հասնելու ճանապարհին կարիքը ունի նայելու դէպի իր Հայրենիքը՝ ուր կը կիրառուի ժողովրդավարութիւնը, կը տիրէ ընկերային արդարութիւնը, կը գործէ տնտեսական հաւասարութիւնը ու կը բացակայի կաշառակերութիւնը: Այս բոլորը այն կարելոր ազդակներն են, որոնք սփիւռքահայութիւնը կը մօտեցնեն Հայաստանին ու օտարութեան մէջ ծնած ու մեծցած երիտասարդութիւնը կը խանդավառեն իրենց ազգային պատկանելիութեամբ, իսկ արտագաղթածներուն առիթը կու տան մտածելու հայրենադարձութեան մասին:

Վստահ ենք, որ 2019 թուականը պիտի ըլլայ վերաշինութեան տարի բոլոր այն բնագաւառներէն ներս, ուր մեր ժողովուրդը կարիքն ունի յաղթահարելու դժուարութիւններ ու արձանագրելու բարելաւումներ:

Թող նոր տարին դառնայ կարելոր հանգրուան մը եւս մը մեր ազգի համար՝ առաջնորդելով մեզ նորանոր յաղթանակներու:

Շնորհաւոր Նոր Տարի



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը կը շնորհաւորէ համայն հայութիւնը Նոր Տարուայ և Ծննդեան տօներուն առիթով:

Արդարեւ, Հայաստանի համար բախտորոշ էր անցնող տարին, որու ընթացքին մեր յաւերժական հայրենիքը կերտեց իր նորագոյն պատմութեան ամենէն փայլուն էջերէն մէկը: Արիւ-Մայիսին տեղի ունեցած ժողովրդային Թաւշեայ յեղափոխութիւնը տապալեց քսանամեայ լճացած վարչակարգը ու անոր հետ տարաւ այն բոլոր արատաւոր երեւոյթները, որոնք երկիրը հասցուցած էր անդունդի եզրին: Յաղթանակած մեր ժողովուրդին առջեւ բացուեցան նոր հորիզոններ, որոնք մեծ յոյսեր ու լաւատեսութիւն կը ներշնչեն ապագայի նկատմամբ Հայաստանէն մինչեւ սփիւռքի հեռաւոր անկիւններուն վրայ ապրող մեր հայրենակիցներուն մօտ:

Այս բոլորով հանդերձ, կը շարունակենք ազգովին դիմագրաւել բազում մարտահրաւերներ, որոնց յաղթահարումը կը կարօտի մեր ժողովուրդի բաղկացուցիչ բոլոր միաւորներու համագործակցութեան եւ ուժերու գերլարումին:

Հայաստանի քաղաքացին կը փորձէ յաղթահարել երկրի առջեւ ծառայած տնտեսական ու ընկերային բազում տագնապները, որոնցմէ կախեալ է ոչ միայն հայրենիքի ապագան, այլ նաեւ արտագաղթի կասեցումն ու հայրենադարձութեան գործի յաջողութիւնը:

Արցախի մեր հերոսական ժողովուրդը կը շարունակէ մնալ թշնամիի ամենօրեայ թիրախ եւ հայրենիքը պաշտպանող մեր քաջարի զինուորները կը շարունակեն անառիկ պահել մեր սահմանները՝ ի գին ամեն զոհողութեան:

Միջին արեւելքի հայաշատ երկիրներէն ներս շարունակուող պատերազմական վիճակներն ու քաղաքական վերիվայրումները հայութեան մէկ կարելոր հատուածի ապագան կը դնեն հարցականի տակ:

Եւրոպական ու Ամերիկեան ցամաքամասերու վրայ բնակող մեր զաւակները կը շարունակեն մղել զոյութեան պայքար՝ ձուլումի ու մայրենի լեզուի կորուստին դէմ:

Այնու ամենայնիւ, 2019 թուականը կը թեւակոխենք առաւել լաւատեսութեամբ եւ նոր ակնկալիքներով: Համոզուած ենք, որ նոր տարին իր հետ պիտի բերէ աւելի պայծառ օրեր ու միասնական ջանքերով պիտի կարողանանք յաղթահարել մեր ազգի առջեւ ծառայած բոլոր մարտահրաւերները՝ ի փառս մայր հայրենիքի ու հայ ժողովուրդի:

Նոր Տարուայ եւ Ծննդեան տօներուն առիթով կը մաղթենք մեր հայրենակիցներուն առողջութիւն, յաջողութիւն ու երջանկութիւն, իսկ հաւաքական կեանքէն ներս արդիւնաբեր ու խաղաղ տարի մը:

ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւն

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

### MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



# Վարչապետի Պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի Շնորհաւորական Ուղերձը Ամանորի Եւ Սուրբ Ծննդեան Տօներուն Առթիւ



Սիրելի ժողովուրդ, Հայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ, Արցախի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ, Սփիւռքի հպարտ հայութիւն:

Ահա եւ անցաւ 2018 թուականը: Սա մի տարի էր, որ մնալու է համաշխարհային եւ հայ ժողովրդի պատմութեան մէջ, իւրաքանչիւր հայի յիշողութեան մէջ՝ որպէս ժողովրդի իշխանութեան հաստատման, քաղաքացիական արժանապատուութեան, լաւատեսութեան ու պետականութեան յաղթանակի տարի:

2018-ը մի տարի էր, երբ հայաստանաբնակ թէ սփիւռքահայ, մեծ ու մանուկ, կին թէ տղամարդ, գիւղաբնակ թէ քաղաքաբնակ՝ միաւորուեցին մէկ ընդհանուր նպատակի շուրջ եւ կերտեցին մէկ ընդհանուր յաղթանակ, որն ի վերջոյ դարձաւ ազգային միասնութեան մի բացառիկ նուաճում:

2018-2019 թուականների այս սահմանագծին ուզում եմ ձեռակերպել, ուրեմն, այն խնդիրը, որ դրուած է մեր առաջ. 2019 թուականը դարձնել նոյնքան սիրելի ու հարազատ, նոյնքան յիշարժան եւ յաղթանատ, որքան եղաւ 2018 թուականը:

Եւ հարկ եմ համարում արձանագրել, որ անցնող տարին ոչ թէ մեր յաղթանակների գագաթն էր, այլ ընդամենը ստորոտը, ոչ թէ մեր երթի եզրագիծն էր, այլ ընդամենը մեկնարկը:

2019 թուականին մենք պէտք է նուաճենք նոր բարձունքներ, արձանագրենք նոր յաջողութիւններ եւ առաջին հերթին մեր երկրի սոցիալ-տնտեսական կենանքում:

2019 թուականի մեր հիմնական խնդիրը տնտեսական յեղափոխութիւնն է, նրա արդիւնքներն աւելի ու աւելի տեսանելի դարձնելը: Բայց եկող տարին նոյնպէս մեր յաղթանակների գագաթնակէտը չի լինելու, ոչ թէ այն պատճառով, որ մեր թռիչքը ցածր է լինելու, այլ այն պատճառով, որ մեր ազգային եւ պետական

յաւակնութիւնները լինելու են բարձր, աւելի բարձր, աւելի ու աւելի բարձր:

Սրանում է Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թաւշեայ, ժողովրդական յեղափոխութեան առանցքային իմաստը: Երբ ժողովուրդը հաւատում է իր միասնութեան ուժին, իր անցեալի եւ ապագայի ուժին: Մենք հաւատում ենք մեր ամէն քաղաքացու ստեղծարար տաղանդին եւ 2019 թուականը պիտի դառնայ հէնց ստեղծարար տաղանդի յաղթանակի տարի, երբ ամէն անհատ, Հայաստանի Հանրապետութեան ամէն քաղաքացի, Հայաստան ներգաղթած ամէն մի հայ իրեն տեսնում է ոչ թէ սպառողի, այլ արարողի դերում, ոչ թէ հետեւորդի, այլ առաջնորդի դերում, ոչ թէ հարկ քաբցնողի, այլ հարկ վճարողի դերում, ոչ թէ գործազուրկի, այլ աշխատողի դերում, ոչ թէ աղքատի, այլ աղքատութեանը յաղթողի, աղքատութեան հետ չհաշտուողի, աղքատութիւնը ստեղծարար մտքով, արդար աշխատանքով յաղթահարողի դերում:

2019 թուականը պէտք է դառնայ անհատական ջանքի յաղթանակի տարի, մտքի ու աշխատանքի համադրման տարի: Եւ ուրեմն, ամանորեայ այս օրերին մեր տրամադրութիւնը պէտք է նոր ուժով ու եռանդով լիցքաւորի բոլորիս, նոր լաւատեսութեամբ եւ սիրով համակի մեր հայրենիքն ու ժողովրդին:

Սիրելի հայրենակիցներ, Ամանորեայ այս երեկոյին ուզում եմ առանձնաատուկ ողջոյններ յղել առաջնագծում եւ սահմանին կանոնած մեր բոլոր զինուորներին, սպաներին, գեներալներին, ովքեր աշաւուրջ հսկում են մեր ամանորեայ անդրորը:

Ողջունում եմ Հայաստանի ոստիկանութեան, ազգային անվտանգութեան ծառայութեան, արտակարգ իրավիճակների, արդարադատութեան նախարարութեան այն ծառայողներին, ովքեր ամանորեայ այս րոպէներին իրենց ծառայական պարտականութիւններն են կատարում՝ ապահովելով մեր ժողովրդի անվտանգութիւնը:

Ողջունում եմ մեր այն բուժաշխատողներին, էներգետիկայի, հեռահաղորդակցութեան, տրանսպորտի ոլորտի այն աշխատողներին, եւ ընդհանրապէս բոլոր այն մարդկանց, ովքեր Ամանորը դիմաւորում են աշխատանքային պարտականութիւնները կատարելիս:


Եւ ի վերջոյ ողջունում եմ Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներին, մեր բոլոր հայրենակիցներին՝ Հայաստանում, Արցախում եւ սփիւռքում:

Սիրում եմ բոլորիդ, հպարտանում եմ բոլորովդ եւ խոնարհում եմ բոլորիդ առաջ:

Ժպտացեք իրար, սիրելի՛ հայրենակիցներ, որովհետեւ Նոր տարին, ահա, եկաւ:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Եւ ուրեմն՝ կեցցէ՛ Ազատութիւնը, կեցցէ՛ Հայաստանի Հանրապետութիւնը, կեցցէ՛նք մենք եւ մեր երեխաները, որ ապրում ենք եւ ապրելու ենք Ազատ եւ Երջանիկ Հայաստանում:



**Ս. Գ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ  
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԻՐ ԲՈԼՈՐ  
ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒՆ,  
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՒ ԻՐ ՉՈՅԳ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱՒԻ  
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ**



**ՄԱՍԻՍ - 2019**

# Առաջնորդ Սրբազան Հոր Սուրբ Ծննդեան Պատգամը Յիսուսի Ծնունդը՝ Հրաւեր Նոր Խոստումի



Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ: Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի:

Աստուծոյ առաջնորդութեամբ մարդկութեան առջեւ կը բացուի Նոր Տարին, որը կը նուիրագործուի Յիսուս Քրիստոսի Ծննդեամբ: Նորին խորհուրդը ընդհանրապէս դժուար պիտի ըլլար ըմբռնել, եթէ երբէք Աստուած չներգործէր աշխարհի կեանքին մէջ, մարդկանց հոգիներէն ներս: Ժամանակը, կեանքն ու տեղը կարելի չէ նորին պրիսմակէն տեսնել առանց Քրիստոսի մարդեղութեան խորհուրդին: Եւ այս սոսկ մտածում մը չէ կամ մտածումի մը արդիւնք, այլ եւ՝ ապրուած հաւատքի արտայայտութիւն: Քանզի ամէն անգամ, երբ տօնախմբենք Սուրբ Ծնունդը, ներքին անբացատրելի հոգեւոր զգացումներով կը լեցուի մեր էութիւնը եւ ինքնըստիներեան անձնատուր կ'ըլլանք Աստուծոյ եւ մեր ուրախութիւն կ'ըլլայ անչափելի:

Յիսուսի Ծնունդը մարդկութիւնը կը տօնախմբէ գիտակից հաւատքով: Քաջ կ'ըմբռնենք այն ճշմարտութիւնը, որ Աստուածորդին՝ Յիսուս մանուկը մեզի կը բերէ Աստուծոյ սէրը, խոնարհութեան պատգամը, խաղաղութեան շունչը, կեանքին մէջ նոր կեանք մը բանալու խորհուրդը եւ տակաւին բազում դասեր, որոնց մէջ էականը կը մնայ այն, որ մարդն ստեղծուած ըլլալով Աստուծոյ պատկերին համաձայն՝ իր մէջ ունի նաեւ ստեղծագործելու ոգին ու ուժը:

Յիսուսի Ծնունդը՝ աստուածային այն անկրկնելի հրաշքն է, որ մեր մէջ ծնունդ կու տայ նոր մարդուն: Սբ. Ծննդեան տօնը, հետեւաբար, դադար մը կը հաստատէ մեր կեանքին մէջ, որպէսզի ունենանք անդրադարձումի ու քննութեան պահը եւ ապա մեր կեանքի ճանապարհը պայմանաւորուի Աստուծոյ կամքին համաձայն:

Յիսուսի Ծնունդը դժուար է բացատրել բառերով, այն պէտք է ապրիլ, զգալ եւ մանաւանդ հաղորդակից ըլլալ անոր խորհուրդին: Եւ ի գուր չէ, որ յաճախ ժողովրդական բացատրութիւնն ու խօսքը կ'ըսէ հետեւեալը, թէ պէտք է մանուկի մը պէս հրճուիլ եւ ուրախանալ Յիսուսի Ծնունդին ի տես, քանզի մանուկի մը սիրտը մաքուր է ինչպէս սպիտակ ծիւնը: Յիսուսի Սբ. Ծննդեան տօնը կու գայ իմաստաւորելու այդ մանուկին կեանքի խոստումն ու յանձնառութիւնը, որպէսզի ան ըլլայ օրինակելի: Եւ ինչո՞ւ նոյնպիսի խոստում ու յանձնառութիւն չկատարենք չափահասներս, որուն այնքան պէտք ունինք, որպէսզի մեր էութեանը մէջ արմատաւորենք ներքին հոգեւոր հարստութիւնը եւ խաղաղութիւնը: Այս ամանորին Քրիստոսի Ծնունդով վերստին մանկանալու հրաշքին ակնդէտ կը սպասենք:

Թող մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուսի հրաշալի Ծնունդը մեր էութեան մէջ խորացնէ հաւատքի քաջութիւնը՝ որպէսզի նոր խոստումներով լեցնենք մեր կեանքը: Յիսուսի կեանքը դարձաւ ծառայութեան ճանապարհը մարդկութեան կեանքին մէջ: Ուրեմն մենք եւս կատարենք նոյնը՝ մէկզմէկու ծառայութեամբ: Անոր երկրաւոր կեանքը լուսաւորեց աշխարհը այնպիսի պատգամներով, որոնք ցայսօր փարոսի պէս կը լուսաւորեն մեր կեանքին խորայատակ ծալքերը: Եւ գուցէ Քրիստոսով մեզի հաղորդուած կեանքի դասերէն մեծագոյնը կը մնայ ներողամտութիւնը: Եթէ մարդը կ'ուզէ ինքզինքն ազատել գերութենէ, ապա պիտի կարողանայ ներողամտութեամբ ապրիլ, որպէսզի ճշմարտապէս ապրի քրիստոնէայի կեանքով:

Յիսուսի Սբ. Ծնունդը ողջ մարդկութեան կեանքը կ'առաջնորդէ նոր կեանքի, որպէսզի մարդիկ սթափումի պահ մը ունենան եւ կեանքը ապրին ոչ թէ իրենց կամքին համաձայն, այլ եւ՝ Աստուծոյ: Այս կեանք պատգամները մեզի կու գան Քրիստոսի վարդապետութենէն եւ Սուրբ Աւետարաններէն:

Յիսուսի Սբ. Ծնունդը նոր կեանքի պատգամը կը յղէ նաեւ մեր ազգի զաւակաց, որպէսզի կեանքն ապրինք հաւատքով Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը իւրացնելով մեր մէջ, որպէսզի օրհնութիւն բերենք մեր Հայրենիքին ու Սբ. Եկեղեցւոյն: Յիսուսի Սբ. Ծնունդը տօնախմբել հայ քրիստոնէային համար կը նշանակէ նորոգեալ հա-

## Ս. Ծննդեան Սքանչելի Խորհուրդը

«Խորհուրդ մեծ է սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի»

Որչա՞փ հրաշափառ եւ սքանչելի է Ս. Ծնունդի Խորհուրդը, որ աւելի քան 20 դարերու ընդմէջէն լուսաշող արեւի մը պէս կը բացուի կեանքի հոգեւոր ու տազնապնդումն մէջ՝ մոլորուն ու յուսաբեկ մարդկութեան աչքերուն առջեւ:

Աստուած մարդանալով Յիսուս Քրիստոսի մէջ՝ բնակութիւն հաստատեց այս մեղաւոր աշխարհին վրայ ու յայտնեց ինքզինքն համայն մարդկութեան, որպէս զի ազատագրէ զանոնք մեղքին գերեզարդ կապանքներէն եւ ազատութեան նոր հորիզոններ բանայանոց կեանքին առջեւ:



Մեծ է այս խորհուրդը, նա՛եւ սքանչելի, որ Անբաւելին կը բաւարարուէր խանձարուրով, ու Անսահմանը կը դարձայ սահմանաւոր, որպէս զի մեղքով սահմանաւորուած մարդոց անսահման կեանք մը շնորհէր:

Յիրաւի, Բեթլեհեմի ծնող Մանուկը, մարդացեալ Աստուածորդին էր, որ աշխարհ եկաւ մեղաւոր մարդը Աստուծոյ հետ հաշտեցնել: Ան թողուց երկնային փառքը, որպէս զի մարդոց հոգիներու փրկութիւնը ապահովէ: Ան աղքատացաւ, որպէս զի հարստացնէ հոգեպէս սնանկացած մարդկութիւնը:

Ան տիեզերքի Թագաւորը ըլլալով հանդերձ՝ ծնաւ աննշան մտուրի մը մէջ: Աստուածային ճակատագիրը իր ձեռքին մէջ բռնած՝ Ան աշխարհ եկաւ, որպէս զի մարդ արարածը իր մեղսալի վիճակէն բարձրացնէ եւ Աստուծոյ փառքին մասնակից դարձնէ:

Ան յայտնուեցաւ մեզի իբրեւ աղքատ ու տնազուրկ մանուկ մը, որպէս զի փնտռենք զինք տնազուրկ մանուկներու մէջ:

Ան եկաւ իբրեւ լոյսն աշխարհի, լուսաւորելու մարդոց սրտերուն խաւար խորշերը ու մթագնաց հոգիները, որպէս զի անոնք «լուսոյ որդիներ» ըլլան ու լոյսի մէջ քալեն:

Ան եկաւ որպէս «խաղաղութեան Իշխան» որպէս զի մարդոց սրտերէն փարատէ ամէն վախ ու կասկած եւ զիրենք դարձնէ իր սիրոյ եւ խաղաղութեան դրօշակիրները:

Ան բերաւ մեզի աստուածային սէր, խաղաղութիւն եւ հաշտութիւն, որպէս զի մենք ալ կարենանք բաժնեկցիլ իր երկնառաք պարգէւները բոլոր մարդոց հետ:

Ան եկաւ մեզի որպէս երկնային «Կենաց Հաց», որպէս զի հոգեպէս երբեք չանօթենանք:

Ան եկաւ մեզի որպէս լոյսի եւ յոյսի փարոս մեր փոթորկայոյզ կեանքին մէջ, որպէս զի իր բերած լոյսը ճառագայթէ մեր կեանքերուն վրայ եւ դարձնէ մեզ լուսոյ արփանեակներ:

Ան եկաւ մեզի որպէս Աստուծոյ Մեծագոյն Պարգեւը, որպէս զի մեր սրտերը Բեթլեհեմի գոմին նման օթեւան դարձնենք իրեն եւ մեր կեանքերը ընծայենք որպէս գերագոյն նուէր:

Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ.

Ձեզի, մեզի մեծ աւետիս:

**Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան  
Գործադիր Տնօրէն՝  
Հայ Սւետարանական Համաշխարհային Խորհուրդի**

ւատքով սիրելի Հայրենիքն ու Սբ. Էջմիածինը, նորոգեալ յանձնառութիւններով իմաստաւորել մեր աստուածատուր կեանքը: Եւ երանելի է այն հայ քրիստոնէան, ով իր հաւատքը կ'ապրի գործնապէս եւ Յիսուսի Ծնունդը կը տօնախմբէ որպէս հրաւերը՝ նոր կեանքի:

Յիսուսի Սբ. Ծննդեան խորհուրդով ապրինք կեանքը: Յիսուսի Ծնունդը՝ Աստուածորդու երկինքէն երկիր խոնարհումն է մարդկութեան կեանքին մէջ, որպէսզի Անոր հետ բարձրանանք առ Աստուած: Եւ եթէ մարդկութիւնը ունենայ իր մէջ Աստուծոյ աչքին խոնարհ կեանք մը ապրելու ձգտումն ու տեսիլքը, ապա այն ժամանակ ողջ աշխարհը կ'ապրի նոր կեանքը մը ի Քրիստոս:

Ուրախ սրտով կը յայտարարենք Ծնունդն Աստուածորդու, որպէսզի Աստուած նորոգէ մեր հոգին եւ մանուկ Յիսուսի հետ նոր կեանքին ծնունդը ապրինք նաեւ մենք:

Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ:

Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի:

**Յովնան Արք. Տէրտերեան  
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի  
Արեւմտեան Թեմի**



# Անցնող Տարուայ Հայաստանեան Գլխաւոր Իրադարձութիւնները

## Արցախեան Ազգային-Ազատագրական Շարժման 30-ամեակը



Փետրուարի 13-ին, Ստեփանակերտի վերածննդի հրապարակին վրայ նշուեցաւ Արցախեան ազգային-ազատագրական շարժման 30-ամեակը: Այս առթիւ տեղի ունեցած բազմահազարանոց հանրահաւաքի ժամանակ իր ունեցած իր ելոյթին մէջ, Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան յայտարարեց որ, հակառակորդը պէտք է իմանայ՝ մեզի հետ ուժի լեզուով խօսելը դատապարտուած է ձախողման:

« 1988 թուականը բեկումնային եղաւ հայ ժողովրդի պատմութեան մէջ: Երեք տասնամեակ առաջ այս օրերին համայն հայութիւնը համախմբուեց, դարձաւ մի բռունցք՝ ողջ աշխարհին ազդարարելով սփական բնօրրանում ազատ ու անվտանգ ապրելու համար մաքառելու իր պատրաստակամութեան մասին: Համաժողովրդական այս պոռթկումը մարտահրաւէր էր բռնատիրութեանը, հալածանքներին, մարդու իրաւունքների խախտումներին, բոլոր այն արհաւիրքներին, որոնց միջով անցել է մեր ժողովուրդը իր բազմադարեայ պատմութեան ընթացքում: Եւ այս շարժման պսակը դարձաւ հայոց անկախ պետականութեան վերականգնումը», իր խօսքին մէջ ըսաւ Բակո Սահակեան:

## Հոլանտայի Խորհրդարանը Գանջցաւ Հայոց Ցեղասպանութիւնը



Փետրուարի 22-ին Հոլանտայի խորհրդարանը ձայներու բացարձակ մեծամասնութեամբ ընդունեց երկրի համախոհական կառավարութեան մաս կազմող Քրիստոնէական Միութիւն կուսակցութեան անդամ Ճոյել Ֆորտեւինտի ներկայացուցած Հայոց Ցեղասպանութեան երկու բանաձեւերը: Առաջին բանաձեւով կը վերահաստատուէր Հոլանտայի կողմէ 2004-

ին Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու մասին որոշումը, իսկ երկրորդով կը պարտադրուէր կառավարութեան՝ նախարարի մակարդակով հինգ տարին մէկ անգամ Ապրիլ 24-ին այցելել եւ յարգանքի տուրք մատուցել Ծիծեռնակաբերդի մէջ:

Հայաստան ողջունեց Հոլանտայի Խորհրդարանի որոշումը, իսկ Թուրքիա խստօրէն դատապարտած է զայն:

## Արմէն Սարգսեանը Ընտրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ



Մարտին, 90 կողմ 10-ը դէմ ձայներու յարաբերակցութեամբ Հայաստանի խորհրդարանը Հանրապետութեան 4-րդ նախագահ ընտրեց Մեծ Բրիտանիոյ մէջ Հայաստանի դեսպան Արմէն Սարգսեանը:

Հայաստանի 3-րդ Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Հայաստանի նախագահը ընտրուեցաւ ոչ թէ ժողովուրդի, այլ խորհրդարանի կողմէ:

Քուէարկութեան արդիւնքներու հրապարակումէն ետք Հայաստանի 4-րդ նախագահ ընտրուած Արմէն Սարգսեանը կարճ ելոյթ մը ունեցաւ՝ խոստանալով իր ողջ եռանդն ու փորձառութիւնը ներդնել Հայաստանի ժողովուրդին ծառայելու համար:

« Ուզում եմ շնորհակալութիւն յայտնել բոլոր կողմ քուէարկողներին եւ բոլոր դէմ քուէարկողներին: Ինչ վերաբերում է ինձ, ապա իմ երկար տարիների գիտելիքը, երկար տարիների փորձառութիւնը եւ ողջ եռանդը կը ներդնեմ Հայաստանի Հանրապետութեան նախագահի պարտականութիւնները լիովին կատարելու եւ լիովին ծառայելու Հայաստանի Հանրապետութեանը, հանրապետութեան քաղաքացիներին եւ մեր ողջ ժողովրդին: Իհարկէ ակնկալում եմ ձեր աջակցութիւնը եւ մասնակցութիւնը, ինչպէս նաեւ մեր բոլոր քաղաքացիների աջակցութիւնը եւ մասնակցութիւնը մեր ապագայ կարեւոր յաղթանակներին մեր Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիների եւ մեր ժողովրդին՝ Արցախ, Հայաստան եւ Սփիւռք», - ըսաւ Արմէն Սարգսեանը:

## Սերժ Սարգսեան Ընտրուեցաւ Վարչապետ Եւ Ծայր Առաւ Ժողովրդային Յեղափոխութիւնը

Ապրիլ 17-ին, Հայաստանի Ազգային ժողովը յատուկ նիստի ընթացքին, 76 կողմ, 17 դէմ ձայներու յարաբերակցութեամբ, իշխող Հանրապետական կուսակցութեան ղեկավար Սերժ Սարգսեանը ընտրուեց Հայաստանի վարչապետ:

Սարգսեանի վարչապետութեան կողմ քուէարկեցին, ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ «Ծառուկեան» դաշինքի մէկ մասը:

Սերժ Սարգսեանի իշխանավարման շարունակման դէմ պայքարը գլխաւորող՝ ԱԺ «Եւք» խմբակցութեան ղեկավար, «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեան, իր



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹ ՊՐՈՆՈՉԵԱՆ  
Custom Probiotics, Inc.**



# Անցնող Տարուայ Հայաստանեան Գլխաւոր Իրադարձութիւնները



աջակիցներուն կոչ ըրած էր շրջափակել խորհրդարանի շէնքը եւ այդպիսով տապալել նիստը, սակայն երբ ընդդիմադիրներու ջանքերը տապալեցան, Փաշինեանը յայտարարեց «Ժողովրդական ոչ-բռնի թաւշեայ յեղափոխութեան» մեկնարկի մասին:

Փաշինեանի գլխաւորութեամբ հազարաւոր ցուցարարներ արգելափակեցին Գլխաւոր դատախազութեան, կեդրոնական դրամատան, վճռաբեկ դատարանի շէնքերը եւ կառավարութեան նոր մասնաշէնքը, ընդդիմադիրները Երեւանի տարբեր հատուածներու մէջ քաղաքացիական անհնազանդութեան բողոքներ իրականացուցին՝ փակելով փողոցները:

Երեկոյեան ժողովուրդը տասնեակ հազարներով լեցուցած էր Երեւանի կեդրոնական՝ Հանրապետութեան հրապարակը:

Հսկայ բազմութեան առջեւ ելոյթ ունենալով Փաշինեան յայտարարեց, թէ յաջորդ օրը պէտք է շարունակել շրջափակել գերատեսչական շէնքերը, փողոցները, մայրուղիները:

## Սերժ Սարգսեանի Հրաժարականը եւ Հանրապետականներու Իշխանութեան Տապալումը



Շաբաթ մը տեւող ցոյցերէ ետք, Ապրիլ 23-ին վարչապետ Սերժ Սարգսեան հրաժարեցաւ իր պաշտօնէն:

Ժողովրդային անհնազանդութեան խաղաղ յեղափոխութիւնը արձանագրեց իր առաջին շօշափելի նուաճումը:

Առաջին փոխ վարչապետ կարէն Կարապետեան փորձեց վերցնել իշխանութիւնը, սակայն Փաշինեան կոչ ըրաւ ժողովուրդին՝ դարձեալ իջնելու հրապարակ եւ շարունակելու պայքարը, հասնելու համար իսկական իշխանափոխութեան:

Ապրիլ 25-ին, «Հանրապետութեան» հրապարակին վրայ տեղի ունեցած բազմահազարանոց հանրահաւաքի ընթացքին Նիկոլ Փաշինեան գուշացուց կարէն Կարապետեանին որ իր լիազօրութիւններէն դուրս չգայ, քանի որ կառավարութիւնը հրաժարած կառավարութիւն է:

«Այս շէնքում նստած ոմանք մտածում էին, թէ ժողովուրդն այնքան զարմացած ու բաւարարուած է Սերժ Սարգսեանի հրաժարականով, որ տօնախմբութիւնից յետոյ մոռացել է, թէ ինչի համար են հաւաքուել: Ան կոչ ըրաւ Ազգային ժողովի պատգամաւորներուն՝ ժողովուրդի թեկնածուն ընտրել վարչապետ:

## Ժողովրդային Յեղափոխութիւնը Յաղթանակեց Նիկոլ Փաշինեան Ընտրուեցաւ Հայաստանի Վարչապետ



Մայիսի 8-ին, մօտ երեք շաբաթ առաջ Հայաստանի մէջ ծայր առած ժողովրդային յեղափոխութիւնը՝ առաջնորդութեամբ Ազգային ժողովի պատգամաւոր Նիկոլ Փաշինեանին հասաւ յաղթանակի:

Խորհրդարանէն ներս մեծամասնութիւն ունեցող Հանրապետական կուսակցութիւնը տեղի տալով ժողովրդային ընդվզումի ալիքին առջեւ, ապահովեց Փաշինեանի ընտրութիւնը վարչապետի պաշտօնին՝ 59 կողմ եւ 42 դէմ քուէներով:

Նախքան ընտրութիւնը, Նիկոլ Փաշինեան ելոյթ ունենալով ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց իր հետապնդելիք ներքին ու արտաքին քաղաքականութիւնը:

«ՀՀ քաղաքացին եւ հայ ժողովուրդն այնքան ոգեւորուած է, որքան Շուշիի ազատագրման օրերին, ՀՀ քաղաքացին եւ հայ ժողովուրդն առաւել քան վստահութիւն ունի դէպի ՀՀ ապագան, քան երբեւէ: ՀՀ-ում իրականացուած ոչ բռնի ու թաւշեայ յեղափոխութիւնը զարմացրել ու հիացրել է ամբողջ աշխարհին, Հայաստանի եւ հայ ժողովրդի վարկանիշն այսօր աւելի բարձր է, քան երբեւէ»:

Նիկոլ Փաշինեան Ազգային ժողովի ամպիոնէն ողջունեց Արցախի բնակչութեան՝ յայտարարելով, որ Հայաստանի մէջ ոչ բռնի ու թաւշեայ, սիրոյ յեղափոխութիւնը պիտի ամրապնդէ Արցախ անվտանգութիւնը:

Ամբողջ օրուայ ընթացքին բազմահազար ժողովուրդ հաւաքուած էր Հանրապետութեան հրապարակին վրայ եւ հսկայ պաստառներու վրայ կը հետեւէին Ազգային ժողովի նիստին:

Քուէարկութեան արդիւնքները տակաւին չհրապարակուած, Հանրապետութեան հրապարակի վրայ կը տիրէր տօնական մթնոլորտ ու տասնեակ շամփանեաններ կը բացուէին:

Համաժողովրդական շարժման առաջնորդի վարչապետ ընտրուելը հրապարակի վրայ ընդունուեցաւ մեծ ցնծութեամբ:

Աւելի ուշ հրապարակ ժամանեց նորընտիր վարչապետը: Ան ժողովուրդի ըսաւ. «Այսօր դուք յաղթեցիք: Եւ այլեւս երբեք չենք մէկը չի համարձակուի որեւէ ոտնձգութեան ընդդէմ՝ ձեր այդ յաղթանակի: Յաղթանակը այն չէ,



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՀԱՄԲԻԿ ԵՒ ՆԱՅՐԱ  
ՍԱՐԱՖԵԱՆ**



# Անցնող Տարուայ Հայաստանեան Գլխաւոր Իրադարձութիւնները

որ ես ընտրուել եմ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ: Յաղթանակը այն է, որ դուք էք որոշել, թէ ով է լինի Հայաստանի Հանրապետութեան վարչապետ», յայտարարեց Նիկոլ Փաշինեան:

## Նշուեցաւ Մայիսեան Հերոսամարտերուն Եւ Առաջին Հանրապետութեան 100-Ամեակը



Երկուշաբթի, Մայիս 28-ին նշուեցան Մայիսեան Հերոսամարտերուն եւ Հայաստանի առաջին հանրապետութեան 100-ամեակները:

Առաւօտեան Սարգարապատի Յուշահամալիրէն ներս տեղի ունեցած յատուկ արարողութեան ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան, Նախագահ Արմէն Սարգսեան, Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեան եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ծաղկեպսակներ գետեղեցին Սարգարապատի ճակատամարտի հերոսներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողին մօտ, յարգանքի տուրք մատուցելով անոնց յիշատակին:

Պատուոյ նուագախմբի հանդիսաւոր քայլերթը ընդունելէ յետոյ, վարչապետ Նիկոլ Փաշինեան պաշտպանութեան նախարարի ընկերակցութեամբ կատարեց զինատեսակներու ստուգում: Յուշահամալիրէն ներս ցուցադրուած էին հայկական զինուած ուժերու ինչպէս արդիական, այնպէս ալ թանգարանային նմուշի զինատեսակները, որոնք մասնակցած էին Սարգարապատի հերոսամարտին:

Վարչապետը արտասանեց կուռ ճառ մը, անդրադառնալով օրուայ խորհուրդին եւ Հայաստանի ներկային ու ապագային:

«Մենք յաղթեցինք, որովհետեւ մեր հուծիւնը անապասներ քշուիլը եւ կոտորուիլը չէ: Հայ ժողովուրդը 400 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով իր յոյսը դրաւ ինքն իր վրայ, ոչ թէ ուրիշին»: Ան դիտել տուաւ, որ այս տարի եւս հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ ինքն իր կարողութեան վրայ դրաւ իր յոյսը եւ հաւատաց իր ուժերուն:

Այնուհետեւ տեղի ունեցաւ զինուորական շքերթ՝ «Յաղթանակներու Դար» նշանաբանին տակ:

Շքերթը կը ներկայացնէր հայկական պետականութեան հարիւր տարուայ երեք ռազմական յաղթանակները: Պատմական տարազներով տողանցեցին Սարգարապատի ճակատամարտը, Համաշխարհային երկրորդ պատերազմը եւ Արցախեան ազատամարտը խորհրդանշող զինուորական գունդերը:

Երեկոյեան, Հանրապետութեան հրապարակին վրայ, տասնեակ հազարաւոր ժողովուրդի ներկայութեան տեղի ունեցաւ համերգ, որուն յաջորդեց հրավառութիւն:

## Ձերբակալուեցաւ Երկրապահներու Նախագահ՝ Ջօրավար Մանուէլ Գրիգորեանը

Յունիս 17-ին, Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) հրապարակեց Ազգային Ժողովի պատգամաւոր եւ Երկրապահ Կամաւորականներու Միութեան նախագահ՝ զօրավար Մանուէլ Գրիգորեանի էջմիածինի տան եւ պահեստարաններու խուզարկութեան



տեսագրութիւնները, որոնք եկան ցնցելու Հայաստանը: Գրիգորեանի պատկանող կալուածներէն յայտնաբերուեցան մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք, ինչպէս նաեւ բանակի զինուորներուն համար նախատեսուած այլեւայլ ապրանքներ, որոնք որպէս օժանդակութիւն ուղարկուած էին 2016-ի ապրիլեան քառօրեայ պատերազմի օրերուն: Յունիս 19-ին, Հայաստանի Ազգային Ժողովը փակ քուէարկութեամբ համաձայնութիւն տուաւ Մանուէլ Գրիգորեանի ձերբակալութեան վերաբերեալ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանի միջնորդութեան:

## Հայաստանի Նախկին Նախագահ՝ Ռոպերթ Քոչարեան Անուեցաւ Կալանքի Տակ



Տասը տարի Հայաստանը ղեկավարած Ռոպերթ Քոչարեան Յուլիս 27-ին կալանաւորուեցաւ 2008-ի Մարտի 1-ի արիւնալի իրադարձութիւններու ժամանակ սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքով:

Մարտի 1-ի գործը քննող մարմնը յայտարարեց, որ կալանաւորումը անհրաժեշտ է քննութեան ընթացքին Քոչարեանի պատշաճ վարքագիծը ապահովելու համար:

Քոչարեանի փաստաբաններ կալանաւորելու որոշման դէմ բողոք ներկայացուցին վերաքննիչ դատարան: Դատարանը բաւարարեց այդ դիմումը եւ ան ազատ արձակուեցաւ մի քանի օր ետք:

Դեկտեմբեր 7-ին դատարանը այլ որոշում կայացուց եւ Քոչարեան դարձեալ ձերբակալուեցաւ եւ այժմ կը գտնուի կալանքի տակ:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՍԻՆԱՆ ՍԻՆԱՆԵԱՆ  
SINANIAN DEVELOPMENT**



ՄԱՍԻՍ - 2019

# Անցնող Տարուայ Հայաստանեան Գլխաւոր Իրադարձութիւնները

Անկեւա Մերքըլի Պատմական Այցելութիւնը Հայաստան



Հայաստան-Գերմանիա միջպետական յարաբերութիւններու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Գերմանիոյ վարչապետ Անկեւա Մերքըլին ժամանեց Երեւան: «Չուարթնոց» օդակայանին մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէ դիմաւորուելէ ետք, Մերքըլի ուղեւորուեցաւ Ծիծեռնակաբերդի Յուշահամալիր, ուր յարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Վարչապետ Փաշինեանի հետ տեղի ունեցած հանդիպումի աւարտին կայացած համատեղ մամուլի ասուլիսի ընթացքին, Անկեւա Մերքըլ ըսաւ. «Ուրախ եմ գտնուիլ Երկրի մը մէջ, որն ունի բարձր մշակութային եւ պատմական ավանդուածներ, բայց նաեւ բաց է ապագայի առջեւ»:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան խնդրին՝ Եւրոպացի բարձրաստիճան պաշտօնեան նշեց. «Գերմանիոյ Պոլսոյ թափախումը կողմէն ընդունուած բանաձեւի ոգիով ես եղած եմ Ծիծեռնակաբերդ, իմ յարգանքի տուրքը մատուցած եմ: Այն ինձի համար իրաւաբանական խնդիր չէ»:

Կողմերու միջեւ կայացած բանակցութիւններու աւարտի երկու երկիրներու վարչապետները եւ նախագահ Արմէն Սարգսեան այցելեցին Հիւսիսային պողոտայ, ուր ոտքով քալեցին, անակնկալի բերելով գոն գտնուող ժողովուրդին եւ լուսանկարուեցան անոնց հետ:

Պողոտայի ճաշարաններէն մէկուն մէջ ընթրելէ ետք, Հայաստանի ղեկավարները հրաժեշտ տուին Գերմանիոյ վարչապետ Անկեւա Մերքըլին:

## Հրապարակուեցաւ ԱԱԾ-ի եւ ՅՔԾ-ի Ղեկավարներու Գաղտնալսուած Հեռաձայնային Խօսակցութիւնը

Սեպտեմբեր 11-ին, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԾԾ) տնօրէն Արթուր Վանեցեան հաստատեց, որ համացանցի մէջ տարածուած ձայնագրութեան մէջ կը գրուեցին ինքն ու Յատուկ Քննչական Ծառայութեան (ՅՔԾ) պետ Սասուն Խաչատրեանը:

«Ուզում եմ ասել, որ հաշուի առնելով այն հանգամանքը, որ դատարանի առջեւ կանգնած էին Հայաստանի երկրորդ նախագահն ու Հաւաքական Անվտանգութեան Պաշտօնազորի (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղար Եւրի Խաչատրուովը, պէտք էր 100 տոկոս համոզուած լինել, որ այդ գործում որեւէ թերացում եւ թերութիւն չկայ: Նման քննարկում իմ եւ պարոն Խաչատրեանի միջեւ կայացել է, եւ եղել է զուտ իրաւաբանական քննարկում», - ըսաւ Վանեցեան:

Գաղտնալսուած ձայնագրութեան մէջ մասնաւորապէս կը խօսուէր այն մասին, թէ ինչպէս դատարաններէն մէկը զանգած է ԱԱԾ տնօրէնին եւ հարցուցած, թէ պաշտօնաթող նախագահ Ռոպերթ Քոչարեանի խափանման միջոցի ընտրութեան հարցով ի՞նչ որոշում ահրաժեշտ է կայացնել:

Գաղտնալսուած կազմակերպողներու ինքնութիւնը կարելի չէզաւ մինչեւ օրս բացայայտել:

Նախագահական Պալատի Դռները Բացուեցան Ժողովուրդի Առջեւ



Սեպտեմբեր 21-ին քաղաքացիներու առջեւ բացուեցան Բաղրամեան 26-ի հասցէին գտնուող նախագահական պալատի Դռները

Անկախութեան 27-րդ Ամեակին Առթիւ իր ելոյթի աւարտին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց՝ թէ այս պահին սկսած Բաղրամեան 26-ի դռները բաց պիտի ըլլան հանրութեան համար:

«Դռները կը բացուին ի նշան այն բանի, որ ՀՀ իշխանութիւնը այլեւս երբեք մեկուսացած ու կտրուած չի լինելու ժողովուրդից: ՀՀ քաղաքացիները այսուհետեւ ազատօրէն կարող են մուտք գործել վարչապետի, յետագայում՝ նախագահի նստավայրի տարածք, եւ այն օգտագործել որպէս զբօսավայր, որպէս ժամանցի վայր» ըսաւ Փաշինեան:

Այս խօսքերէն ետք Պալատի դռները բացուեցան ու ժողովուրդը մուտք գործեց պատերէն ներս:

## Փաշինեան Յայտարարեց Իր Ստալուտ Հրաժարականի Մասին

Հոկտեմբեր 2-ին, Հայաստանի մէջ դարձեալ տիրեց լեղափոխական մթնոլորտ: Հնրապետական կուսակցութիւնը, որուն միացած էին կառավարութեան մաս կազմող Բարգաւաճ Հայաստան եւ ՀՅԴ կուսակցութիւնները, անակնկալօրէն օրէնքի նախագիծ ներկայացուցին եւ ապա 67 ձայնով քուէարկեցին՝ խոչընդոտներ դնելով Խորհրդարանի լուծարման եւ արտահերթ ընտրութիւններ կայացնելու վարչապետ Փաշինեան ծրագիրներուն առջեւ:

Հակալեղափոխական ուժերու այս քայլին հակադարձելով Փաշինեան կոչ ըրաւ ժողովուրդին համախմբուելու Երեւանի Բաղրամեան պողոտային վրայ՝ Ազգային ժողովի շէնքին մօտ: Կարճ ժամանակուայ ընթացքին տասնեակ հազարաւոր ժողովուրդ ընդառաջեցին վարչապետի կոչին:

Փաշինեան ելոյթ ունենալով ներկայացուց ստեղծուած կացութիւնը: «Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը եւ անոր աջակցած ուժերը, որոնք այդ նախագիծը դրած են շրջանառութեան մէջ քուէարկած, Հայաստանի մէջ պաշտօնապէս յայտարարած հակալեղափոխութիւն»,- ըսաւ վարչապետը եւ հրապարակայնօտէն կառավարութենէն հեռացուց Բարգաւաճ Հայաստանի եւ ՀՅԴ-ի պատկանող նախարարները:

Նիկոլ Փաշինեան իր ելոյթի ընթացքին յայտարարեց, որ մօտ օրէն հրաժարական պիտի տայ եւ Դեկտեմբերին տեղի պիտի ունենան խորհրդարանական նոր ընտրութիւններ:

## Աշխարհահռչակ Երգիչ Շարլ Ագնաւուրի Մահը

Հոկտեմբեր 1-ին, 94 տարեկանին մահացաւ ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Շարլ Ագնաւուրը:

«Սա իսկապէս սգալի օր է մեր պատմութեան համար», ըսաւ ՀՀ



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՍԻՄՈՆ ԵՒ ԺԱՆԷԹ  
ՍԻՄԻԹԵԱՆ**



# Անցնող Տարուայ Հայաստանեան Գլխաւոր Իրադարձութիւնները



Վարըչապետ Նիկոլ Փաշինեան, իմանալով Ազնաւուրի մահուան լուրը: Փաշինեան մեկնեցաւ Ֆրանսայ, ուր մասնակցեցաւ Ազնաւուրի հոգեհանգիստի եւ յուղարկաւորութեան արարողութիւններուն:

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը Ֆրանսահայ մեծանուն շանտնիէ մահուան կապակցութեամբ յայտարարեց, - «Ֆրանսացի, որ հոգեպէս անքակտելիորէն կապուած էր իր հայկական արմատներուն, որուն կը ճանչնար ողջ աշխարհը»:

Հայաստանի տարբեր անկիւններուն վրայ, յատկապէս՝ Երեւանի մէջ ամէնուր հնչեցին Շարլ Ազնաւուրի երգերը:

Մարդիկ հաւաքուեցան Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանատան եւ Շարլ Ազնաւուրի անուան հրապարակին վրայ՝ ծաղիկներ խոնարհելով են եւ մոմեր վառեցին:

Երեւանի Սէջ Տեղի Ունեցաւ Ֆրանքոֆոնիայի 17-րդ Գագաթնաժողովը



Հոկտեմբեր 11-12-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Ֆրանքոֆոնիայի միջազգային կազմակերպութեան 17-րդ գագաթնաժողովը:

Այս առթիւ Հայաստան ժամանեցին Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն, Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւսո եւ 84 այլ երկիրներու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

«Հայաստանի համար մեծ պատիւ է, որ այս գագաթնաժողովի կազմակերպումը վստահուել է Հայաստանին», գագաթնաժողովի բացման ժամանակ յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Համաժողովի մասնակիցները ընդունեցին Երեւանեան Հռչակագիր մը: Ժողովին ներկայ եղող ղեկավարները այցելեցին Ծիծեռնակաբերդի Եղեռնի Յուշարձան, ինչպէս նաեւ ներկայ եղան Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցած համերգին:

## Տեղի Ունեցան Խորհրդարանական Արտահերթ Ընտրութիւններ

ՆԱԽԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ		
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	58 432 4.69%
	«ԲԱՆԱԲԱՅՈՒ ՈՐՈՇՈՒՄ» ԱՌՅԵԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	8 420 0.68%
	«ՀԱՅ ԵՆԿՈՒՓՈՒԱԿԱՆ ԴԱՇԼԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	48 466 3.89%
	ԻՄ ՔԱՅԻԸ ԴԱՇԻՆՔ	877 601 70.43%
	«ԼՈՒՍԱԼՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	79 426 6.37%
	«ԲՐԻՍՏՈՒՆԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱՆՆՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6 400 0.51%
	«ԱԳՐԱՕՒՆ ԱՌԱՋՆՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4 104 0.33%
	ՄԵՆՔ ԴԱՇԻՆՔ	25 001 2.01%
	«ՕՐԻՆԱՅ ԵՐԿՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12 310 0.99%
	«ՍԱՆԱ ՇՈՒՐ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	22 664 1.82%
	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	103 300 8.23%
ԻՄԵԱԿԱՆ ՏԵՂԵՄԱՆԵՐ ՔԱՆԱԿԸ		1 035 957

Դեկտեմբեր 9-ին, Հայաստանի մէջ տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն տպաւորիչ յաղթանակ արձանագրեց ժողովրդային յեղափոխութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Իմ Քայլը» դաշինքը՝ ստանալով ժողովուրդի աւելի քան 70 տոկոսի ձայները:

Հինգ տոկոսի նուազագոյն պատնէշը յաղթահարելով նոր խորհրդարան մուտք գործեցին նաեւ երկու այլ ուժեր՝ գործարար Գագիկ Ծառուկեանի գլխաւորած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը (ԲՀԿ) եւ Էմմոն Մարուքեանի գլխաւորած «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնը (ԼՀԿ):

«Իմ քայլը» դաշինքը ստացաւ 884 հազար 456 ձայն կամ ձայներու 70,43%-ը, ԲՀԿ՝ 103 հազար 824 ձայն կամ ձայներու 8,27%-ը, ԼՀԿ՝ 80 հազար 024 ձայն կամ ձայներու 6,37 %-ը:

Նախկին իշխող հանրապետական կուսակցութիւնը (ՀՀԿ) չկարողացաւ անցնիլ անցողիկ շեմը՝ ստանալով միայն 59 հազար 059 ձայն, կամ ձայներու 4,70 %-ը:

Մասնակից միւս քաղաքական ուժերը ստացան աւելի նուազ թիւով ձայներ:

Այս տուեալներու հիման վրայ նոր Ազգային ժողովը կ'ունենայ 132 պատգամաւոր՝ 88 պատգամաւոր «Իմ քայլը» դաշինքէն, 26՝ ԲՀԿ կուսակցութենէն, ու 18 պատգամաւոր՝ «Լուսաւոր Հայաստան» կուսակցութենէն:

## «The Economist» Թերթը Հայաստանը Հռչակեց Տարուայ Երկիր

Դեկտեմբեր 18-ին Միջազգային «The Economist» թերթը Հայաստանն հռչակեց 2018 տարուայ երկիրը: Այս առթիւ թերթի խմբագրութիւնը կը բացատրէր, որ «Տարուայ Երկիր» ամենամեայ անուանումը կը տրուի ոչ թէ ամենաազդեցիկ ազգին, ոչ թէ ամենահարուստ երկրին, ոչ թէ ամենահամեղ ուտելիքներ ունեցող երկրին, այլ այն երկրին որ դէպի լաւ փոխառած է վերջին 12 ամիսներու ընթացքին:

«Այս մէկը բարդ ընտրութիւն է: Տարուայ ընթացքին լաւ աշխատանքը ապագայ յաջողութեան երաշխիք չէ: Անցեալ տարուայ յաղթող Ֆրանսան խրուած է անկարգութիւններու մէջ: Միանմարը, որ յաղթած էր 2015-ին, արիւնոտ ետքայլ կ'ապրի»:

Հայաստանի ընտրութեան վրայ կեդրոնանալով թերթը կը գրէր, - «Նախագահ Սերժ Սարգսեանը փորձեց երկարաձգել իր ժամկէտը՝ դառնալով վարչապետ: Փողոցները բռնկեցան՝ որպէս բողոքի նշան:

«Նիկոլ Փաշինեանը՝ խարիզմատիկ եւ մօրուքաւոր նախկին լրագրողը եւ պատգամաւորը, օրինականօրէն եկաւ իշխանութեան՝ կողուպցիայի եւ անկարողութեան դէմ բողոքի այլիքի վրայ:

«Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ հարցերը չեն լուծուած եւ կրնայ դարձաւ բռնկիլ: Այնուհանդերձ, յաճախ վատ կառավարուող ազգը անհանգիստ տարածաշրջանին մէջ ունի ժողովրդավարութեան եւ նորացման հնարաւորութիւններ: Այդ պատճառով Հայաստանը մեր տարուայ երկիրն է», - կը գրէին թերթի խմբագիրները:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏՕՔԹ. ՉԱԻՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ**  
**ARSLANIAN MEDICAL CLINIC**



# Նիկոլը ժողովրդի «Ծառան» է, եւ Ոչ Թէ «Սուրբ Ամենափրկիչը»

## ՍՈՒՐԵՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Հայաստանում ժողովրդական շարժման հուժեղ ալիքով կայացած իշխանափոխութեան էֆորիկ շրջանը մօտենում է աւարտին: Բայց էջֆորիայի դոզան ումանց մօտ այնքան է բարձր եղել, որ առայսօր անձին, այսինքն Նիկոլ Փաշինեանի հանդէպ ֆետիշացնող միջնորդութեան են ձեւաւորում, գրեթէ փառաբանելու աստիճան:

Եկէք իրերին նայենք իրատեսօրէն:

Աժ արտահերթ ընտրութիւնները, որը անցաւ բաց, անկաշառ եւ անկաշահող միջնորդութեամբ ձեւաւորեց մի խորհրդարան, որտեղ աւելի քան բացարձակ մեծամասնութիւն է կազմում թաւաշահ յեղափոխութիւն իրականացնող ուժը՝ «Իմ քայլը» դաշինքի տեսքով, եւ Նիկոլ Փաշինեանի ղեկավարութեամբ:

Նախկին իշխանութեան կոպտագոյն սխալների եւ չարաչահումների արդիւնքում, հանրութեան մէջ գոյացել էր դժգոհութեան, հիասթափութեան թանձր միջնորդութեամբ: Քրեաօլիգարխիկ այնպիսի մի միջնորդութեամբ էր ձեւաւորուել, որ կոռուպցիոն բազմաթիւ սխեմաներով, սերտաճել էր իշխանութեան հետ, եւ նրա անբաժան մասն էր դարձել:

Խորհրդարանի ընդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը իր 7% տրոհումով դաշինքով, բաց ձեռքերով, անզէն եւ անարիւն յեղափոխութեամբ իրականացրեց իշխանափոխութիւն: Այսօր ընտրողների 70% վստահութեան բուռն ասանալով, ձեւաւորում է նոր խորհրդարան: Այս իշխանափոխութեան ֆենոմենալ կողմը կայանում է հէնց նրանում, որ դա իրականացաւ առանց զէնքի, զոհի եւ արեան: Այս երեւոյթը ընդանուր առմամբ միասնականացնող եւ համադրող էներգիայ ունէր իր մէջ:

Հանապազօրեայ հացի խնդիր ունեցող մարդը, «ընտրող» օբյեկտի կարգավիճակից վերափոխուելու եւ ստացաւ նոր կարգավիճակ, որը կոչուում է քաղաքացի: Այս քաղաքացին նաեւ ընկալեց այն ճշմարտութիւնը, որ իր մէկ «Ձայնը» շատ աւելի թանկ է քան մի պարկ ալիւրը կամ 10 հազար դրամը:

Ահա պետականաշինութեան գլխաւոր հանգրուանը, այսինքն օրէնսդիր մարմնի ձեւաւորումը,

ազատ, անկաշահող ընտրութիւններով աւարտուել: Սակայն խոցելի երեւոյթը մնաց չյաղթահարուած: Դա այն էր որ բոլորը բացի մեծամասնութիւն ունեցող «Հանրապետականից» գոռում-գոչում էին թէ պէտք է փոխել ընտրութիւնների մասին օրէնսգիրքը: Հին օրէնսգիրքը պահպանեց իր իշխանութիւնը նոր խորհրդարան ձեւաւորելիս: Այսպիսով թաղային հեղինակութիւնը դարձեալ մնաց հիմնական գործօն: Եղաւ այն, ինչ որ եղաւ:

Օրէնսդիր մարմնում բացակայում է ընդիմադիր այն «փշոտ ուժը», որ գաղափարական եւ ռազմավարական մօտեցումներով խորհրդարանին կենսունակ դիմադրող կը հաղորդէր, եւ հակակշռող գործօնի լիարժէք դերակատարութիւնը կ'ստանձնէր:

Սակայն չունենալով կամ չտեսնելով այն քաղաքական ուժը, որը կարող է հակակշռել միաբեւեռ խորհրդարանական մեծամասնութեանը չի կարող պատճառ լինել, որ այդ աստիճանի վաճառու բարձագնէլ եւ սեւ քարոզչութիւն իրականացնէր:

Այստեղ հարկ եմ համարում մէջ բերել մի հատուած քաղաքական մեկնաբան Յակոբ Բաղալեանի վերլուծական յօդուածից: «Մտածելու բան ունի ոչ թէ հասարակութիւնը, թէ որտեղից գտնի հակակշիռ, այլ այն ուժերը, որոնք այժմ հասարակութեանը փորձում են ահաբեկել հակակշռի բացակայութեան վտանգաւոր հեռանկարով, թիւրիմացաբար կարծելով, թէ իրենք աւելի են հասկանում իրավիճակից ու այդ խնդրից, քան հանրութիւնը իր բազմաշերտ հաւաքականութեամբ եւ ամբողջութեամբ»:

Հարկաւոր է թօթափել բոլոր վնասակար եւ ոչնչացնող բարդոյթները, եւ անցնել գործի, միայն թոյն արձակելն ու ցեխարձակելը գործ չի համարուում:

Ձեռնարկուած քայլերի բովանդակութիւնը պէտք է յազեցած լինի հայրենակերտմանը պիտանի դէտալներով:

Մեծ անելիք ունեն արտախորհրդարանական ուժերը: Հնարաւորինս օրինաւոր միջոցներով խորհրդարանականներին թոյլ չտալ մտնել իրենց պատեանի մէջ, եւ կտրուել դրսի իրական կեանքից, այնպէս ինչպէս նախքին վարչակարգն էր կտրուել, ժողովրդից: Ստեղծել այն գործիքակազմը, որով

արտախորհրդարանական ուժերը դիմադրի եւ ռազիոնալ ներգործութիւն ունենան յանձնաժողովների եւ ենթալանձնաժողովների վրայ, այսինքն ջանքերը մէկտեղել եւ առաջարկել անցկացնել այնպիսի բարեփոխումների ծրագիր, որ խորհրդարանից դուրս գտնուող ուժերը հնարաւորինս ընդգրկուեն խորհրդարանի յանձնաժողովների եւ ենթալանձնաժողովների աշխատանքին: Նշուած մասնակցութիւնը կարող է լինել ինչպէս խորհրդակցական ձայնի իրաւունքով, այնպէս էլ վճռական ձայնի իրաւունքով: Այս գործընթացը կ'ապահովի ժողովրդական աւանդոյթների արմատաւորմանը օրէնսդրական դաշտում, եւ վերահսկող գործիքակազմի արդիականացմանը գործադիրի դաշտում:

Հարկ է նշել եւս մի ցաւալի նկատաւում: Յեղափոխութեան թաւիշը չի թեթեւացնում ժառանգուած բեռի ծանրութիւնը:

Արտաքին հակառակ պարտքերը, ռազմավարական նշանակութեամբ գրեթէ բոլոր օբյեկտների ծախուած եւ փոշիացուած վիճակը, երկրի ընդերքի անխնայ թաւանը, կոռուպցիոն սխեմաներով հիւսուած թէ ներքին եւ թէ արտաքին ցանցերը մեծ հաշուով խարխիւ են հայոց պետականութեան հիմքերը:

Մեծ ու բազմաթիւ մարտահրաւէրների առաջ ենք կանգնած:

Որքան էլ լաւատեսօրէն նայենք ներկայիս երիտասարդ կառավարիչներին, եւ յոյս ունենանք, որ իշխանական աթոռների գայթակղութեանը չեն տրուի, հայրենակերտումի վեհ գաղափարը թոյլ չի տալ յետին պլան մղել օրէնքը եւ օրինապահութիւնը: Միեւնոյնն է, չի երեւում գայթակղութիւններից գերծ պահելու ապահովագրող մարմինը, որքան էլ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ձայնաւարները վնասելու աստիճան գոռայ ու գոչի թէ «չի մնալու ոչ մի կաշառակեր չինովիկ», չկա այդ երաշխաւորող եւ ապահովագրող մարմինը: Բայց որպէսզի հարցը չհասցնենք «կրկոսի մահուան», ասենք թէ հնարաւոր է, բայց ինչպէ՞ս, ու՞ր է հայեցակարգը, ու՞ր է ճանապարհային քարտէզը, որ երեւայ, թէ այս սահմանադրութիւնը երբ է փոխուելու, իշխանութեան թեւերի միջեւ լիագորութիւնների ինչ-

պիսի բաժանում է լինելու, որ հաւասարակշռող եւ հսկող մեխանիզմը գործի անխափան:

Կուսակցութիւնների եւ ընտրութիւնների մասին օրէնքը վերջապէս ե՞րբ է արդիականացուելու: Կատարուած թաւանը, կողոպուտը, ամէնուրեք արձանագրուում է որպէս փաստ, բայց ինչպէս վարուել, որ ոճուագործի պատիժը լինի աղեկուատ եւ թաւանուածը վերադարձնելիս տնտեսութեան զարգացումը ոչ թէ խոչընդոտուի այլ աւելի մեծ թափ հաղորդի նրան:

Մի շատ կարեւոր, բայց չաւակնոտ ծրագիր եւս գոյութիւն ունի, դայ այն է, որ արտաքին թելադրող ուժերի եւ ներսի խամածիկ իշխանաւորների համար հակացուցուած է: Դա անգամ ներկայիս կառավարութեան օրակարգում չի յայտնուելու մինչեւ մի հզօր ընդիմադիր գաղափարական քաղաքական ուժ, օրէնսդրական դաշտում ներգործութիւն չունենայ: Որքան է այդ համարձակ ու յաւակնոտ ծրագիրը: Դա պետական հսկողութիւնն է ազգային հարստութիւն համարող ընդերքի նկատմամբ, ինչպէս նաեւ ռազմավարական նշանակութեամբ օբյեկտների վրայ: վերահսկողութիւնը պէտք է լինի ժամանակակից օրէնքներով եւ գործիքակազմով: Առանձին դէպքերում դա կարող է լինել իշխող փաթեթի ազգայնացման շնորհիւ: այսինքն «հանքը» շահագործող իր ներդրումներով հանդերձ, հանդէս է գալիս որպէս օպերատոր-բաժնետէր, ոչ թէ ինչ որ աննշան հարկեր վճարելով, ընդերքը հարստահարող դրամատէր:

Պատերազմական վիճակում գտնուող Հայաստանի համար, վերջը նշուածի մասին օրէնսդրական դաշտի ապահովումը կենսական անրաժեշտութիւն ունի: Դա մասնաւոր սեփականութեան իրաւունքի հիմնադրոյթների հետ հակադրութիւն չի ունենայ:

Վայրի լիբերալիզմի ջատագովները, կարող է անմիջապէս վաճառուել բարձրացնեն, թէ խախտում է սեփականութեան այսինչ-այնինչ իրաւունքները: Սակայն պէտք է մատնացոյց անել, զարգացած երկրների օրինակները, Անգլիան (լեյբորիստների ժամանակ) Չինաստանը (ներկայիս





**ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՍԱՀԱԿ ԵՒ ԱՆԱՀԻՏ  
ԳԹՖԵԱՆ**

**«Տօնական օրերուն առիթով սրտանց կը  
շնորհաւորենք «Մասիս»-ի ողջ շրջանակը,  
մաղթելով ամեն բարիք եւ յաջողուիք  
Թող «Մասիս» շաբաթաթերթը Մասիս լերան  
նման միշտ կանգուն մնայ»**



ՄԱՍԻՍ - 2019


# Յո՞ Երթաս Յ.Յ. Յիմնադրամ

## ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Գաղափարի մը էականութիւնը արդեօ՞ք բաւարար է ոտքի հանելու ժողովուրդը եւ գաջն մղելու անոր իրագործման: Ի՞նչ դեր կը խաղայ առաջնորդ մը, հրաշալի գաղափարի մը տարածման կամ սահմանափակման մէջ եւ ժողովուրդի կողմէ արդեօ՞ք բաւարար փաստ է գաղափարի մը ժողովրդականացման:

Հայաստան Համահայկական Հիմնադրամի թեյեթոն 2008-ը այսօրինակ հարցումներով խճողեց մեր միտքը ու մեզ մղեց այս յօդուածի սրտբաց խորհրդածութեանց: Անմիջապէս, ու անգամի մը համար եւս հաստատենք բերանացի թէ գրաւոր արտայայտած մեր համոզումը, որ ՀՀ Հիմնադրամը այն համահայկական միակ կառույցն է, որ կոչուած է համախմբելու մեր ողջ ժողովուրդի ուժերը, յօգուտ մեր հայրենի հողի բարգաւաճման ու մեր նորանկախ պետականութեան ամրակայման: Ո՛չ մէկ տարակուսանք ՀՀ Հիմնադրամի գաղափարի այս էականութեան հանդէպ: Ուրեմն ինչո՞ւ այս հրաշալի գաղափարը մինչեւ հիմա չկրցաւ զգենուլ հրաշալի մարմին/կառույց: Այստեղ կու գայ առաջնորդի դերակատարութեան կարեւորութիւնը: Ինչպէս 6 տարիներ առաջ Մասիսի էջերէն կը գրէինք, մենք կը մնանք համոզուած որ մեր ժողովուրդը պատրաստ է ընդունալու ամէն մարտահրաւէրի, երբ իր մէջ կը հաստատուի հաւատք այդ տուեալ նպատակին շուրջ: Իսկ այդ հաւատքի հաստատումը պէտք է գայ առաջնորդներէ, որոնք իրենց անձնական օրինակով պայքարի առաջին գծին վրայ պէտք է ըլլան: Այդպիսի առաջնորդներու զգալի պակասն է որ կը դանդաղեցնէ մեր ազգին յառաջխաղացքը: ՀՀ Հիմնադրամը այդ յառաջխաղացքին եւ նոյն ատեն մեր դանդաղ ընթացքին կենդանի պատկերն է: ՀՀ Հիմնադրամը ցոլացումն է այն իրավիճակին, որ կը տիրէ Հայաստանէն ներս: Աւելի վերնախաւային, քան՝ ժողովրդային: Աւելի մակերեսային, քան՝ խորքային: Աւելի ցուցակային, քան՝ իրական, աւելի հաշուեքօղ, քան հաշուետու: Հաստատելու համար մեր խօսքի իրաւացիութիւնը, թուենք մի քանի օրինակներ:

-Երբ Սփիւռքի նախարար Հրանուշ Ծակոբեանը գովեստով կ'արտայայտուէր թաղային հեղինակութիւններու ՀՀ Հիմնադրամ



մին խոստացած \$30 միլիոնի մասին, հարց տուինք իրեն թէ ո՞ւր մնաց ժողովրդային մասնակցութիւնը: Ո՞ւր մնաց Հիմնադրամի առաքելութիւնն ու երազանքը: Առաքելութիւն՝ աշխարհասփիւռ հայութեան միաւորելն ու նրանց ջանքերը եւ հնարաւորութիւնները համադրելն է՝ ուղղուած մեր երկրի վերակառուցմանն ու ամրապնդմանը: Երազանք՝ որի մասնիկ կարող է լինել իւրաքանչիւր հայ: Ինչո՞ւ համար տարեց-տարի ժողովրդային մասնակցութիւնը աճ չարձանագրեր, այլ կը նուազի: Կասկած չկայ, որ ժողովրդային լայն մասնակցութիւնը աւելի հիմնական պահանջարկ է, քան մեծահարուստներու մասնակցութիւնը, որոնք չեն կրնար ամէն տարի մեծագումար նուիրատուութիւններ կատարել, հետեւաբար, հիմնադրամը ամէն գնով պէտք է աշխատի շահիլ ժողովուրդի համակարանքը, վստահութիւնն ու հաւատը ծառայելով նոյնինքն ժողովուրդին: Օրինակի համար, հիմնադրամը կրնար առաջնային դեր կատարել Աղէտի Գօտիի վերակառուցման համար, աշխարհասփիւռ հայութիւնը միաւորելով այդ վսեմ նպատակին շուրջ եւ անոնց հնարաւորութիւնները ուղղելով անոր իրագործման: Հիմնադրամը կրնար ժողովուրդին բացատրել, որ հայրենի երկրի ամրապնդումը, Երեւանի կեդրոնին մէջ վեր խոյացող էլիտար շէնքերէն աւելի, Աղէտի Գօտիի հազարաւոր տուժած ընտանիքներուն մարդավայել երդիք մը հայթայթելուն մէջ կը կայանայ: Երեւանի կեդրոնի մայթերուն սալայատակումը աւելի՞ առաջնահերթ է, քան տոմիկներու մէջ խճճուած ընտանիքներուն տուներ ապահովելը: Այդ ընտանիքներու գաւակները չե՞ն որ կը կազմեն

կորիզը հայրենիքի ապահովութեան երաշխիք հայկական բանակին: Ինչո՞ւ լուսանցքի վրայ յայտնուեցան անոնք: Ինչո՞ւ համար աղէտէն 20 տարիներ անց, տակաւին 6000-7000 ընտանիքներ գուրկ են մարդավայել տուներէ: Ինչո՞ւ չկրցանք աշխարհասփիւռ հայութիւնը համոզել, որ հայրենիքի ամրապնդումը այդ ընտանիքներու ամրապնդումէն կը սկսկի: Ինչո՞ւ համար 200 միլիոն դրամ կը մսխուի տօնելու աղէտի քանամեակը: Որովհետեւ նախընտրեցինք էլիտարը եւ ոչ թէ ժողովրդայինը:

-Ժողովուրդի հաւատն ու վստահութիւնը շահելու համար, հիմնադրամը պէտք է հաշուետու ըլլայ նոյն ժողովուրդին հանդէպ: Չի բաւեր տարին մէկ անգամ թեյեթոն կազմակերպել, այլ պարբերաբար ժողովուրդը տեղեակ պէտք է պահուի այն աշխատանքներուն մասին, որոնք կ'իրագործուին անոնց նուիրատուութիւններով: Առաջին հերթին հիմնադրամի կայքէջը պէտք է միշտ այժմէականացուի թարմ տեղեկատուութիւններով: Առնենք օրինակի համար Հիւսիս-Հարաւ Որնաշար Ճանապարհի պարագան: 1999ին սկսած այս ծրագիրը պէտք է իր աւարտին հասնէր 2004ին: 2008ի աւարտին ենք եւ տակաւին չէ աւարտած: Երբ կը բանանք հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի կայքէջը, այս մասին վերջին թարմացումը եղած է Սեպտեմբեր 2006ին, որու տուեալներով, 170 քլմ. ճանապարհին միայն 62.3 քլմ. աւարտած է: Երբ կը բանանք Հիմնադրամի Հայաստանի կայքէջը, վիճակը աւելի վատ է, միայն 46.9 քլմ. աւարտած է: Հետաքրքիր է, որ երբ կ'երթանք աւարտած եւ ընթացիկ ծրագրերու բաժինները, երկուքն ալ նոյն 46.9 քլմ.ի մանրամասները ցոյց կուտան: Երբ կապուեցանք Հիմնադրամի այստեղի գրասենեակին հետ եւ տեղեկութիւններ ուզեցինք, մեզի պատասխանեցին որ միայն 7 քլմ. մնացած է որ ճանապարհը հասնի իր աւարտին: Երբ հարց տուինք թէ ինչո՞ւ կայքէջը թարմացուած չէ, պատասխանը մարդուժի պակասն էր: Սակայն այս թերացումին պատասխանատուն ոչ թէ Հիմնադրամի այս տեղի գրասենեակն է, այլ Հայաստանի Գործադիր վարչութեան գրասենեակը, որ կը բաղկանայ 33 վճարովի պաշտօնեաներէ, որոնք չեն գիտեր ինչո՞ւ կը զլանան աշխարհասփիւռ հայութեան հայթայթել հիմնադր-

րամի աշխատանքներուն մասին թարմ եւ ստույգ տեղեկութիւններ: Այստեղ կ'արժէ նշել Հիմնադրամի Ֆրանսայի գրասենեակի օրինակը, որ տարին մի քանի հաղորդագրութիւններով իր նուիրատուները տեղեակ կը պահէ կատարուած աշխատանքներուն մասին, այդպիսով ապահովելով անոնց մշտական մասնակցութիւնը: Արեւմտեան Ամերիկայի պարագային, միայն 1999-2002 թուականներուն է, որ քարոզչական յանձնախումբի կողմէ 3 անգամ տեղեկագրութիւն լոյս տեսաւ նուիրատուներու անուանացանկով եւ աւարտած ու ընթացիկ ծրագիրներու տեղեկութիւններու 1999ին թովմաս Եթեթեանի գլխաւորած քարոզչական յանձնախումբին անդամ էինք մենք, իսկ 2000-2002 տարիներուն, յանձնախումբի գլխաւորողը:

-ՀՀ Հիմնադրամը պէտք է վերագտնայ իր արմատներուն եւ խոստափի ցուցականութիւններէ, որոնք ոչ միայն կը վնասեն իր գաղափարաբանութեան, այլ նաեւ իր պիւտճէին:

Տարեց-տարի թեյեթոններու վրայ ծախսուող գումարներու աճը, կարծէք կապուած է այս ցուցականութեան աճին հետ: 6-7 տարիներ առաջ \$300,000-ի սահմաններուն շուրջ արժող թեյեթոնը, կը լսենք թէ հասած ու նոյնիսկ անցած է 1,000,000ի սահմանը: Այսպիսի գործունէութիւն վանողական է ու չի նպաստէր հիմնադրամի ժողովրդականացման: Ինչո՞ւ համար տարեց-տարի պիտի աճի Հայաստանէն Լոս Անճելըս հրաւիրուող արուեստագէտներու քանակը եւ ծախսը, երբ անոնք կարող են իրենց մասնակցութիւնը բերել իրենց տեսահոլովակներով: Ի՞նչ տարբերութիւն ունի Լիբանանի կամ Պրագիլի մէջ թեյեթոնը դիտող հայրերին համար, արուեստագէտին սթուտիայի մէջ գտնուիլը կամ ոչ: Որքանո՞վ նպատակայարմար է որ այս ամերէն հաւաքուած գումարին մեծամասնութիւնը յատկացուի ծախսերը փակելու: Աւելի օգտակար չէ՞ թեյեթոնի ծախսերու նուազեցումով աւելցնել հիմնադրամի ծրագիրներուն յատկացուող գումարը: Ինչո՞ւ համար աւելի քան 13 երկիրներու մէջ գոյութիւն ունեցող հիմնադրամի գրասենեակները իրենց տեղական համայնքներու հիմնադրամի ի նպաստ գործունէութեանց մասին ամփոփ տեղագրու-



ՄԱՍԻՍ - 2019

Նախագահ Արմեն Սարգսեանի Հարցազրոյցը Հնդկական WION TV Լրատուական Հեռուստատանի «Ամենամեծ Մարտահրաւերն է՝ Չդաւաճանել Յեղափոխութեանը»

Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեանը հնդկական WION TV (World Is One News) լրատուական հեռուստատանի տուած հարցազրոյցում խօսել է հայ-հնդկական փոխգործակցութեան օրակարգի, համաշխարհային մարտահրաւերների, կլոպալ տնտեսական զարգացման միտումների, աշխարհաքաղաքական վերափոխումների եւ այլ հարցերի շուրջ:



- Սկսեմք Ձեր երկրում տեղի ունեցող իրադարձութիւններից: Երկրում արտաւերք ընտրութիւններ են: Ապրիլին Ձեր հարցազրոյցներից մէկում Դուք ասացիք, որ վերջապէս Հայաստանում ժողովրդավարական փոփոխութիւններ են սկսուում, սակայն մենք ականատես եղանք քաղաքական ցնցումների ու փոփոխութիւնների: Դուք հաւատացա՞՞ծ էք, որ Հայաստանը ճիշտ ուղու վրայ է:

- Ես իսկապէս հաւատացած եմ, որ Հայաստանն ընթանում է ճիշտ ճանապարհով: Փոփոխութիւններն սկսուեցին Ապրիլից, զարմանալիօրէն դրանք սկսուեցին իմ երդմնակալութիւնից յետոյ: Պէտք է գիտակցել, որ այն ամէնը, ինչ տեղի է ունենում մեր երկրում, պարզապէս յեղափոխութիւնն է, որը ստացաւ «թաւշեայ» անուանումը: Այն մեծ նուաճում էր մեր ժողովրդի համար: Եւ ես յատուկ ուզում եմ ընդգծել, որ սա նուաճում էր ժողովրդի, ոչ միայն անհատների համար, թէպէտ անհատները, ինչպէս ընդդիմութեան առաջնորդ պարոն Փաշինեանը, իրենց անձնական ներդրումն են ունեցել այս յեղափոխութեան խաղաղ իրականացման գործում: Ցանկանում եմ նաեւ յաւելել, որ նախկին նախագահ ու վարչապետ Սերժ Սարգսեանը եւս մեծ դերակատարում ունեցաւ, քանի որ նախընտրեց հեռանալ պաշտօնից, այլ ոչ թէ հակադրուել, ինչը խնդրալարոյց

իրավիճակ կառաջացնէր: Եւ ես շատ ուրախ եմ, որ մենք ունեցանք այդ իրական, հայկական ոճի յեղափոխութիւնը, որի մասին խօսեցին ողջ աշխարհում՝ ընդգծելով, որ մենք յեղափոխութիւն իրականացրինք առանց արիւնահեղութեան:

Մենք այժմ մէկ այլ «յեղափոխութեան» առաջ ենք կանգնած: Հայաստանը 27 տարի շարունակ եղել է նախագահական հանրապետութիւն: Նախկինում, երբ մենք խորհրդային Միութեան մաս էինք, այն բացարձակ նախագահական էր, քանի որ կառավարումն ուղղահայեաց էր՝ վերելից ներքեւ: Այժմ մենք փոխում ենք համակարգը՝ անցնելով խորհրդարանական հանրապետութեան: Ի հարկէ, այդ փոփոխութիւնները հեշտ չեն տրուում:

Պէտք է ասեմ, որ սա նաեւ սերնդային յեղափոխութիւն է: Երիտասարդ սակերով ես նկատի ունեմ ոչ թէ տարիքով երիտասարդ, այլ ոքով, նոր մտածելակերպով, նոր աշխարհահայեացքով ու կառավարման մեթոդներով: Կարող ես լինել 60-70 տարեկան, սակայն միեւնոյն ժամանակ լինել երիտասարդ: Ուստի ինձ համար երիտասարդ լինելը պայմանաւորուած է ոչ թէ տարիների քանակով, այլ կեանքի նկատմամբ մօտեցմամբ:

- Դուք ասացիք, որ սա յեղափոխութիւն էր առանց արիւնահեղութեան: Ունե՞ք ասացի՞նք, որ սա ինչ-որ առումով ներշնչուած էր Կանտիի

սատյագրահայից, որը եւս քաղաքացիական անհնազանդութեան ոչ բռնի շարժում էր: Ձուգահեռներ տեսնու՞մ էք:

- Չգիտեմ՝ որքանով են Մահաթմա Կանտիի գաղափարներն ու հնդկական փորձն ազդեցութիւն ունեցել փողոցում գտնուող անհատների, երիտասարդների վրայ, սակայն դրանք, անկասկած, մեծ ազդեցութիւն են ունեցել ինձ վրայ: Երբ ինձ առաջարկեցին դառնալ նախագահ, ինձ համար դա կեանքի արմատական փոփոխութիւն էր նշանակում: Դա կենսակերպի լիակատար փոփոխութիւն էր: Սակայն, միւս կողմից էլ գիտակցում ես, որ արժէ այս ամէնը գոհաբերել, քանի որ ծառայում ես քո երկրին:

Շարժումը շատ արագ հասաւ առճակատման բարձր մակարդակի, անհրաժեշտ դարձաւ հանրապետութեան նախագահի միջամտութիւնը: Եւ հենց այստեղ էր, որ Կանտիի կերպարը ոգեշնչեց ինձ: Ես գնացի Հանրապետութեան հրապարակ, որտեղ տեղի ունեցաւ ընդդիմութեան ղեկավարների, ապագայ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ իմ առաջին հանդիպումը՝ շրջապատուած հազարաւոր մարդկանցով: Անգամ այն դէպքում, երբ շարժումն ուղղուած էր իշխանութիւնների դէմ, ինձ՝ որպէս նախագահի շատ լաւ դիմաւորեցին: Մարդիկ սատարում էին, նրանք սկզբում ապշեցին՝ տեսնելով, որ նախագահը քայլում է փողոցով ու գալիս է նրանց ընդառաջ: Ես հանցի փողկապս՝ դառնալու նրանցից մէկը, քանի որ ես միակն էի այդ հազարաւոր մարդկանց մէջ, ով փողկապ մէկը, պէտք էր չտարբերուել նրանցից, անգամ եթէ դու նախագահն էիր: Եւ այժմ, կարծում եմ, մենք կարող ենք հպարտօրէն յայտարարել ողջ աշխարհին, որ հայերը կարող են յեղափոխութիւն իրականացնել առանց արիւնահեղութեան:

Ուստի պատասխանը հետեւեալն է՝ այո, Մահաթմա Կանտիի յստակ ազդեցութիւն է ունեցել իմ մտածելակերպի ու զգացմունքների վրայ:

- Իմ՞չ տեղի ունեցաւ յեղափոխութիւնից յետոյ:

- Շատ մեծ ակնկալիքներ կան, ինչպէս միշտ է լինում յեղափոխութիւններից յետոյ: Կայ մեծ դրական էներգիա: Ամենամեծ մարտահրաւերն է՝ չդաւաճանել յեղափոխութեանը՝ այն առումով, որ չի

կարելի յուսախաբ անել այդ ակնկալիքները:

21-րդ դարում, երբ ամէն ինչ շատ արագ է զարգանում, մարդիկ ակնկալում են, որ տեղի կ'ունենան փոփոխութիւններ: Սակայն նրանք ակնկալում են ոչ թէ մէկ, այլ՝ բազմաթիւ փոփոխութիւններ, ուզում են, որ հասարակութիւնը դառնայ աւելի ազատ, որ լինի ազատութիւն, չլինի կաշառակերութիւն, ինստիտուտները գործեն այնպէս, որ երկիրը զերծ լինի կաշառակերութիւնից, զարգանայ ժողովրդավարութիւնը: Ամենակարեւորը, տնտեսութիւնն աւելի լաւ գործի՝ բարելաւելու մարդկանց կենսամակարդակը: Կարճ ժամանակահատուածում այս ամէնին հասնելն իսկապէս մեծ մարտահրաւեր է լինելու: Եւ ճանապարհներից մէկը կրկին նոյնն է՝ ժողովուրդը: Մարդիկ պէտք է հաւատան, որ իրենք լուծման մաս են կազմում կամ որ հենց իրենք են այդ լուծումը: Ի վերջոյ, մարդիկ ունեն պատրանք, մեծ ակնկալիքներ ղեկավարից կամ կառավարութիւնից՝ մտածելով, որ եթէ իրենք իրականացրել են յեղափոխութիւնը, ապա այժմ նրանց հերթն է: Պատահական չէ, որ 6 ամիս անց նրանք սկսում են հարց տալ, թէ ինչու աւելի լաւ չեն ապրում: Այսինքն, կրկին վերադառնում ենք նոյն պատմութեանը: Հնդկական փորձը ցոյց է տալիս, որ Հնդկաստանում չես կարող փոփոխութիւններ անել առանց հասարակութեանը ներգրաւելու՝ լուծումները թողնելով միայն կառավարութեանը կամ առաջնորդներին: Այստեղ առանցքային է այդ գործընթացներում ներգրաւուումն ու մասնակցութիւնը:

- Ձեր երկրում ընտրութիւններ են: Որպէս մէկը, ով գալիս է Հնդկաստանից, ես գարմացայ, քանի որ իմ երկրում, երբ երկիրը կամ քաղաքն ընտրական շրջանում է, ամենուրեք նախընտրական եռուզեռ է, պաստառներ են, հանրահաւաքներ: Ես կարողում էի, որ քարոզարշաւի մեծ մասն իրականացուել է «Ֆէյսպուք»-ի ուղիղ եթերների միջոցով: Ես չտեսայ առաջնորդների շատ պաստառներ: Եւ եթէ շատ թերթեր կարդացած չլինէի, չէի ասի, որ նախընտրական շրջան է, 24 ժամ անց մարդիկ գնալու են քուէարկութեան: Երբ ողջ աշխարհը խօսում է մարդկանց վրայ կեղծ լուրերի, սոցիալական ցանցերի ազդեցութեան մասին, կա՞յ մտահոգու-



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԴՈԿՏ. ՍԻԼՎԱ ԳԱՐԱՅԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2019

# «Ամենամեծ Մարտահրաւերն է՝ Չդաւաճանել Յեղափոխութեանը»

Շարունակուած էջ 9-էն

թիւն, որ գուցէ կան արտաքին ուժեր, որոնք ձեր վերահսկողութիւնից դուրս են:

- Ես կը փորձեմ պատասխանել երեք կէտով: Նախ, յարգանքներս Հնդկաստանին, քանի որ այդ երկրում աշխարհի ամենամեծ ժողովրդավարութիւններէ մէկն է: Այդ երկրում աւելի քան մէկ միլիարդ մարդ հաւատում է ժողովրդավարութեանը, եւ կարելոր չէ՝ նրանք հարուստ են, թէ՛ աղքատ: Այնտեղ բոլորը հաւատացած են, որ իրենց բուհն կարելոր է: Ողջ հասարակութիւնը, մարդիկ իսկապէս հաւատում են, թէ որքան կարելոր է իրենց մասնակցութիւնը: Սա հէնց այն է, ինչ ես քիչ առաջ ասում էի՝ մեր հասարակութիւնը պէտք է մասնակցի գործընթացներին:

Երկրորդ՝ այսօր Հայաստանում լուրջեան օր է (Խմբ- հարցազրոյցը տեղի է ունեցել Դեկտեմբերի 8-ին խորհրդարանական ընտրութիւններից մէկ օր առաջ), ոչ ոք չպէտք է զբաղուի քարոզչութեամբ: Սա է պատճառներից մէկը, որ քաղաքը լուռ է ու հանգիստ: Այդ օրէնքները կարող են առնչուել նիւթական աշխարհին, սակայն վերտուալ աշխարհն աւելի բարդ է:

Երրորդը՝ այդ յեղափոխութիւնը, որը կարող է քանուանել թաւշեայ կամ հայկական ոճի յեղափոխութիւն, ֆենոմենալ բնույթ ունէր, քանի որ շատ բաներ տեղի էին ունենում վերտուալ տարածութեան մէջ: Մարդիկ իրենց կարծիքն էին յայտնում «Ֆէյսբուք»-ում կամ այլ հարթակներում: Յեղափոխութեան կազմակերպումը եւս արուեստ «Ֆէյսբուք»-ի, նոր տեխնոլոգիաների միջոցով: Հայաստանը բնական պաշարներով հարուստ երկիր չէ, այստեղ մշտապէս տքնաջան աշխատանքն ու սեփական ուղեղն օգտագործելը եղել են այն հիմնական գործիքներն ու առաւելութիւնը, որ մենք ունեցել ենք: Հայերը մշտապէս եղել են շատ աւելի միջազգային: Հայերն ապրել են Մոսկւայում, Կալիֆորնիայում, նրանք ամէնուր են եղել:

- Հայկական սփիւռքը չորս անգամ աւելի մեծ է, քան Ձեր երկրի բնակչութիւնը:

- Այո, եւ այսօր էլ ամէն բան նոյնն է, մենք շարունակում ենք լինել Հնդկաստանում, Մանիլայում, Սինգապուրում, Չինաստանում, Սամարղանդում եւ Բուխարայում, Մանչեսթերում եւ Լիոնում:

նում: Սա մարդկանց բնույթն է: Ես փորձում եմ ասել, որ մենք այն տեսակն ենք, որի համար ջանասէր աշխատանքն ու մտաւոր կապիտալը շատ աւելի կարելոր են, քան ֆիզիկականը: Ուստի, զարմանալի չէ, որ «Ֆէյսբուք»-ը եւ 21-րդ դարի գործիքները Հայաստանում շատ տարածուած են: Այդ տեսանկիւնից մարդկանց ներգրաւումն աւելի հեշտացաւ, սակայն քանի որ վերտուալ աշխարհում շատ օրէնքներ չեն գործում, ուստի առաջանում են շատ մարտահրաւերներ, ինչպիսիք են կեղծ կամ վերահսկող, կառավարող լուրերը, բայց կեանքն այդպիսին է: Սա 21-րդ դարն է:

- Ինչպէ՞ս են ձեր հարեւանները տեսնում այս հաստատակամութիւնը: Կարծու՞մ էք, որ Հայաստանը պէտք է վերածելակերպի իր յարաբերութիւնները հարեւանների հետ:

- Վարչապետի պաշտօնակատարը յայտարարել է, որ մեր արտաքին քաղաքականութեան մէջ փոփոխութիւններ չեն լինելու, ինչը բնական է: Ռուսաստանը Հայաստանի բնական դաշնակիցն է: Այս համագործակցութիւնը չի սկսուել 10 կամ 100 տարի առաջ: Մենք դարեր շարունակ լաւ դաշնակիցներ ենք: Կարծում եմ՝ մենք լինենք կայուն ու լաւ դաշնակիցներ:

- Ինչպէ՞ս էք վերաբերում Ձոն Բոլթոնի այն յայտարարութեանը, թէ իրենք առաջարկում են ամերիկեան զենքեր վաճառել Հայաստանին:

- Դա պարզապէս առաջարկ էր: Վաղը կարող են լինել այլ առաջարկներ եւս: Կարծում եմ, որ պէտք է կառավարութիւնը որոշի, թէ ինչ տեսակի զէնքեր է ուզում գնել: Իրականութիւնն այն է, որ Հայաստանը միակ երկիրն է, որը կարող է լինել եւ արդէն իսկ կամուրջ է Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ: Մենք ե՛ԱՏՄ՝ անդամ ենք, լաւ յարաբերութիւններ ունենք Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի հետ: Մեզ համար դա շատ կարելոր քայլ առաջ էր, քանի որ երբ նայում ենք տեղական՝ հայկական շուկային, 3.5 մլն բնակչութիւն ունեցող երկրի տնտեսութիւնը շատ գրաւիչ չի կարող լինել:

- Անգելա Մերկելը վերջերս յայտարարեց, որ Ռուսաստանն Արեւելեան Եւրոպայում անկայունութիւն է ստեղծում: 2016 թուականին կային զեկոյցներ այն մասին, որ շատ հայեր դժգոհ են, ինչին ի

պատասխան՝ Մոսկուան պատասխանեց, որ իրենք զէնք են վաճառում ինչպէս Ադրբեյջանին, այնպէս էլ Հայաստանին: Սա ինչպէ՞ս է տեղի ունենում:

- Բարդ է այս կամ այն երկրին արգելել տարբեր տնտեսական հետաքրքրութիւններ ունենալ: Եւ սա միայն մեր տարածաշրջանին չէ, որ առնչուում է: Ես հաւատացած եմ, որ կայ լուծում, եւ այդ լուծումը երկխօսութիւնն է, հանդուրժողականութիւնն ու յարգանքն այլ մարդկանց կարծիքի նկատմամբ: Կարծում եմ՝ ներկայում մենք աշխարհում կորցնում ենք մէկս միւսի հետ խօսելու, իրար յարգելու մշակոյթը: Դժբախտաբար, ողջ աշխարհով մէկ ակնատես ենք լինում, որ շատ միջազգային ինստիտուտներ, համաձայնութիւններ կամ վարքագծի կանոններ խախտուում են: Այս տեսանկիւնից, ամէն բան, ինչ տեղի է ունենում մեր տարածաշրջանում՝ լինի դա Սիրիայում, որը Հայաստանից շատ հեռու չէ, Պարսից ծոցում, Ռուսաստանում կամ Ուկրաինայում, մեզ համար մտահոգիչ է:

- Յիշատակեցիք Ուկրաինացի Ռուսաստանը: Ինչ էք կարծում, նրանք պատերազմի շեմի՞ն են, թէ՞ պարզապէս դիրքաւորում է տեղի ունենում:

- Անձամբ ես չուսով եմ, որ ընդհանրապէս պատերազմ չի լինի: Յուսով եմ, որ ի վերջոյ կյալթեն առողջ դատողութիւնն ու տրամաբանութիւնը: Տարբեր առաջնորդների հետ իմ քաղաքական հանդիպումների ժամանակ հէնց սրա մասին եմ փորձում խօսել, բացատրել առողջ դատողութեան օգտագործման կարելորութիւնը: Կայ մի սահման, որից այն կողմ առողջ դատողութիւնն ու տրամաբանութիւնն այլեւս չեն աշխատում, իսկ դրանից յետոյ միայն Աստուած կարող է օգնական լինել ձեզ եւ մեզ:

- Անցեալ տարի մենք նշում էինք Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների 25-ամեակը: Ինչպէ՞ս կնկարագրէք այդ յարաբերութիւնները եւ դրանց ներուժը:

- Մեր երկու երկրների յարաբերութիւնները պատմականօրէն հիասքանչ են: Կարծում եմ՝ մարդիկ չեն գիտակցում, որ մեր պատմութիւնը ոչ թէ մի քանի դարի, այլ մի քանի հազար տարուայ վաղեմութիւն ունի: Հնդկաստան ճանապարհորդելու ընթացքում ես հանդիպեցի մեր առեւտրային, մշա-

կութային, նոյնիսկ լեզուական յարաբերութիւնների բազմաթիւ վկայութիւնների, որոնք իսկապէս շատ խորն են: Հայերէնը իւրապատուկ լեզու է, այն առանձին ճիւղ է հնդեւրոպական լեզուաընտանիքում: Եւ եթէ ուսումնասիրենք ազգերի պատմութիւնը՝ հիմնուած լեզուների վրայ, զարմանալի բացայայտումներ կարող ենք անել: Իմ որդու անունը Վարդան է, որը ձեր լեզուից թարգմանաբար նշանակում է «աստծոյ պարգեւ»: Ես ճիշտ եմ: Ստացում է, որ այդ բառը գալիս է հին հնդկերէնից, եւ Վարդանը միայն իմ որդու անունը չէ: Այն նաեւ ազգային հերոսի եւ սրբի անուն է, ով աւելի քան 1700 տարի առաջ առաջնորդում էր հայկական զօրքերը պարսիկների դէմ պայքարում:

Սարգսյանների ընտանիքը, որից ես սերում եմ, գալիս է Կալիֆորնիայից, այնուհետեւ նրանք տեղափոխուել են Հոնոլոլու, իսկ յետոյ՝ Սինկափուր: Սինկափուրի յայտնի հիւրանոցը հիմնադրուել է Սարգսյանների ընտանիքի կողմից: Այս ամէնը փաստում է, որ մեր յարաբերութիւնները շատ աւելի երկար պատմութիւն ունեն:

Ձեզ խորհուրդ կը տալի այցելել Մատենադարան՝ հնագոյն ձեռագրերի թանգարան-ինստիտուտ, որտեղ դուք կգտնէք հնդկական մշակոյթի հիասքանչ օրինակներ:

Այսօր Հնդկաստանն ու Հայաստանը մի կարելոր արժէք են կիսում: Երկուսն էլ կարելորում են մարդու ուժը: Հնդկաստանը մեծ երկիր է, ունի հսկայական բնական ռեսուրսներ, բայց ձեր ամենամեծ հարստութիւնը մարդիկ են: Նոյնն էլ այստեղ է: Սա 21-րդ դարն է, եւ բնական ռեսուրսներն այսօր իրենց տեղը զիջում են մարդկանց, նորարարութիւններին ու ստեղծարարութեանը:

Մենք շատ բան ենք կիսում, եւ ես կարծում եմ, որ մենք Հնդկաստանի հետ կարող ենք անել շատ աւելին: Սրանք պարզապէս քաղաքական գործչի բառեր չեն: Ես շատ հնդիկ գործարարների եմ ճանաչում, որոնց հետ քննարկել եմ բոլոր հնարաւորութիւնները, որոնցով մենք կարող ենք համագործակցել՝ յատկապէս ՏՏ ոլորտում: Դա մի պարզ պատճառ ունի՝ Հնդկաստանում ՏՏ ոլորտը հսկայական է:

- Ձեր կարծիքը մեր ներկայիս վարչապետ Մոդիի քաղաքականու-

Շար.ը էջ 42









ՄԱՍԻՍ - 2019

# Ժխտողականութիւն. Կամ Ինչպէս Մաքրել Մուսթաֆա Քէմալի «Ցանած» Քաղցկեղը

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Թրքական Սփիւռք. Միջ Թէ Իրականութիւն



Կա՞յ արդեօք թրքական սփիւռք: Թուրքիոյ իշխանութիւնները, որոնք անցնող տաս-տասներկու տարիներուն ընթացք տուած են արտաքին «բազմերանգ» քաղաքականութեան հետամուտ են այդ թեմային յատուկ ուշադրութիւն դարձնելու: Եթէ արագ ակնարկ մը նետենք Թուրքիոյ վերջին շրջանի զարգացումներուն վրայ, ապա յստակ պիտի դառնայ, որ էրտողան եւ իր թիմակիցները մեծ կարեւորութիւն սկսած են տալ երկրէն դուրս գտնուող թուրքերու խնդրին: Խօսքը միայն Չինաստանի ուղուներուն մասին չէ (որոնք դաւանանքով ալ սիւննի-իսլամներ են), այլ օրինակի համար Մոլդովիոյ հարաւը ապրող քաբուզներուն մասին է, որոնք քրիստոնեայ ուղղափառ են, սակայն իրենք զիրենք կը համարեն թուրքեր:



էրտողանի կողմէ առաջ քաշուած այս «ճանաչողական» այցելութիւնները սոսկական, կամ սովորական մակարդակի այցելութիւններ չեն անշուշտ ու չի բացառուիր, որ յառաջիկայ հանգրուանին Անքարա այս առումով մշակէ յատուկ հաշիւակարգ, որուն գլխաւոր նպատակը պիտի ըլլայ ստեղծել, աշխուժացնել եւ գործի լծել «թրքական սփիւռք» հասկացութիւնը: Խօսքը աշխարհագրական դրուածքով գործառույթներ կերտելու մասին չէ անշուշտ, այլ եղած թրքական «ներուժը» կազմակերպելու մասին է: Այստեղ պէտք է անպայման նշել, որ տարիներ առաջ իսլամներու անունով խօսելու էրտողանի մտորումները, կամ այդ թեմային վերաբերեալ անոր «մատուցած» պատգամները քչացած են:

Քչացած են, որովհետեւ յատկապէս սիւննի աշխարհին մէջ էրտողանի հանդէպ առաջուան վերաբերմունքը չկայ: Երեք-չորս տարիներ առաջ էրտողան կը խօսէր իսլամական աշխարհին մէջ կարեւոր ներկայութիւն մը, կարեւոր դերակատարութիւն մը ունենալու մասին, սակայն այսօր կազաչի, Ռիատի, բայց մանաւանդ Քահիրէի մէջ անոր անձին հանդէպ ժխտական մօտեցումներ կան: Այսօրուան պատկերը անշուշտ, որ ունի տարբեր դրդապատճառներ ու աւելի քան հասկնալի է, որ սիւննի աշխարհն առհասարակ անմարսելի կը համարէ, որ իսլամի անունով խօսողը հանդիսանայ թուրք էրտողանը: Ու այս դրոյթները հաշուի առնելով է նաեւ, որ ինչպէս երկրին մէջ, այդպէս ալ երկրէն դուրս էրտողան իր քայլերը կ'առնէ, մեկնակէտ ունենալով յատկապէս թրքութեան գործօնը:

Ի վերջոյ Անքարայի համար թրքական «գոնսէթը» աւելի «աշխատունակ» է, աւելի միացնող է քան իսլամի մօտեցումը, որուն համար ալ էրտողան եւ իր քաղաքականութեան ճարտարապետ համարուողները ունէին յատուկ եւ բաւականին արդիական փաթեթաւորում մը: Ուրեմն այսօրուան թուրքիոյ համար սկսած է մեծ կարեւորութիւն ներկայացնել թրքական սփիւռքը կազմակերպելու խնդիրը: Այդ մէկը ընթացք կ'ընայ առնել Միացեալ Նահանգներու մէջ, ուր կան, ոչ միայն թուրքեր, այլ կան ու կը գործեն Յեղասպանութեան ժխտումի վրայ իրենց ակադեմական հիմքերը աղիւսած սպիտակամորթ ամերիկացիներ ու երեւի հոսկէ ալ ընթացք տանք հայութեան համար մեծագոյն վնաս համարուող ժխտողականութեան քաղաքականութեան բացատրութեան:



Այդ քաղաքականութիւնը՝ ժխտողականութիւնը այսօրուան դրութեամբ առաջ կը տարուի Անքարայի կողմէ տրամադրուած նիւթական նեցուկով ու յստակ է նաեւ, որ թուրքիա ընտրած է այնպիսի մունետիկներ, որոնք դրամի դիմաց պատրաստ են կեղծել եւ ուրանալ իրենց երկրի պատմութիւնն ու անցեալը:

### Մոսկուայի Սէջ Ապտալ



Առաջին անգամը չէ, որ ականատես կը դառնանք թէ ինչպէս արեւմտեան քաղաքակրթութեամբ «թրծուած» պատմաբաններ պատուէր կատարելու հոգեբանութեամբ ու մղումով հակահայկական քաղաքականութիւն կ'իրականացնեն: Այս առումով ուշագրաւ դէպք մը տեղի կ'ունենար (31 Մայիս) Մոսկուայի նոր Արքատի «Տոմ կնիգի» գրախանութիւն մէջ, երբ ամերիկացի գործիչ, Վիրճինիայի «Marine

▶▶▶

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ  
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍԻՄԱ  
ԿԻՐԱԿՈՍԵԱՆ**



ՄԱՍԻՍ - 2019

# Ժխտողականութիւն. Կամ Ինչպէս Մաքրել Մուսթաֆա Քէմալի «Յանաձ» Քաղցկեղը

Corps» համալսարանի ռազմական պատմութեան փրոֆէսոր, նախկին բարձրաստիճան գինուորական գործակալ էտուարտ էրիքսընի՝ Հայոց ցեղասպանութիւնը ժխտող հերթական գիրքի («Թուրքեր - հայեր. ապստամբների հետ պայքարի ուսումնասիրութիւն») շնորհահանդէսը կը խափանուէր խոսք մը հայ երիտասարդներու շնորհիւ: Հայ երիտասարդները Յեղասպանութեան հարցով բանավէճ կ'ունենային շնորհահանդէսին ներկայ թրքական եւ ատրպէյճանական համայնքներու գործիչներուն եւ հեղինակին հետ:

Նախաձեռնութեան անդամներէն՝ Դաւիթ Աղաջանեան խօսելով միջադէպին մասին կը յայտնէր, թէ իրենք իմացած էին էրիքսընի գիրքին մասին եւ չաջողած գիրքը ձեռք ձգել եւ ուսումնասիրել: Հայ համայնքի քանի մը ներկայացուցիչներով նախապէս որոշած են երթալ այնտեղ եւ



խօսքով հանդէս գալ: Համայնքի ջանքերուն շնորհիւ գրախանութիւն հեղինակին թոյլ չէ տուած, որպէսզի պաշտօնական տօնական արարողութիւն տեղի ունենայ:

Բաւական անշուք ձեւով սկիզբ առած շնորհահանդէսի ընթացքին հայ երիտասարդները բանավէճի կը բռնուէին էրիքսընի հետ: Դաւիթը, մասնաւորապէս, դիմելով ամերիկացի գործիչին կ'ըսէ. «Կը հասկնամ ձեր «դժուար» կացութիւնը եւ չեմ ցանկար խօսիլ հայ-թրքական յարաբերութիւններուն մասին: 2014-ին կայացած ձեր էլոյթին ժամանակ ըսած էք հետեւեալ խօսքերը. «Պատմութիւնը մանեքէն է, որ դուն կ'ընաս հազընել, ինչպէս կը ցանկաս»: Այո, ատիկա «կարկտան է», երբ Աբրահամ Լինքոլնը երկար տարիներ պայքարելէն յետոյ հասաւ ստրկութեան վերացման, ատիկա «կարկտան է», երբ Մարթին Լիւթըր Քինկ իր համակիրներուն հետ կազմակերպեց Ուաշինկթընի երթը եւ արտասանեց «Ես երազանք մը ունիմ» յայտնի ճառը: Կրնամ բերել շարք մը այլ պատմական դրուագներ, որոնք կերտած են ձեր իսկ հայրենիքի պատմութեան փառահեղ էջերը: Ամերիկեան ժողովուրդի գաղափարախօսութիւնը փաստօրէն «կարկտան» եղած է: Ատիկա դուք կ'ըսէք»:

Այս խօսքերէն յետոյ հեղինակին ջիղերը տեղի կու տան: Քանի մը վաչկեան յետոյ ան ոտքի կը կանգնի եւ համեստօրէն կը հեռանայ իր իսկ գիրքի շնորհահանդէսէն՝ թողնելով շարք մը ազերի եւ թուրք երկրպագուներ, որոնք կը սպասէին, որ մակագրէր իրենց ձեռք բերած գիրքերը:

Ամերիկացի պատմաբանին վարքը զիս կը մղէին աւելի մօտէն որոնումներ կատարել հասկնալու համար իրապէս, թէ ԱՄՆ-ի մէջ ուրկէ կը սերէր հակահայկական թիւ մէկ մօտեցումը՝ ժխտողականութիւնը. եւ ահա յաջորդ տողերով ընթերցողներուն պիտի ջանամ ներկայացնել, այդ տիրահռչակ վարկածին սեղմ պատմականը:

### Ժխտողականութեան «Պապաները»

Աթաթուրք Մուսթաֆա Քեմալի էլոյթը 1919 թուականի Դեկտեմբերին. «Ոչ իսլամներու հետ մեր երկրին մէջ կատարուածը անոնց կողմէ բարբարոսաբար անջատողական քաղաքականութիւն դաւանելու հետե-

ւանք էր, երբ անոնք դարձան արտաքին գործարքներու գործիք եւ չարաշահեցին իրենց իրաւունքները: Հաւանաբար շատ պատճառներ կան Թուրքիոյ մէջ կատարուած ոչ ցանկալի իրադարձութիւնները արդարացնելու համար: Եւ կ'ուզեմ յստակ ըսել, որ այդ իրադարձութիւնները հեռու են հալածելու այն ձեւերէն, որոնք առանց որեւէ արդարացման իրականացուած են Եւրոպայի երկիրներուն մէջ»: Հայերու ցեղասպանութեան ժխտման նկատմամբ քաղաքականութիւնը ձեւաւորուած էր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կողմէ, որ 1919 թուականին Անքարայի մէջ իր ծրագրային էլոյթին մէջ բերաւ բունի նուաճողական գործողութիւններու բոլոր դասական արդարացումները՝ զոհի մեղաւորութիւնը: Քեմալը մեղաւոր համարեց հայերը եւ բարձր գնահատեց Օսմանեան կայսրութեան մէջ իսլամներու համբերատարութեան դրսեւորումը. ան նաեւ շրջապատած էր այն մարդոցմով, որոնք մասնակցութիւն ունէին հայերու ոչնչացման գործին:

1923 թուականին Թրքական Հանրապետութեան կազմաւորումէն ետք անոր քաղաքական եւ գիտական վերնախաւը անրաժեշտութիւն չէր տեսներ տարածութիւն պահպանելու հայերու ցեղասպանութենէն կամ այն իրականացնող անձերէն: Այդ երկիրը ղեկավարող վերնախաւը հիմնականին մէջ կազմուած էր Իթթիհատի նախկին գործիչներէն, որոնցմէ շատերը անձամբ մասնակցած էին հայերու ոչնչացման գործողութիւններուն եւ դաշինք կազմած իսլամներու տարածաշրջանի առաջնորդներուն եւ իսլամական ցեղերու առաջնորդներուն հետ, որոնք մեծ շահոյթ կը ստանային հայերու եւ յոյներու արտաքսումէն: Հայերու ցեղասպանութեան հարցի քննարկումը կրնար քայքայիչ ըլլալ այդ դաշինքին համար:

1926 թուականին Թուրքիոյ ազգային ժողովը օրէնք ընդունեց Իթթիհատի հայերու կողմէն «Նեմեսիս» վրիժառութեան գործողութեան շրջանակներուն սպանուած, ինչպէս նաեւ 1919 թուականին մահապատիժի դատապարտուած անդամներու ալիքներուն եւ ծնողազուրկներուն կենսաթոշակ տրամադրելու մասին: 1927-ին Թուրքիոյ Հանրապետական կուսակցութեան համագումարին Մուսթաֆա Քեմալը քանի մը օր շարունակ կը պատմէր այն մասին, թէ ինչպէս անկախութեան համար պայքարի ընթացքին ստեղծուեցաւ թուրք ազգութիւնը: Այդ թեքսթը ընդունուեցաւ որպէս թրքական պաշտօնական պատմութիւն եւ պետութեան կողմէ սահմանուեցաւ որպէս սրբութիւն: Համաձայն այդ պատմութեան՝ Թուրք ազգի ծագումը սկսած է 1919 թուականին, իսկ անոր ձեւաւորման մէջ մասնակցութիւն ունեցած են բացառապէս իսլամները եւ առաջին հերթին՝ Թուրքերը: Ճառը կը գովաբանէր թուրքերը եւ կը մերկացնէր քրիստոնէական փոքրամասնութիւններն ու Արեւմուտքը: Աթաթուրքի պատմական գոնաէթը կ'արհամարհէր թրքական հասարակութեան պատմականօրէն կազմաւորուած աւանդական բազմացեղութիւնը: Թրքական Հանրապետութեան մասին իմբակային միջին մէջ տեղ չկար էթնիք փոքրամասնութիւններու՝ հայերու, քիւրտերու, յոյներու համար, իսկ անոնց նկատմամբ նախահանրապետական շրջանին եւ անկէ ետք իրականացուած բռնութիւններուն մասին կը պահուէր մեծ լուսթիւն: Մինչ այժմ Թուրքիոյ քրէական օրէնսդրութեամբ յանցագործութիւն կը համարուի պատմութեան քեմալական տարբերակի քննադատութիւնը, բան մը, որ անհնար կը դարձնէ թրքական հասարակութեան մէջ անոր քննարկումը:

1919 թուականէն Թուրքիան դարձաւ ամերիկեան ռազմավարական հետաքրքրութիւններու անբաժան մասը, իրացման խոշոր շուկայ եւ հիմնական խարիսխ ընդդէմ Խորհրդային Միութեան: Մերձաւոր Արեւելքի երկրորդ խոշոր խաղացողը կը հանդիսանար Մեծն Բրիտանիան: Այս երկու երկիրներն ալ կը հետապնդէին այն սկզբունքը, որ ինչքան քիչ հարց կը ծագի Թուրքիոյ ցեղական կազմին մասին, այնքան լաւ, եւ ամէն կերպ կ'աջակցէին Հայոց ցեղասպանութեան թրքական ժխտման:

1919 թուականին Թուրքիոյ մէջ ԱՄՆ-ի Գերագոյն յանձնակատար կը նշանակուէր ատմիրալ Մարք Պրիսթոլը (անգլ.՝ Mark Lambert Bristol): Ան համոզուած էր, որ Ուիլսոնեան Հայաստանը կը ծառայէ յօգուտ Ֆրանսայի եւ Մեծն Բրիտանիոյ: Տնտեսական ոլորտին մէջ Պրիսթոլը կը ձգտէր ամրապնդել ամերիկեան ազդեցութիւնը Թուրքիոյ մէջ: «Կասկա-



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ  
ՔԵՕՐՈՂԼԵԱՆ**



# Ժխտողականութիւն. Կամ Ինչպէս Մաքրել Մուսթաֆա Քէմալի «Ցանած» Քաղցկեղը

Ծելի» ազգային փոքրամասնութիւնները անոր կողմէ կ'ընկալուէին որպէս թուրքիոյ կայունութեան սպառնալիք: Իր Պոլիս ժամանելու առաջին իսկ օրերէն Պրիսթոլ սկսաւ քննադատել ամերիկեան կազմակերպութիւններու՝ հայերուն աջակցող գործողութիւնները եւ հակառակ քայլեր ձեռնարկեց «Մերձարեւելեան օգնութիւն» (անգլ.՝ Near East Relief) կազմակերպութեան կողմէ հայ որբերու՝ թուրքիայէն դուրսբերման փորձերուն՝ յայտարարելով, որ «աւելի լաւ է գոհել այդ որբերը, եթէ այդ անհրաժեշտ է, որպէսզի վատահոլութիւնը ամբարշտուի»:



Պրիսթոլ նաեւ թուրք ընտանիքներու ձեռքը ինկած հայ կանանց ազատելու փորձերուն ուղղուած հակառակ քայլեր կը ձեռնարկէր:

1922 թուականին թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ սկսած ազգաբնակչութեան զանգուածային փոխանակման ժամանակ Պրիսթոլ յոյները եւ հայերը կը բնութագրէր, որպէս «դարերով արիւն քաշող տգորուկներ» եւ հրապարակախօսէր կը յայտարարէր որ բոլոր քրիստոնեաները պէտք է լքեն թուրքիան եւ այլ վայրի մէջ բնակութիւն հաստատեն: Այդ ամէնը կը ներդաշնակուէր Իթթիհատականներու եւ քեմալականներու ազգայնամոլական եւ հակաքրիստոնէական հռետորաբանութեան հետ:

ԱՄՆ-ի մէջ միախոնրական գրականութիւնը դրական ուղղուածութիւն ունէր հայերու հանդէպ եւ բացասական՝ թուրքերու նկատմամբ, եւ, բացի այդ, 1915 թուականի իրադարձութիւնները դժուար էր մեկնաբանել յօգուտ թուրքիոյ: «Հաւասարակշռութիւնը» պահպանելու համար Պրիսթոլ կը նուազեցնէր հայ գոհերու քանակը կամ ընդհանրապէս կը հրաժարէր ընդունիլ որեւէ փաստարկ: 1920-ի փետրուարին ան միտումնաւոր ապատեղեկատուութիւն կը ներկայացնէր ԱՄՆ-ի Պետական Քարտուղարութեան մօտ Կիլիկիոյ մէջ տեղի ունեցած հայերու սպանդի մասին՝ յայտարարելով, որ այնտեղ գոհեր չեն եղած: Այն պարագային, երբ ան պէտք է բացատրութիւն տար զանգուածային սպանութիւններու մասին, Պրիսթոլ կը յայտարարէր, որ այդ գործով զբաղուած են «աշխարհի այդ հատուածի բոլոր ազգերը»:

Կատարուածին վերաբերեալ տեսակէտներու վերանայման եւս մէկ աշխոյժ կողմնակից էր ատմիրալ Քոլբի Չեսթըրը (անգլ.՝ Colby Mitchell Chester), որ 1922 թուականին գրած էր, որ Օսմանեան ղեկավարութիւնը մեծ փողեր ծախսելով հայերը տեղափոխած է Սուրիոյ ամենահասաքանջ շրջաններ, ուր կլիման կը չիչեցնէր Յուրիտան: Այդ պնդումները կը պարունակէին տարրեր, որոնք յետագային ընդունուեցան հայերու ցեղասպանութիւնը ժխտողներու հետեւորդներու կողմէ՝ հայերու կորուստներու նուազեցում, հայերը սպանելու մտադրութեան ժխտում, սպանութիւններու գոհերու եւ եւրոպացիներու մեղադրում, ուժեղացում ու շարժում թուրքական կորուստներուն: Պրիսթոլ նոյնպէս սխալ տեղեկութիւններ կու տար թուրքերու կողմէ քրտական ապստամբութիւններու դաժան ճնշումներու մասին նշելով, որ եղած դէպքերը «թուրքական բանակի հրաշալի քաջագործութիւն» են:

Այս մօտեցումներուն իբր արդիւնք 1923-ին կը ստեղծուէր «Թուրքիոյ Ամերիկեան բարեկամներ» կազմակերպութիւնը (անգլ.՝ American Friends of Turkey), որ յետագային կը ղեկավարուէր Պրիսթոլի կողմէ:

1951 թուականին ամերիկացի փրոֆեսոր Լուիս Թոմասը (անգլ.՝ Lewis Thomas) համահեղինակներու հետ կը հրապարակէր «Միացեալ Նահանգները, Թուրքիան եւ Իրանը» գիրքը՝ «Ամերիկայի արտաքին քաղաքականութեան գրադարան» շարքէն: Շարքի խմբագիրն էր ԱՄՆ-ի պետական քարտուղարի նախկին տեղակալ Սամներ Ուելլը (անգլ.՝ Sumner Welles), որ նախաբանին մէջ կը նշէր թուրքերու եւ քոմունիզմի միջեւ հակադրութեան մասին: Նկարագրելով թուրքիան՝ Լուիս Թոմասը կը պնդէր, որ թուրքերը, ոչնչացնելով եւ տեղահանելով հայերը, կը փրկէին գիրենք: Ըստ Թոմասի՝ թուրքիոյ բնակչութեան միատարրութիւնը կ'ապահովէ երկրի կայունութիւնը, որ ԱՄՆ-ի համար կարեւոր գործընկեր էր: Թոմասի

աշակերտը Փրինսթընի համալսարանին մէջ Սթենֆորտ Շոուն էր, որ իր հերթին կը ղեկավարէր ձասթին Մաքթարթիսի եւ Հիթ Լուուրիի համալսարանական թէզերու պաշտպանութիւնը՝ Քալիֆորնիոյ համալսարանին մէջ: Շոու, Մաքթարթիսի եւ Լուուրի դարձան հայերու ցեղասպանութեան ժխտման առանցքային անձերը ԱՄՆ-ի մէջ:

## «Քաղցկեղ»ին Դէմ Կռիւլը Սկիզբ Պիտի Առնէ Ամերիկայէն

Այո Ամերիկայէն: Անշուշտ մի քանի պատճառներով, որոնց ամէնէն կարեւորը հայ-թուրքական «սառած» ճակատումը ամերիկեան ափ փոխադրելն է: Բնականաբար, երբ ճակատում կ'ըսես, անպայման զինուորական բախում չպէտք է հասկնալ, որովհետեւ թուրքիոյ հետ մեր ունեցած տարակարծութիւններն ու ճանաչման, հատուցման եւ նոր էջ բանալու մօտեցումները այսօր պայմանաւորուած են քաղաքական պայքարով: Մենք



ի վիճակի չենք թուրքիոյ հետ զինուորական գործօններով խօսելու, կամ ստիպելու այդ երկրի ղեկավարութեանը, որ կառուցողական հարցերը լուծելու գործի եւ իրապաշտ մօտեցում ունեցողի դերով հանդէս գալու: Ու այս բոլորն անդին յստակ է նաեւ, որ Անքարայի իշխանութեան համար այսօր ամէնաթոյլ օղակը ամերիկեան գործօնն է: Վերջին երկու տարիներուն, այդ յարաբերութիւնները յայտնուեցան ամենախոցելու մակարդակներու վրայ, բայց եւ այնպէս հայութիւնը չկարողացաւ այդ առումով, ոչ մէկ միաւոր գրանցել, կամ ըսենք թուրքական բերդին մէջ կոյ մը նշանակել: Հայկական կողմին մօտ այս ընկրկումը, իր յայտնի պատճառներն ունի, որոնց քննարկումը, այս յօդուածին իսկական նպատակը է:

Վերադառնալով բուն թեմային, ապա մեզմէ իւրաքանչիւրին համար յստակ պէտք է ըլլայ, որ ամերիկացի գործիչներու (ինչպէս նախորդ հատուածին մէջ ներկայացուցի) թուրքիոյ հանդէպ առկայ «սէմբաթիան» կապ ունի միայն ու միայն շահակցական մօտեցումներու հետ: Ամերիկացիք իրենց շահը կը փնտռեն եւ կը պատրուակեն, որ թուրքիան իրենց վատահեղի դաշնակիցն է: Ո՛չ թուրքիան ԱՄՆ-ի դաշնակիցը չէ, այլ միայն բանիւ շահակիցն է ու այսօրուան այդքան արագ թաւալուող աշխարհին մէջ այդ շահերն ալ ենթակալ են նոյնքան արագ փոփոխման:

Այս վարկածը հաշուի առնելէ ետք լաւ պիտի ըլլայ, որ Ամերիկա ապրող հայութիւնը գործի դնէ ընկալման նոր եղանակներ, որոնք պիտի ծառայեն մէկ նպատակի, ամէն ճիգ ի գործ դնել նախ եւ առաջ արմատախիլ ընելու համար ամերիկեան մարմնին մէջ բոյն դրած ախտը, որ կը կոչուի ժխտողականութիւն: Այդ հիւանդութեան վերացումէն ետք, կարելի պիտի ըլլայ հաստատել նոր նշաններ, որոնք բոլորն ալ իրականանալի դրոյթներ են, մէկ պայմանով, որ այդ դատերուն տէր կանգնող հասարակութեան անդամները, իրապէս եւ անկեղծ ոգիով հաւատան իրենց պայքարի մաքրութեան:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND logo with a hand holding a heart. Text: Save Support Sustain. Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948. www.syrianarmenianrelieffund.org

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ. ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA. Decorative background with Christmas ornaments and pine branches.



# Թուրքիոյ Քիւրտերու Եզնաժամը Աթաթուրքէն Մինչեւ Սուլթան Էրտողան

## ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂԱՇԵԱՆ

Ներկայիս Էրտողան կը փորձէ իր դիրքերը ամրապնդել Սուրիոյ հիւսիսային քիւրտաբնակ շրջաններուն մէջ եւ հոն քիւրտերը կը հալածէ, մինչ ԱՄՆ-ը քիւրտերը ՏԱԻՇ-ի դէմ մղած իր պայքարի ամենամեծ դաշնակիցը կը համարէ: Թուրքիան նաեւ զիջումներ կ'ընէ Ռուսաստանին, Սուրիոյ տագնապին հարցով: Սակայն ինչո՞ւ ան կը հալածէ Սուրիոյ քիւրտերը: Ի՞նչն է զինք անոր զիջումներուն Ռուսաստանին, եւ ի վերջոյ ի՞նչ ձեռք պիտի բերէ ան: Կը թուի թէ Թուրքիան կ'ակնկալէ Սուրիոյ քիւրտերը տկարացնելով եւ անոնց կապերը իր երկրի քիւրտերուն հետ խզելով պիտի կարողանայ վերջ տալ քիւրտական ազգային ազատագրական շարժումին, իր երկրէն ներս:

Ըստ 1920 թ. Սելրի պայմանագիրին, Թուրքիոյ արեւելեան եւ հարաւարեւելեան մասերուն մէջ քիւրտական ինքնավար շրջան մը պիտի ստեղծուէր, ԱՄՆ-ի նախագահ Ուուարթ Ուիլսոնի մշակած քարտէզին համեմատ, սակայն այդ մէկը տեղի չունեցաւ երբ 1923 թ. Լոզանի պայմանագիրը ջնջեց Սելրինը, եւ Քեմալ Աթաթուրք Թուրքիոյ քիւրտական բոլոր տարածքները ենթարկեց իր իշխանութեան տակ: Ըստ քիւրտերուն, Սելրի պայմանագիրը պառակտեց Մեծն Քիւրտստանը, Թուրքիոյ, Իրանի, Իրաքի եւ Սուրիոյ միջեւ: Քիւրտերուն թիւը ներկայիս աւելի քան 30 միլիոն կը գնահատուի, անոնցմէ 16 միլիոնէ աւելի Թուրքիոյ մէջ կը գտնուին եւ գրկուած են իրենց ազգային իրաւունքներէն: Իսկ Իրանի մէջ, անոնք բոլորովին կառավարութեան հսկողութեան տակ են. «Մահապատ»ի Քիւրտական հանրապետութիւնը, որ հիմնուած էր Իրանի հիւսիսային կողմը 1946 թ. երկար կեանք չունեցաւ: Սուրիոյ Քիւրտերը միշտ անտեսուած են, իսկ ի՞նչ կը վերաբերի Իրաքին, հոն քիւրտական շարժումները սկսած են քսաներորդ դարու սկիզբին Շէյխ Մահմուտ Ալ-Հաւիտի ղեկավարութեամբ, այնուհետեւ շարունակուած է Պարզանի, Թալապանի եւ այլ տոհմերու կողմէն եւ յաջողած են իրենց իրաւունքներուն մեծ մասը ձեռք բերել եւ բաղդատմամբ միւս երկրներուն իրենց իրավիճակը

աւելի լաւ կը համարուի:

Աթաթուրք քիւրտերուն «լեւրան թուրքեր» անուանեց. արդիւնք քիւրտերէն լեզուի ուսուցումը եւ կրթական ու մշակութային որեւէ գործունէութիւն, թերթերու հրատարակում, նաեւ քիւրտական քաղաքական կուսակցութիւններու ձեւաւորում:

1925 թ. Աթաթուրքի դէմ տեղի ունեցաւ Շէյխ Սայիտ Բիրանի ապստամբութիւնը, որ քիւրտերու առաջին ազգային-ազատագրական շարժումն էր Թուրքիոյ ժամանակակից պատմութեան մէջ, սակայն այն չյաջողեցաւ եւ Շէյխ Սայիտը մահապատիժի ենթարկուեցաւ իր ընկերներուն հետ. հարիւրաւոր քիւրտական զիւղեր թալանուեցան, այրուեցան եւ բնակիչները բռնի արտաքուստեցան:

1927-1930 թ.թ. «Աղրի»ի, Արարատ լեռան, յեղափոխութիւնը տեղի ունեցաւ Օսմանեան բանակի նախկին զօրավար Իհսան Նուրի փաշայի ղեկավարութեամբ: Հոյպուն (Անկախութիւն) քիւրտական կուսակցութիւնը եւ Պատրիստան տոհմը, որոնք հայերէն, ՀՅԴ-էն, օգնութիւն ստացան, անոնք ալ իրենց մասնակցութիւնը բերին: Արարատի տարածքը քիւրտական անկախ պետութիւն հռչակուեցաւ: Աթաթուրքը լայնածաւալ պատերազմ մղեց եւ «Աղրի»ի քիւրտական նորաստեղծ պետութիւնը տապալեց: Իհսան Նուրի փաշան Պարսկաստան ապաստանեցաւ:

1935 թ. Թուրքիոյ պետութիւնը վերաբնակեցման նոր օրէնքով որոշեց Տերսիմի (այժմ Թունջլի) քիւրտերը ուրիշ վայրեր տեղափոխել, հոն թուրքեր բնակեցնելու նպատակով: Քիւրտերը մերժեցին եւ ծալր առաւ Տերսիմի ապստամբութիւնը Սայիտ Ռեզայի ղեկավարութեամբ (1937-1939) թ.թ.: Աթաթուրքը տասնեակ հազարաւոր զօրքեր ղրկեց եւ օգային ուժի մասնակցութեամբ վերջ տուաւ Տերսիմի ապստամբութեան: Տասնեակ հազարաւոր քիւրտեր սպանուեցան եւ մեծ թիւով ալ բռնի տեղափոխուեցան. Տերսիմի իրադարձութիւնները ցեղասպանութիւն նկատուեցաւ, եւ վերջերս Էրտողանը ներողութիւն խնդրեց իր կառավարութեան անունով:

Քիւրտերու դէմ հալածանքները շարունակուեցան Թուրքիոյ մէջ (1960, 1971, 1980) թ.թ. յեղաշրջումներու հետեւանքով, սա-



կայն անոնց ազատական շարժումը շարունակուեցաւ եւ 1978 թ. Ապտուլա Օճալանի ղեկավարութեամբ կազմուեցաւ «Քիւրտստանի Բանուորական Կուսակցութիւն»ը, (PKK), որը 2004 թ. պայքար մղեց պետութեան դէմ ու ան շարունակուեցաւ մինչեւ 2009 թ., ուր խաղաղ բանակցութիւններ սկսան: Մինչ այդ աւելի քան 40.000 մարդ սպանուեցաւ եւ աւելի քան 3000 քիւրտական զիւղեր այրուեցան եւ հարիւր հազարաւոր քիւրտեր տեղահանուեցան: Նոյն ոճը եւ նոյն շովինիստական մօտեցումը Ապտուլ Համիտէն սկսեալ մինչեւ օրս. Նախ հայերուն եւ այլ քրիստոնեաներուն դէմ, ապա իսլամ քիւրտերուն դէմ որոնք իրենց հետ միասին կոտորեցին հայերուն:

Օճալան 1979 թ. տեղափոխուեցաւ Սուրիա. տարիներ ետք 1998 թ., Թուրքիոյ սպառնալիքները Սուրիոյ պետութեան դէմ ծանրացան Օճալանին ապաստան ապահովելուն համար, եւ ան ստիպուեցաւ մեկնիլ Երկրէն, նախ դէպի Ռուսաստան, յետոյ Իտալիա եւ ի վերջոյ Յունաստան. վերջապէս ձերբակալուեցաւ 1999 թ. Փետրուար 15-ին Նայրոպիի մէջ, Ափրիկէ թուրքերու կողմէ եւ ԱՄՆ-ի օգնութեամբ, ան Թուրքիոյ մէջ նախ մահապատիժի ենթարկուեցաւ ապա 2002 թ. մահապատիժը փոխարինուեցաւ ցմահ ազատազրկման երբ մահապատիժը արժիւղուեցաւ Թուրքոյ մէջ Եւրոխորհրդարանի ճնշումով:

Թուրքութ Օզալ իշխանու-

թեան հասաւ Նոյեմբեր 1998-ին եւ 1991-ին ան ներում շնորհեց քաղաքական բանտարկեալներուն եւ քիւրտերուն որոշ չափով ազատութիւն տուաւ, Օզալ յայտնեց որ ինք քրտական արմատներ ունի: Թուրքիոյ եւ (PKK) միջեւ անուղղակի բանակցութիւններ տեղի ունեցան 1993 թ. Իրաքի քիւրտ առաջնորդներէն ձալալ Թալապանիի միջնորդութեամբ: Երկու կողմերը պայքարին վերջ տալու մասին գրեթէ համաձայնեցան, սակայն 1993 թ. Ապրիլին Օզալի յանկարծակի մահը արիւնալի բռնութեան նոր դէպքեր յառաջ բերաւ: 1997 թ. խաղաղութեան ուրիշ փորձ մը տեղի ունեցաւ Թուրքիոյ ծալրահեղ իսլամ վարչապետ Նեջմըլտին Էրպաքանի օրով, սակայն ան ալ ձախողուեցաւ, երբ բանակը տապալեց Էրպաքանի իշխանութիւնը: Վարչապետ Բոլանդ Էճեւիտի եւ բանտարկուած Օճալանի միջեւ կարճ բանակցութիւններ տեղի ունեցան, սակայն անոնք ալ վերջ գտան առանց արդիւնքի: (2009-2011) թ.թ. Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյի մէջ բանակցութիւններ տեղի ունեցան Էրտողանի կառավարութեան եւ PKK-ի ներկայացուցիչներու միջեւ, սակայն դադարեցան Փարիզի մէջ PKK-ի երեք յայտնի անդամներու սպանութեան պատճառով, ուր Թուրքիան մեղադրուեցաւ: Պայքարը շարունակուեցաւ եւ Էրտողան յայտարարեց, որ Թուրքա-

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ  
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ  
ՊԷՔԱՐԵԱՆ**



# Սփիւռքի քաղաքականութեան Ռազմավարութեան Հայեցակարգը. Նախագիծ

«Հայերն Այսօր»-ը կը ներկայացնէ Սփիւռքի քաղաքականութեան ռազմավարութեան հայեցակարգի նախագիծը (draft):

Փաստաթուղթը պատրաստած են՝

ՀՀ սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան

ՀՀ սփիւռքի նախարարի խորհրդական Վահէ Սահակեան

Նախնական այս տարբերակի մշակումն իրականացուած է սփիւռքի ուսումնասիրութիւններով զբաղուող հետեւեալ մասնագէտներու հետ խորհրդակցութեամբ՝

Խաչիկ Թէօլէօլեան (Ուեզլէյեան համալսարան, ԱՄՆ, Diaspora: A Journal of Transnational Studies գիտական ամսագրի հիմնադիր եւ խմբագիր),

Հրաչ Զիլիմկիրեան (Օքսֆորտի համալսարան, Մեծ Բրիտանիա),

Արա Սանճեան (Միչիկընի համալսարան-Տիրպորն, ԱՄՆ)

Ռազմիկ Փանոսեան (Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի հայ համայնքներու բաժանմունքի տնօրէն, Փորթուկալ)

Հայեցակարգին մէջ ներառուած են նաեւ իրենց կողմէ հնչեցուած առաջարկութիւնները եւ կարծիքները, սակայն հայեցակարգի բոլոր հատուածներու մշակումն իրականացուած է Մխիթար Հայրապետեանի եւ Վահէ Սահակեանի կողմէ:

Հայեցակարգի ծիրէն «Սփիւռք» հասկացութիւնը սահմանած ենք շատ լայն, որ կ'ընդգրկէ բոլոր անոնց, որոնք Հայաստանի մէջ չեն ապրիր, այլ երկիրներու մշտական բնակիչներ կամ քաղաքացիներ են, իրենց որեւէ ծելով հայ կը համարեն, ունին հայկական ծագում կամ արմատներ:

Խորհրդային եւ անկախ Հայաստանի իշխանութիւններու վարած սփիւռքի քաղաքականութիւններու անցեալն ու ներկան

Հայաստանի խորհրդայնացումէն մինչ այսօր, եթէ (խորհրդային կամ անկախ) Հայաստանի իշխանութիւնները վարած են սփիւռքի քաղաքականութիւն, ապա այդ քաղաքականութիւնները եղած են հայաստանակեդրոն եւ միտուած եղած են ողջ սփիւռքի կամ ատոր այս կամ այն հատուածներուն վրայ հայաստանեան իշխանութիւններու ու ներհայաստանեան օրակարգերու պարտադրման:

Սփիւռքի քաղաքականութիւնները խորհրդային եւ յետխորհրդային Հայաստանի տարիներուն նպատակ ունեցած են.

- ա) ծառայեցնել սփիւռքի միջոցները (հիմնականին մէջ ֆինանսական) խորհրդային կամ անկախ Հայաստանի զարգացման ծրագիրներուն;
- բ) Հայաստանը դարձնել բոլոր հայերու հայրենիքը (չնայած այն հանգամանքին, որ ցեղասպանութենէն փրկուածներն ու իրենց սերունդներն այդ Հայաստանի մէջ երբեք չէին ապրած):

- գ) կազմակերպել հայրենադարձութիւն, վերադարձ դէպի հայրենիք;
- դ) խորհրդային եւ յետագային անկախ Հայաստանի քաղաքական ազդեցութիւնը եւ հայաստանեան (հիմնականին մէջ արեւելահայ) մշակոյթը տարածել սփիւռքեան գաղութներուն վրայ:

Այս բոլորը դրսեւորուած են թէ՛ 1920-1930-ականներուն Հայ Օգնութեան կոմիտէի գործունէութեան եւ Հայաստանի խորհրդային իշխանութիւններու, թէ՛ 1946-48-ի դրամահաւաքներու ու «Մեծ հայրենադարձութեան» տարիներուն, թէ՛ 1960-1980-ականներուն Սփիւռքի հետ մշակութային կապերու կոմիտէի եւ թէ՛ անկախութեան տարիներուն Համահայկական հիմնադրամի, 1998-2008 Ռ. Քոչարեանի կառավարութեան, իսկ 2008-2018 ՀՀ սփիւռքի նախարարութեան վարած քաղաքականութիւններուն:

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու գրեթէ մէկդարեայ պատմութիւնը ցոյց տուած է, որ նաեւ այսպիսի քաղաքականութիւններու արդիւնքով՝ սփիւռքի ողջ ֆինանսական, մարդկային ու այլ միջոցները, մեծ առումով, Հայաստան չեն ուղղուած, ողջ սփիւռքը չէ ենթարկուած հայաստանեան այս կամ այն իշխանութիւններու պարտադրած քաղաքական, մշակութային եւ արժէքային օրակարգերուն, արտերկրի մէջ ծնած եւ մեծցած, իրենց երկիրներուն եւ իրենց ոլորտներուն մէջ մեծ յաջողութիւններ արձանագրած սփիւռքի երկրորդ, երրորդ, չորրորդ սերունդները մեծ մասամբ անհաղորդ դարձած են հայաստանեան



իրադարձութիւններուն եւ տարբեր պատճառներով հեռացած են նաեւ սփիւռքեան աւանդական կառուցներէն ու կազմակերպութիւններէն, հայկական խիստ բազմազան սփիւռքի միայն փոքր մասը այսօր ընդգրկուած է սփիւռքեան տարբեր միաւորումներու, կազմակերպութիւններու կամ նախաձեռնութիւններու մէջ եւ միայն փոքր մաս մը հետեւողականօրէն կը հետաքրքրուի Հայաստանի Հանրապետութեան խնդիրներով, սփիւռքի ստուար գանգուած մը տարբերակօրէն կ'աշխուժանայ միայն Հայաստանի մէջ որեւէ ճգնաժամային իրավիճակ յառաջանալուն, ինչպիսին էր, օրինակ, 1988-ի երկրաշարժը կամ Արցախեան պատերազմը:

### Սփիւռքի քաղաքականութեան վերագնահատման պատմական հնարաւորութիւնը

Թաւշեայ յեղափոխութիւնն այլ խիստ կարեւոր հարցերու շարքին նաեւ ստեղծած է պատմական ամենաբարենպաստ պահը, երբ Հայաստան պետութիւնը կրնայ վերագնահատել սփիւռքի հետ համագործակցութեան մօտեցումները եւ արմատապէս վերանայիլ սփիւռքի նկատմամբ վարած իր քաղաքականութիւնը:

Հայաստան կարեւոր դեր կրնայ ունենալ սփիւռքի բազմազան շրջանակներուն հայաստանակեդրոն ու ոչ հայաստանակեդրոն տարբեր ծրագիրներու մէջ ներգրաւելու եւ անոնց սոցիալական, մշակութային, տնտեսական ու քաղաքական գործօնը Հայաստանի կամ սփիւռքի կարեւորագոյն խնդիրներու լուծման նպատակով հաւաքագրելու աշխատանքներուն մէջ: Աւելին, սփիւռքի մէջ շատերը կ'ակնկալեն, որ Երեւանը կրնայ դառնալ հէնց այն «չէզոք» վայրը, ուր սփիւռքահայ տարբեր շրջանակներ կրնան հանդիպել եւ քննարկել իրենց յուզող խնդիրները, մտածել այդ խնդիրներու լուծման ուղղութիւններու շուրջ:

Պատմական փորձը ցոյց կու տայ, որ սփիւռքի հետ մէկ օրակարգով հնարաւոր չէ արդիւնաւէտ աշխատիլ: Սփիւռքը բազմաշերտ է, եւ սփիւռքի համայնքներու, կազմակերպութիւններու ու անհատներու հետ աշխատանքներուն պէտք է ունենալ բազմակի օրակարգեր ու ուժաբանական քաղաքականութիւններ: Սփիւռքի նկատմամբ նոր քաղաքականութեան նպատակը երկարաժամկէտ հեռանկարին մէջ պէտք է ըլլայ ուժեղ Հայաստանի կայացումը եւ ուժեղ սփիւռքի գոյութիւնը: Մեր պատկերացմամբ, ուժեղ սփիւռք ունենալու գաղափարը չի հակասեր ուժեղ Հայաստան ունենալու տեսլականին եւ ընդհակառակը՝ ուժեղ Հայաստանի կառուցումը պէտք է ենթադրէ սփիւռքի միջոցներու սպառում եւ սփիւռքեան կազմակերպութիւններու, միութիւններու, համայնքներու թուլացում իրենց երկիրներուն մէջ: Սփիւռքի նկատմամբ սպառողական ու չհամակարգուած քաղաքականութիւնը կրնայ կարճաժամկէտ հեռանկարին մէջ Հայաստանի համար շահ ապահովել, բայց հեռահար ժամկէտի



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԻՎԱՐ ԵՒ ՈՍԿԻ  
ԱՆԹՈՍԵԱՆ**



# Սփիւռքի Քաղաքականութեան Ռազմավարութեան Հայեցակարգը. Նախագիծ

մէջ՝ նուազեցնել կամ սպառել սփիւռքի ներուժը: Սփիւռքի հետ համատեղ ծրագիրներու իրականացման ու համագործակցութեան իւրաքանչիւր գործելակերպ պէտք է խարսխուած ըլլայ հէնց հեռահար արդիւնաւէտութեան հաշուարկին վրայ:

Առանձին խնդիր է սփիւռքի ճանաչողութեան հարցը: Եթէ հրէական, ասորիական, չինական, հնդկական կամ այլ սփիւռքներու մասին բազմաթիւ լուրջ գիտական ուսումնասիրութիւններ կան, տարբեր երկիրներու մէջ ձեւաւորուած հայ սփիւռքեան բազմազան ինքնութիւններու ու համայնքներու մասին շատ քիչ ուսումնասիրութիւններ կան: Այդ պատճառով, անհրաժեշտ է նաեւ ունենալ արդի սփիւռքագիտական տեսական ու համեմատական ուսումնասիրութիւններուն հաղորդակից հայ սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոններ տարբեր երկիրներու մէջ, որ պարբերաբար նոր գիտելիքներ կը ստեղծեն եւ տուեալներ կը հաւաքագրեն սփիւռքի բազմազան համայնքներու, անոնց խնդիրներու, հայկականութեան բազմազան դրսեւորումներու, սփիւռքի այս կամ այն համայնքներուն մէջ առկայ հմտութիւններու, հնարաւորութիւններու, միջոցներու եւ շատ այլ հարցերու շուրջ (Հայաստանի մէջ եւ քանի մը այլ երկիրներու մէջ այդպիսի կեդրոններ կան, սակայն ատոնց կարեւոր մասը գործած եւ կը գործեն միջազգային տեսական ու համեմատական սփիւռքագիտական փորձէն անկախ, հայ սփիւռքի մասին եղած որոշ աւանդական պատկերացումներու ծիրէն ներս): Այսպիսի կեդրոններու կողմէ իրականացուող հայ սփիւռքի նորարարական ուսումնասիրութիւններուն ու հետազոտութիւններուն հաղորդակից ըլլալը հնարաւորութիւն կ'ընձեռէ մշակելու սփիւռքի աւելի իրատեսական քաղաքականութիւններ:

Սփիւռքի նկատմամբ նոր քաղաքականութիւններ մշակելու եւ ատոնք հետեւողականօրէն իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ որակապէս եւ գաղափարապէս նորովի աշխատող, արդիւնաւէտ լայն լիազօրութիւններով պետական մասնագիտացած գերատեսչութիւն՝ նախարարութեան կարգավիճակով:

## Նորացուած սփիւռքի նախարարութեան տեսլականն ու առաքելութիւնը

Նորացուած սփիւռքի նախարարութիւնը պէտք է ծառայէ «Ուժեղ Հայաստան-Ուժեղ Սփիւռք» տեսլականին: Այս տեսլականին ուղղուած՝ նախարարութեան հիմնական առաքելութիւնը կ'ընայ ըլլալ:

Հայաստանի պետական շահերու պաշտպանութեան եւ ընկերային-տնտեսական զարգացման ու ռազմավարական այլ նպատակներու համար սփիւռքի ներուժի հաւաքագրումը, սփիւռքի բազմազան շրջանակներու հետ համագործակցութեամբ ու համատեղ սփիւռքի ներուժի վերարտադրութեան ու սփիւռքի ուժեղացման ուղղուած ծրագիրներու մշակումն ու իրագործումը:

Սփիւռքի ուսումնասիրութիւններու տեսութիւնն ու փորձը ցոյց կու տան, որ սփիւռքներու սահմաններն անորոշ են եւ այդ իմաստով սփիւռքի մէջ ներկայացուցչական մարմիններու ստեղծումը գործնականին մէջ անիրագործելի է:

Սփիւռքի նախարարութիւնը, սակայն, պարբերաբար տեղեկանալով սփիւռքի բազմազան շրջանակներու, իմբաւորումներու, համայնքներու խնդիրներուն, տարբեր ու բազմազան շրջանակներու հետ մշտական կապի եւ քննարկումներու մէջ ըլլալով եւ վայելելով այդ շրջանակներու վստահութիւնը՝ կ'ընայ անոնց ներկայացնողն ու ներկայացուցիչը դառնալ Հայաստանի եւ ՀՀ կառավարութեան մէջ:

Ինչպէս, օրինակ, գիւղատնտեսութեան կամ կրթութեան նախարարութիւնը միաժամանակ կը ներկայացնեն ինչպէս պետութեան, այնպէս ալ՝ այդ ոլորտին մէջ աշխատողներու եւ այդ ոլորտին մէջ գործող կառույցներու շահերը, Սփիւռքի նախարարութիւնն ալ կ'ընայ հանդիսանալ այդ միջնորդ կառույցը, որ Հայաստանը կը ներկայացնէ սփիւռքի մէջ, եւ սփիւռքի բազմազան շահերու ներկայացնողը կ'ըլլայ Հայաստանի մէջ: Ուժեղ Հայաստան եւ ուժեղ սփիւռք ունենալու տեսլականի իրագործման համար սփիւռքի հետ յարաբերութիւնները պէտք է կառուցուին փոխշահաւէտութեան սկզբունքով, որոնք Հայաստանի զարգացման գուրգահեռ կը նպաստեն նաեւ սփիւռքի բազմազան շրջանակներու կարողու-

թիւններու եւ ներուժի հարստացման:

Այս տեսլականին ու առաքելութեան ծառայող նորացուած Սփիւռքի նախարարութիւնը կ'ընայ ըլլալ այն գերատեսչութիւնը

ա) որ կը մշակէ սփիւռքի նորարարական քաղաքականութեան ռազմավարութիւնը, նպատակները, խնդիրները, որ կը ստեղծէ սփիւռքի քաղաքականութեան արդիւնաւէտութեան գնահատման մեխանիզմներ՝ մշտական խորհրդատուական խորհուրդին մէջ սփիւռքը լաւ ճանչցող մասնագէտներու ներգրաւմամբ ու անոնց աջակցութեամբ, որ նոյն խորհուրդի աջակցութեամբ կը մշակէ կարճաժամկէտ քաղաքականութիւններ, որոնք կ'ըլլան իրատեսական, փոխշահաւէտ, ուղղուած կ'ըլլան Հայաստանի զարգացման եւ միտուած կ'ըլլան սփիւռքեան բազմազան համայնքներու կարիքներուն:

բ) որ այլ երկիրներու կառավարութիւններու հետ համագործակցութեամբ կը մշակէ եւ կ'իրագործէ սփիւռքի տեղական ներուժն ու միջոցները ներգրաւող եւ Հայաստանի տարբեր ոլորտներու զարգացման ուղղուած ծրագիրները:

գ) որ կը համագործակցի սփիւռքի մէջ գործող կառույցներու, անհատներու հետ՝ ի նպաստ Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան:

դ) որ սփիւռքի բազմազան գործարար եւ այլ շրջանակներու հետ պարբերաբար հանդիպումներու եւ քննարկումներու արդիւնքով ՀՀ այլ գերատեսչութիւններու հետ համատեղ հանդէս կու գայ Հայաստանի մէջ սփիւռքահայերու ներգրաւման եւ ներդրումներու դաշտի բարելաւման ուղղուած քաղաքականութեան առաջարկներով եւ օրէնսդրական նախաձեռնութիւններով:


է) որ սփիւռքի ամերիկեան, ռուսական, եւրոպական կամ այլ երկիրներու մէջ հաստատուած բազմազան գործարար, գիտական եւ մասնագիտական շրջանակներու հետ պարբերաբար հանդիպումներու եւ քննարկումներու միջոցով կ'օգնէ ՀՀ կառավարութեան գնահատել եւ պատկերացումներ կազմել միջազգային շուկաներու մէջ Հայաստանեան արտադրութեան ապրանքներու սպառման հնարաւորութիւններուն մասին, որ կ'օգնէ նաեւ պատկերացումներ կազմել Հայաստանի մէջ այն ոլորտներուն մասին, որոնց մէջ սփիւռքահայ ներդրողները կ'ընան հական գործունէութիւն ծաւալել:

զ) որուն համապատասխան վարչութիւններն ու բաժինները սփիւռքի տեղական կառույցներու կամ անհատներու հետ կ'ուսումնասիրեն այս կամ այն երկրին մէջ առկայ համատեղ դրամաշնորհային ծրագիրներու միջոցով Հայաստանի կամ սփիւռքի այս կամ այն համայնքին մէջ տարբեր զարգացման ծրագիրներ իրականացնելու հնարաւորութիւնները, կը մշակեն հայաստանեան եւ սփիւռքեան տարբեր կազմակերպութիւններու հետ համատեղ առաջարկներ եւ ծրագիրներ:

է) որ ԱԳ նախարարութեան եւ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւններու հետ համատեղ կ'աշխատի սփիւռքահայ շահերու խումբերու հետ՝ իրենց իսկ երկիրներուն մէջ հայկական համատեղ քաղաքական օրակարգերու շուրջ, ու թերեւս, որոշ քաղաքական օրակարգերու շուրջ նաեւ ոչ հայկական այլ շահերու խումբերու հետ համագործակցութեամբ:

ը) որ կ'աջակցի սփիւռքի տարբեր կազմակերպութիւններու եւ նախաձեռնութիւններու՝ բազմազան ծրագիրներու շուրջ ստեղծելու եռակողմ համագործակցութիւններ իրենց երկիրներուն մէջ գործող տեղական (հասարակական կամ այլ) կազմակերպութիւններու, իրենց կազմակերպութեան եւ Հայաստանի մէջ գործող նմանատիպ (հասարակական կամ այլ) կազմակերպութիւններու միջեւ:

թ) որ սփիւռքի տարբեր շրջանակներու հետ համատեղ կը մշակէ ու կ'իրագործէ Հայաստանի մէջ զարգացման, ներդրումներու եւ մասնագիտական ներգրաւման ծրագիրներ, միջնորդ կը հանդիսանայ Հայաստանի մէջ առկայ կարիքներու, այդ կարիքներու շուրջ աշխատող հասարակական կազմակերպութիւններու ու պետական հաստատութիւններու եւ սփիւռքի տարբեր անհատներու, կազմակերպութիւններու ու





**ՄԱՍԻՍ - 2019**

# Սփիւռքի քաղաքականութեան Ռազմավարութեան Հայեցակարգը. Նախագիծ

Հաստատութիւններու միջեւ.

ժ) որ շարունակաբար ներկայ կ'ըլլայ սփիւռքի բոլոր համայնքներուն մէջ տեղեկատուական բնոյթի գրքոյկներու, պարբերաբար թարմացուող արդիական կայքէջի, ընկերային ցանցերու մէջ ներկայացուածութեան, սփիւռքի տարբեր կազմակերպութիւններու, հաստատութիւններու եւ անձանց հետ պարբերաբար կապի մէջ գտնուող իր վարչութիւններու ու բաժիններու, ինչպէս նաեւ ՀՀ ներկայացուցչական մարմիններուն մէջ սփիւռքի գծով կցորդ (attaché) պաշտօնեաներու միջոցով.

ժա) որուն համապատասխան վարչութիւններն ու բաժինները ամէնօրեայ կարգով կը հետեւին սփիւռքի մէջ լոյս տեսնող ինչպէս տպագիր, այնպէս ալ համացանցային ու թուային հայ պարբերականներու բովանդակութեան թէ՛ հայերէնով, թէ՛ հինգ իրենց՝ սփիւռքի բազմազան լեզուներով (ռուսերէն, անգլերէն, սպաներէն, ֆրանսերէն, արաբերէն եւ այլն), եւ տեղեկ կ'ըլլան սփիւռքի բոլոր գարգացումներուն;

ժբ) որ տարբեր համայնքներու մասին պարբերաբար տեղեկատուութիւն ստանալով՝ կը կարենան կապել սփիւռքի մէկ վայրի մէջ կամ ոչ-սփիւռքեան տարածութիւններու մէջ առկայ միջոցները այլ սփիւռքեան վայրերու առկայ կարիքներուն՝ այդպիսով համակարգելով միջոցներու աւելի արդիւնաւէտ ծախսը եւ նպաստելով սփիւռքի տարբեր կեդրոններու միջեւ անդրազգային կապերու ձեւաւորման ու ամրապնդման;

ժգ) որ հարցումներու եւ հետազոտութիւններու հիման վրայ պարբերաբար կը մշակէ տարբեր երկիրներու մէջ, կամ մէկ երկրի տարբեր քաղաքներու ու շրջաններու մէջ բնակող ազգութեամբ, ծագմամբ կամ որեւէ ձեւով իրենց հայ համարող անձանց ու խմբաւորումներուն տարբեր ծրագիրներու ներգրաւելու գործօն քաղաքականութիւններ, այդպիսով հաւաքագրելով սփիւռքի՝ հայկական նախաձեռնութիւններէն ու Հայաստանէն կտրուած մեծ թիւ կազմող այս սփիւռքահայ զանգուածներուն.

ժդ) որ կը կարենայ անուղղակիօրէն՝ խորհրդատուութեամբ կամ խնդիրներու լուծման իր աջակցութեամբ, մասնակից դառնալ սփիւռքի տարբեր կազմակերպութիւններու կողմէ սփիւռքեան դպրոցներու կամ այլ հաստատութիւններու ստեղծման, ընդլայնման, կամ փակման, սահմանափակման եւ օտարման որոշումներուն.

ժէ) որ պատրաստ կ'ըլլայ նախարարի, փոխնախարարներու, համապատասխան վարչութիւններու ու բաժիններու մակարդակով արձագանքել սփիւռքի տարբեր կառուցներու (կուսակցութիւններու, եկեղեցիներու, բարեգործական, երիտասարդական, մշակութային կամ այլ կազմակերպութիւններու) կողմէ ստացուած դիմումներուն, եւ համապատասխան խնդրանքի պարագային նաեւ մասնակցիլ ու միջնորդել սփիւռքի տարբեր համայնքներու մէջ առկայ խնդիրներու լուծման (հարկ եղած պարագային նաեւ՝ պետական-դիւանագիտական միջնորդութեամբ).

ժզ) որ համապատասխան վարչութիւններու ու բաժիններու պատասխանատուներու միջոցով սփիւռքեան տարբեր կառուցներու հետ համատեղ կը մշակէ եւ կ'իրականացնէ տեղական բնաբանին համապատասխան արեւմտահայ կամ արեւելահայ լեզուներու ուսուցման, տեղական հայկական կրթութեան ու մշակոյթի զարգացման միտուած ծրագիրներ.

ժէ) ուր իւրաքանչիւր սփիւռքահայ Հայաստան գալուն պէս կը ստանայ տեղեկատուութիւն իր մասնագիտական կամ այլ մասնակցութեան ու ներդրումներու, Հայաստանի մէջ հաստատուելու, ուսանելու, գիտութեամբ ծառայութիւն անցնելու եւ շարք մը այլ հարցերու շուրջ.

ժը) որ կ'օգնէ սփիւռքահայ հայրենադարձներուն հաստատուիլ Հայաստանի մէջ եւ կը նպաստէ հայրենադարձներու՝ սփիւռքահային-հայաստանցի անցման՝ խորհրդատուութեան եւ այլ ծրագիրներու միջոցով, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ հաստատուած սփիւռքահայերուն հետ ժամանակ առ ժամանակ հարցումներու եւ հարցազրոյցներու միջոցով ստացուած խնդիրներուն արձագանքելով եւ այդ խնդիրները լուծելով:

Ի հարկէ, այսքանով չեն սահմանափակուիր մեր պատկերացուցած վերափոխուած սփիւռքի նախարարութեան ընելիքները: Ռամզավարա-

կան ուղղութիւններու այս շարքը կարելի է ընդլայնել փորձագէտներու եւ շահագրգիռ աւելի լայն շրջանակներու հետ քննարկումներու արդիւնքով: Սփիւռքի հետ նման բազմաձև կարգակ յարաբերութիւններ ձեւաւորելու համար անհրաժեշտ է ունենալ առանձին գերատեսչութիւն, որ ներկայացուած կ'ըլլայ կառավարութեան մէջ, հաշուետու կ'ըլլայ կառավարութեան, որ այլ գերատեսչութիւններու հետ համագործակցութեամբ՝ կը մշակէ ու կ'իրագործէ սփիւռքի կրթական, մշակութային, քաղաքական, արտաքին քաղաքական ներուժի հարստացման նպատող եւ այդ ներուժը արդիւնաւէտօրէն հաւաքագրող բազմազան ծրագիրներ:

### Սփիւռքի քաղաքականութեան միջազգային փորձը

Սփիւռքի նորարարական քաղաքականութիւններու միջազգային փորձ կայ: 2015թ.-ին Իռլանտայի կառավարութեան մշակած սփիւռքի քաղաքականութիւնը, օրինակ, ունի հետեւեալ նպատակները.

ա) աջակցիլ իռլանտացի արտագաղթողներուն, որպէսզի լաւագոյն հնարաւոր կենսապայմաններ ստեղծեն իրենց բնակութեան երկիրներուն մէջ:

բ) օգնել արտագաղթածներուն եւ անոնց սերունդներուն զարգացնել եւ պահպանել իրենց իռլանտական ինքնութիւնը եւ կապը Իռլանտայի հետ;


գ) սփիւռքի անդամներու հետ համատեղ աշխատիլ ի նպաստ Իռլանտայի կղզիին վրայ շարունակական խաղաղութեան ու բարեկեցութեան:

«Կլոպալ իռլանտացի» խորագիրով սփիւռքի քաղաքականութեան այս նպատակները հիմնուած են իռլանտական սփիւռքի իրատեսական ըմբռնման վրայ, որ կ'ընդգրկէ թէ՛ Իռլանտայէն վերջին տարիներուն արտագաղթածներուն, եւ թէ՛ իռլանտական ծագումով անձանց, որոնք կ'ապրին Իռլանտայէն դուրս, բայց այս կամ այն կերպ կապուած են իռլանտական մշակոյթին ու ժառանգութեան: Կարելի է, ի հարկէ, ուսումնասիրել, թէ ինչպէս իռլանտական կառավարութիւնը կ'իրագործէ այս նպատակները, սակայն կարեւոր ալ չէ, որ Հայաստանի քաղաքականութիւնը ընդօրինակէ իռլանտական, հրէական, հնդկական, լիբանանեան կամ այլ սփիւռքներու քաղաքականութիւնները:

### Ամփոփում

Սփիւռքի համեմատական ուսումնասիրութիւնները հայ սփիւռքի փորձառական հետազոտութիւններուն գուզահետ՝ հիմքեր կ'ապահովեն աւելի արդիւնաւէտ եւ ճկուն սփիւռքի քաղաքականութիւններ մշակելու համար: Աւելին, սփիւռքի նորացուած նախարարութեամբ եւ քաղաքականութեամբ յետյեղափոխական Հայաստանը կրնայ նաեւ հանդիսանալ պետութիւն-սփիւռք(ներ) յարաբերութիւններու ու նորարարական քաղաքականութիւններու արտահանող ու օրինակը: Վերը շարադրուած հեռանկարներն ունենալու տեսանկիւնէն սփիւռքի հետ նորարարական քաղաքականութիւններու մշակման այս պատմական հնարաւորութիւններու փուլին մէջ սփիւռքի հետ յարաբերութիւններու անկախ գերատեսչութիւն ունենալն առաւել քան կարեւոր է: Սակայն սփիւռքի նախարարութեան ռազմավարութեան, ծրագրային ու անձնակազմի վերանայումն ու բարելաւումն անհրաժեշտութիւն է:

Մեր համոզմամբ, սփիւռքը աշխարհաքաղաքական առումով Հայաստանի համար ռազմավարական նշանակութիւն ունի եւ կրնայ ունենալ, ինչպէս այլ երկիրներու համար իրենց բնական պաշարները: Եթէ ռազմավարական առումով, երկարաժամկէտ հեռանկարի մէջ, սփիւռքի ներուժի հզօրացումն ու հաւաքագրումը Հայաստանի համար նոյնքան կարեւոր է, որքան գիտութեան, բժշկութեան, տնտեսութեան զարգացումը, ապա սփիւռքի հետ յարաբերութիւնները նոյնպէս պէտք է ընդգրկուած ըլլան Հայաստանի ներքին քաղաքական կարեւորագոյն ոլորտներու շարքին: Սփիւռքի նախարարութեան գործունէութիւնը ժամանակի ընթացքին գերարդիւնաւէտ դարձնելով՝ հնարաւոր կ'ըլլայ սփիւռքի բազմազան համայնքներու, կազմակերպութիւններու եւ սփիւռքի ամենահեռացած եւ օտարուած շրջանակներուն հետ ուղղակի կապեր ստեղծել, եւ ժամանակի ընթացքին նպաստել սփիւռքի հզօրացման ու Հայաստանի ռազմավարական խնդիրներու լուծման նպատակով սփիւռքի ներուժի հաւաքագրման:





ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ  
ՄԱՂԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ  
ԵՐՉԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՏՕՔԹ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ





ՄԱՍԻՍ - 2019

# 2018 Տարուայ Գլխաւոր Իրադարձութիւնները Ս.Գ. Զնչակեան Կուսակցութեան Կեանքէն Ներս

Երեւանի Մէջ Նշուեցաւ ՍԴՀԿ 130-Ամեակը



Յունուարի 26-ին, Երեւանի «Մոսկովա» կինոսրահէն ներս տեղի ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 130-ամեակին եւ Հայաստանի կազմակերպութեան 11-րդ համագումարի բացման նուիրուած հանդիսութիւնը, որուն ներկայ էին մօտ 700 պատուիրակներ եւ հրաւիրեալներ, որոնց շարքին՝ ՄԴՀԿ Լիբանանի եւ Ֆրանսիայի վարիչ Մարմիններու անդամներ, ՌԱԿ-ի եւ ՀՅԴ-ի ներկայացուցիչներ, «Ելք» դաշինքի ներկայացուցիչներ, պատմաբաններ, մտաւորականներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան միջոցաւ սկիզբը ընթերցեց նախագահ Սերժ Սարգսեանի ուղերձը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աւագ միաբան, Տէր Ռական արքեպիսկոպոս Գալիփեան իր խօսքին մէջ շեշտեց, որ չէր կարող իր մասնակցութիւնը չբերել ՍԴՀԿ 130-ամեակին նուիրուած միջոցաւմանը, քանի որ այդպիսով կը դաւաճանէր իր հօրը:

ՍԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Ընկ. Նարեկ Գալստեան իր ելոյթին մէջ ընդգծեց, որ հայ ժողովուրդի անդաւաճան գաւազ, տասնեակ տարիներու ընթացքին իր լաւագոյն ընկերներուն հայրենիքի համար մղուող պայքարի գոհասեղանին նուիրած, մեր իրականութեան առաջին՝ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը բոլորեց 130-րդ տարին:

Միջոցաւման աւարտին ցուցադրուեցաւ կուսակցութեան 130-ամեայ ուղին ներկայացնող կարճ տեսաֆիլմ: Այնուհետեւ ելոյթ ունեցան «Արեգ» պարախումբը եւ յեղափոխական երգերով Յարութիւն Մուրատեանը:

## Նախագահի Թեկնածու Արմէն Սարգսեանի Այցելութիւնը Երեւանի Զնչակեան Կեդրոնը



Փետրուար 11-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական գրասենեակը այցելեց Հայաստանի նախագահի թեկնածու առաջադրուած Արմէն Սարգսեանու հանդիպում ունեցաւ կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներուն եւ Հայաստանի կառույցի վարչութեան հետ:

Շուրջ երկու ժամ տուած հանդիպման ժամանակ Հայաստանի Հնչակեան ղեկավարներուն Արմէն Սարգսեան ներկայացուց իր ծրագրերը, լսեց կարծիքներ եւ առաջարկներ՝ ներկայներուն կողմէ:

ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան անդամները Արմէն Սարգսեանին ուղղեցին իրենց յուզող բազմաթիւ հարցեր ու ստացան՝ պատասխաններ:

## ՍԴՀԿ Կենտրոնական Վարչութեան Ուղերձը Թուրքիոյ ԺԴԿ Զամագումարին

Փետրուարի 11-ին եւ 12-ին Անգարայի մէջ տեղի ունեցաւ Թուրքիոյ ընդդիմադիր ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան (ԺԴԿ) 3-րդ համագումարը, որուն մասնակցելու հրաւեր ստացած էր նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կենտրոնական վարչութիւնը:

ԺԴԿ-ի համագումարին յղուած իր ուղերձին մէջ ՍԴՀԿ կեդրոնական վարչութիւնը կը յայտնէր:

ՍԴՀԿ կենտրոնական վարչութեան եւ աշխարհասփիւռ Հնչակեան շարքի անունով ողջունում ենք «Ժողովուրդների Դեմոկրատական կուսակցութեան» 3-րդ համագումարը եւ մաղթում բեղուն ու արդիւնաւէտ

աշխատանք:

Արդարեւ, թէ՛ Միջին Արեւելքը եւ թէ՛ տարածաշրջանն ընդհանրապէս, շատ վտանգաւոր եւ ճակատագրական հանգրուանում են: Գերտէրութիւնների, շրջանային պետութիւնների ու ծայրալեզական խմբաւորումների քաղաքական, տնտեսական ու հատուածական շահերի բախման հետեւանքով տարածաշրջանը միւրճուած է վերջ չունեցող հակամարտութիւնների ու տագնապների շրջանակի մէջ:

Այսպիսի անօրինաչափ իրավիճակում է տեղի ունենում մեր բարեկամ ԺԴԿ-ի 3-րդ հերթական համագումարը: Մենք համոզուած ենք, որ համագումարի յաջողութիւնը մեծապէս կը կարողանայ նպաստել տարածաշրջանում խաղաղութեան եւ ազգերի միջեւ համերաշխութեան հաստատման գործին:

Հետեւաբար, եւս մէկ անգամ ողջունում եւ մեր գորակցութիւնն ենք յայտնում ձեզ, ինչպէս նաեւ վերահաստատում մեր կուսակցութիւնների միջեւ բարեկամութեան եւ համագործակցութեան շարունակականութիւնը:

## ՍԴՀԿ Ողջունեց Զայ-Թրքական Արձանագրութիւնները Զեղեալ Յայտարարելու Որոշումը

Մարտ 2-ին հրապարակուած յայտարարութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կենտրոնական վարչութիւնն իր գոհունակութիւնը յայտնեց հայ-թրքական յարաբերութիւններու «կարգաւորման» մասին արձանագրութիւնը չեղեալ յայտարարելու Հայաստանի իշխանութիւններու որոշմը:

«Հնչակեան կուսակցութիւնն առաջին իսկ օրից վճռական դէմ է արտայայտել նման արձանագրութիւնների վաւերացմանը՝ հաշուի առնելով Թուրքիայի պետական-քաղաքական շրջանակների վերաբերմունքը Հայոց ցեղասպանութեան եւ Արցախի խնդրի կարգաւորման հարցերում:

Մենք համոզուած ենք, որ Հայաստանի Հանրապետութեան կենսական շահերից է բխում բաց սահմաններն ու կանխատեսելի հարեւանները, սակայն պաշտօնական Անկարայի ժխտողական պահուածքն ու տարիների հակահայ գործունէութիւնը եւս մէկ անգամ ապացուցում է այն առանց այդ էլ ակնառու փաստը, որ Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման բանալին այդ երկրի քաղաքական վերնախաւի՝ Հայաստանի եւ հայութեան նկատմամբ իրենցունեցած ատելութեան աստիճանի հասնող վերաբերմունքի արմատական փոփոխութիւնն է:

«Այս փաստաթղթի՝ Թուրքիայի կողմից անտեսելու եւ այն հետագայում Արցախի խնդրում Հայաստանի վրայ իբրեւ ճնշում գործադրելու փորձերը դրա վառ ապացույցն են: Վստահ ենք, որ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ցանկացած փաստաթուղթ պէտք է դրուի աւելի լայն քննարկման՝ հաշուի առնելով թէ՛ Հայաստանի, եւ թէ՛ Սփիւռքի կազմակերպուած կառույցների մօտեցումներն ու դիրքորոշումները:

«Հնչակեան կուսակցութիւնը շարունակելու է իր աշխատանքը Թուրքիայի առաջադէմ շրջանակների հետ՝ Հայկական Հարցին հնչեղութիւն տալու, ինչպէս նաեւ Թուրքական հանրութեանն իրենց իսկ պատմութեան հետ ծանօթացնելու համար», մասնաւորապէս ըստած էր ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան յայտարարութեան մէջ:

## ՍԴՀԿ Պատմութեան Գիրքը Լոյս Տեսաւ Սպանիոյում



Արժանի ժինի մայրաքաղաք Պուէնոս Այրեսի մէջ տեղի ունեցաւ Իրաւաբան Տանթէ Ասիլեանի՝ ՍԴ Հնչակեան կուսակցութեան Սպանիոյ լեզուով Գիրքի ներկայացումը:

«Մէկ ժողովուրդ Մէկ կուսակցութիւն» անունը կրող եւ ՍԴՀԿ 130-ամեակին նուիրուած, միջազգային իրաւունքի մասնագէտ եւ փաստաբան Ընկ. Տանթէ Ասիլեանի գիրքի ներկայացումն ընթացքին օրուայ հանդիսավար՝ փրոֆ. Մարի Էպիֆանի կարգաց ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Համբիկ Սարաֆեանի գնահատանքի նամակը:

Գիրքի բովանդակութեան մասին զեկույցներով հանդէս եկան մասնագէտներ՝ Մարիա Դերսիպաճեան եւ Փաղրիսիո Արսենսիո Վիլես, կարեւորելով ՍԴՀԿ դերը հայոց ցեղասպանութեան կանխարգելման գործին մէջ:

Ելոյթ ունեցողները ընդգծեցին ՍԴՀԿ աննկուն կամքը պայքարելու նախ Սուլթանի եւ ապա Երիտասարդ Թուրքերու իշխանութեան դէմ:

Խօսք առաւ ՍԴՀԿ Արժանիքների վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Տոքթ. Գարլոս Դարփիլեան, բարձր գնահատելով գիրքի հեղինակ ընկ. Տանթէ Ասիլեանի մտաւորական արժանիքները եւ մայր հայրենիքէն հեռու,



# 2018 Տարուայ Գլխաւոր Իրադարձութիւնները Ս.Դ. Յնչակեան Կուսակցութեան Կեանքէն Ներս

տասնամեակներու իր նուիրումը մեր գաղափարական ինքնութեան պահպանման գործին:

## ՍԴՀԿ Ողջունեց Յեղափոխութեան Յաղթանակը

Մայիս 8-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը շնորհաւորական գիր յղեց Նիկոլ Փաշինեանին անոր վարչապետ ընտրութեան եւ ժողովրդային յեղափոխութեան յաղթանակին առթիւ:

«Համայն Հնչակեան ընտանիքին անուշով կու գանք ձեզ սրտանց շնորհաւորելու՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի բարձր ու պատասխանատու պաշտօնին ընտրուելու բարեբաստիկ առիթով:

«Համաժողովրդական շարժման յաղթանակը անտարակոյս կը պարտինք Ձեր անկողորմ կամքին ու անսահման լաւատեսութեան, որ համակեց ամբողջ հայութիւնը ու նամանաւանդ երիտասարդութիւնը, յոյս ու հաւատքը ներշնչելով հայրենիքի պայծառ ապագայի նկատմամբ:

Անշուշտ գիտակից ենք այն իրականութեան, որ տարիներով կուտակուած խնդիրներն ու մարտահրաւէրները մէկ օրէն միւսը չեն կրնար լուծուիլ, այլ կը պահանջեն հաստատակամութիւն, համբերութիւն եւ յարատեւութիւն: Մակայն վստահ ենք, որ այն ջանքն ու եռանդը, որ ներդրեցիք համաժողովրդական շարժման մէջ պիտի այժմ ծառայեցնէք ի խնդիր վաղուայ իսկապէ՛ս ազատ, անկախ ու ժողովրդավար Հայաստանի կերտման», ըստած էր ՍԴՀԿ Կեդրոնական վարչութիւնը շնորհաւորական գրութեան մէջ:

## Նիկոլ Փաշինեան Ընդունեց Ս.Դ. Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան Պատուիրակութիւնը



վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը Նոյեմբերի 6-ին ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամները՝ ատենապետ Համբիկ Սարաֆեանի գլխաւորութեամբ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստան-Սփիւռք կապերուն, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղի ունեցող քաղաքական փոփոխութիւններուն առնչուող հարցեր:

Նիկոլ Փաշինեանը կարեւորեց ՍԴՀԿ դերը հայապահպանութեան, Հայաստան-Սփիւռք համագործակցութեան եւ ամրապնդման գործին մէջ եւ յոյս յայտնեց, որ ներհայաստանեան քաղաքական իրադարձութիւնները նոր ազդակ կը հաղորդեն Սփիւռքի եւ սփիւռքահայ քաղաքական կառույցներու հետ յարաբերութիւններուն:

ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան ատենապետը ողջունեց Հայաստանի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները եւ շեշտեց, որ ՍԴՀԿ-ն անվերապահ կ'աջակցի Նիկոլ Փաշինեանին՝ ժողովրդավարական, իրաւական պետութեան կառուցման, տնտեսութեան զարգացման եւ բարեփոխումներու իրականացման գործին մէջ:

Ձրուցակիցները անդրադարձան Հայաստան-Սփիւռք կապերու յետագայ սերտացման հարցին:

## ՍԴՀԿ Պատուիրակութեան Հանդիպումը Արցախի Նախագահ Բակո Սահակեանի Հետ



Նոյեմբեր 19-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը՝ գլխաւորութեամբ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեանի հանդիպում ունեցաւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի հետ, որ Լոս Անճելըս ժամանած էր մասնակցելու համար «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնին:

Նախագահ Սահակեան կարեւոր նկատեց հայկական բոլոր կազմակերպութիւններու աջակցութիւնը Հիմնադրամի աշխատանքներուն, որպէսզի ան կարողանայ իրագործել իր բոլոր ծրագիրները:

Այս առթիւ նախագահը գնահատեց Հնչակեան Կուսակցութեան անշեղ կեցուածքը Հիմնադրամին սատարելու ուղղութեամբ:

Նախագահ Սահակեան նաեւ անդրադարձաւ համահայկական խորհուրդ մը ստեղծելու շուրջ անցեալին եղած քննարկումներուն, նման բարձրագոյն մարմինի մը ստեղծումը նկատելով խիստ կարեւոր քայլ՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն սատարելու ուղղութեամբ:

Ընկ. Սարաֆեան իր շնորհակալութեան խօսքին մէջ վերահաստատեց Կուսակցութեան անշեղ կեցուածքը՝ մեր գոյգ հանրապետութիւններուն եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին զօրակցելու ուղղութեամբ, անկախ թէ Հայաստանի օրուայ իշխանութիւններուն նկատմամբ ինչպիսի դիրքորոշում ունեցած ըլլանք:

ՍԴՀԿ պատուիրակութեան մաս կը կազմէին Կեդրոնական վարչութեան եւ արեւմտեան Ամերիկայի վարիչ մարմինի անդամներ:

## Հնչակեան Կուսակցութեան Յայտարարութիւնը Հայաստանի Խորհրդարանական Ընտրութիւններուն Առթիւ

Դեկտեմբեր 9-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած Արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութիւնը հրանդէս եկաւ շնորհաւորական յայտարարութեամբ մը, ուր մասնաւորաբար ըստած էր.

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական վարչութիւնը շնորհաւորում է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին՝ արդար, ազատ ու թափանցիկ արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների կապակցութեամբ:

«Անկախ արդիւնքներից, այս ընտրութիւնը յաղթանակ է ոչ միայն Հայաստանի քաղաքացիների այլ համայն հայութեան համար: Տասնեակ

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԿԱՐԻՆԷ  
ԳՈՃԱՊԱՊԵԱՆ**





**ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ  
 ՄԱԳԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ  
 ԵՐՉԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵԲԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

**VREJ PASTRY**

**PASADENA  
 626-797-2331**

**GLENDORA  
 626-914-1940**

**GRANADA HILLS  
 818-366-2526**



# Հայկական Կաղանդը՝ Սիրելի եւ Օրինակելի

ԱՆՈՒՇ ԹՐՎԱՆՑ  
Յատուկ «Մասիսին»

Քաղցրաբլիթէ տնակներ, փուլանսեթթիա ծաղիկներ, Կաղանդի պատկերներով դարչնագոյն, կարծր բլիթներ՝ գունազեղ գարդարանքով, Լեփլենտ յիշեցնող փոքրիկ վայրեր, էլֆեր եւ Սանթա Քլաուզներ, նոյնիսկ՝ Միսս Քլաուզ, Սանթայի եղջերուներ: Ինչպէս հասկացաք՝ Կաղանդի ողջ արեւմտեան բնաշխարհը՝ իր խորհրդանիշներով հայերը փորձում են վերականգնել Հայաստանի մէջ: Մեծ ձգտում կայ դէպի արեւմտեան մշակույթի խորհրդաբանութիւնը, ինչը, չգիտես ինչու շատ սիրելի է հայերին, մանաւանդ նոր սերունդը արագօրէն եւ դիւրութեամբ է ընկալում օտար եւ արտասահմանեան մշակույթը: Բայց զարմանալի չէ, քանի որ այդպէս է ոչ միայն Կաղանդի տօնին, այլեւ՝ շատ այլ առիթների դէպքում: Յանկարծ տեսնում ես, որ հայկական աւանդական խորհրդանիշների, հերոսների, նրանց սովորույթների փոխարեն ի յայտ է գալիս եւրոպական, ամերիկեան կամ կանադական մի կերպար՝ իր օտար անունով ներխուժելով հայկական իրականութիւն: Ի հարկէ, արտասահմանի հետ կապը մեծացել է, սահմանները բացուել են, մարդիկ յաճախ են ձամբորդում զանազան երկրներ, միւս կողմից էլ Հայաստանը զբօսաշրջիկների պակաս չունի եւ մշակույթների եւ մշակութային տարրերի աշխոյժ հոսք կայ: Սրահներ կան, որոնց մէջ զարդարուած եւ վաճառուող տօնածառների վրայ ինչ օտար խորհրդանիշ ասես չես գտնի, բացի հայկական բովանդակութիւն ունեցող պատկերից: Ամէն ինչ վառ է ու փայլալուս Երեւանի առեւտրի կեդրոններում, շուկայական գրաւչութիւն կայ ամէն ինչի վրայ, եւ հայկականը մի տեսակ մի կողմ քաշուած, մի անկիւնի մէջ հագրւ փորձում է պահել իր գոյութիւնը: Այս դէպքերում սիրելի են դառնում բոլոր այն մարդիկ, եւ բոլոր այն վայրերը, որոնք հայկական խորհրդանիշը, ազգային նախը, աւանդական ծէսը պահելու եւ փոխանցելու մեծ ճիգեր են գործադրում: Օտար աւանդույթների ներխուժմանը գուգահեռ, իսկապէս, կայ աւանդական վերականգնելու ձգտում եւս, բայց՝ քչաթիւ են այդ մարդիկ, որոնք ջանքեր են գործադրում՝ մերը չկորցնելու գործում: Ազ-



գագրագէտներ, պատմաբաններ, մշակութային գործիչներ, պարզապէս իրենց արմատներին կառչած մարդիկ կարծես հեռակալ ձեռով համախմբում եւ փորձում են անցեալից պատուիրներ գտնել, յիշեցնել, վերականգնել եւ տարածել: Վերջին տարիներին յաճախ են յիշեցնում, թէ ինչպէս են հայերը հնում դիմաւորել Նոր տարին: Կաղանդի գլխաւոր խորհրդանիշ տօնածառը, որ այսօր բազմաթիւ երկրներում գրեթէ միատեսակ է զարդարում, գոյութիւն է ունեցել նաեւ հին Հայաստանում: Սակայն հայերը տարբեր ձեռով են զարդարել Կաղանդի գեղեցկուհին: Օրինակ՝ Պոնտոսում հին հայերը Կաղանդի երեկոյան զարդարել են ձիթենիից կտրուած մի հաստ ճիւղ եւ այն կոչել են «Կաղանդ Մառ»: Եղել են հայաբնակ վայրեր, ուր տօնական ծառը պատրաստել են ցորենի հասկերի խրճերից՝ այդպիսով արտայայտելով պաշտամունքը ցորենի, հացի հանդէպ: Հայերը նաեւ նուան ծառ են զարդարել եւ առհասարակ, ծառի, բնութեան պաշտամունքը հայոց մէջ եղել է շատ հին ժամանակներից եւ առնչուել է կեանքի յաւերժութեան գաղափարի հետ: Կենաց ծառի գաղափարը հայ իրականութեան մէջ նախաքրիստոնէական շրջանից է սկիզբ առել, բայց արդէն քրիստոնէական շրջանում էլ հայերը ծառի պաշտամունք են ունեցել, որ յատկապէս դրսեւորուել է Մաղկազարդի, խաղողօրհնէքի եւ Կաղանդի տօնածառը զարդարելու ժամանակ: Հին հայերը Մառերից հիմնականում կախում էին հմայիլներ, սխտոր, խնձոր: Կախել են նաեւ զաթայ, տարեհաց, որոնց մէջ ուլունք, կոճակ կամ մետա-

ղաղրամ էին դնում: Եւ ով որ գտնէր այն, ըստ հաւատալիքի, Նոր տարուայ ընթացքին բախտաւոր էր լինելու: Հայերը սովորութիւն են ունեցել նաեւ Կաղանդից առաջ իրենց տները զարդարել չար աչքերից պահպանող իրերով, յաջողութիւն բերող փայտէ եւ ձեռագործ աշխատանքներով: Հայկա-



կան տօնական իրերի մէջ մեծ տեղ է ունեցել աւանդական դաղդղանը՝ հմայիլը: Դաղդղանը նոր տարուայ օրը կախել են տան պատից, ընտանի կենդանիների պարանոցից, մարդկանց վզից, որպէսզի պաշտպանուեն չար աչքերից եւ անյաջողութիւններից: Երեւանում այսօր էլ, ժողովրդական վարպետներ կան, որոնք դաղդղաններ են պատրաստում եւ նոր սերնդին սովորեցնում այդ հմայիլի պատրաստման եւ կիրառման ձեւերը: Չնայած հաւատալիքները փոխուել են, եւ մարդը մոռաք է գործել համակարգչի եւ համացանցի անծայրածիր աշխարհ, բայց նրա դէմքին ժպիտ է յայտնուում եւ հոգում խաղաղութիւն է տիրում, երբ անցեալից մի պատուիր, պատմութիւնից մի յուշ անպայման արթնաց-

նում եւ փորձում է կիրառել: Այսօրուայ մարդը խաղաղուելու, իր ներսը եւ իր անցեալը նայելու խիստ կարիք ունի: Իսկ ամենախաղաղեցնողը, Նոր տարուայ եւ Սուրբ Ծննդեան գիշերը, անշուշտ եկեղեցու զանգերն են, որոնք աշխարհով մէկ ղողանջում են տօնական օրերին եւ հայկական եկեղեցու կամարների ներքոյ են համախմբում հայերին:

**Եկեղեցին, Իբրեւ Խաղաղութեան Վայր**  
Վերջին տարիներին Հայաստանում կարծես միտում կայ Կաղանդի գիշերը եկեղեցի այցելել: Քիչ է դեռ եւս այդպիսի մարդկանց թիւը, բայց Կաղանդի գիշերը տեղի ունեցող պատարագը եւ նուսորհնէքը կարծես գրաւիչ եւ հետաքրքրական են թւում որոշ մարդկանց, քան՝ ճոխ սեղանների շուրջ անվերջ կենացները եւ այցելող հիւրերը: Արդէն հինգերորդ տարին է, որ հայոց բոլոր եկեղեցիներում Տարեմուտի գիշերը Գոհարանական մաղթանքի աւարտին կատարուած է նուան օրհնութեան կարգ՝ նուսորհնէք: Ամէն տարի աւելի ու աւելի շատ մարդիկ են այդ գիշերն այցելում եկեղեցիներ, որպէսզի նուսորհնէքից յետոյ օրհնուած նուռ տանեն իրենց տուն, դնեն սեղանին եւ օրհնուած պտուղով սկսեն տարին: Այս արարողութիւնը մեր իրականութեան մէջ նոր է, բայց նուազ իբրեւ խորհրդանիշ, շատ հարուստ եւ հին պատմութիւն ունի: Դեռեւս վաղուց նուռն արեւելեան ժողովուրդների մօտ համարուել է բոլոր պտուղների արքան՝ ոչ միայն նրա՝ քիմքին հաճելի համի, բուժիչ յատկութիւններու, այլեւ նուան գլխի մասում գտնուող «թագի» պատճառով: Տեսակետ կայ, որ արքայական թագի նախատիպը հնում վերցրել են նուան «թագից»: Նուազ վաղնջական ժամանակներից ի վեր ունեցել է նաեւ առանձնայատուկ ու հարուստ խորհրդաբանութիւն: Այս մէկը մեծապէս պայմանաւորուած է եղել նուան գունային երանգներով, իւրօրինակ ծաւալաձեւով, բազմաճատիկների «ճարտարապետական» կառուցուածքով ու միասնականութեամբ: Թէ՛ հին դիցարանում, թէ՛ այլ կրօններում նուռն ունեցել է եւ ունի բազմաթիւ խորհրդանիշներ: Քրիստոնէութեան մէջ եւս



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ  
ՊՈՅԱՄԵԱՆ**



# Հայկական Կաղանդը՝ Սիրելի եւ Օրինակելի



նուան խորհրդանիշը բաւականին տարողունակ է. մեկնաբանում են, որ այն մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի խորհրդապատկերն է՝ իր՝ գաւաթում յեղուած արեամբ, իսկ կերպարուեստում, երբ պատկերել են Տիրոջը՝ նուով, արտայայտել են Քրիստոսի յարուսթեան գաղափարը: Նուաը խորհրդանշում է աստուածային շնորհների բազմազանութիւնը, եկեղեցին՝ իր բազմաթիւ հոտով:

Շատ ժողովուրդներ են կիրառել նուաը իրենց արուեստներում, կենցաղում, ժողովրդական բժշկութեան մէջ եւ այլ ասպարէզներում, բայց մենք՝ հայերս, սիրում ենք ասել, որ նուաը հայկական պտուղ է եւ իր գոյնով, իմաստով եւ այլ պատկերաբանութեամբ հայկական խորհուրդ ունի իր մէջ:

Նուաը, եւ՛ իր խորհրդանշական իմաստով, եւ՛ որպէս ազգային զարդատարր, լայն տարածում է ունեցել հայկական ճարտարապետութեան, գորգագործութեան, կիրառական արուեստի մնացեալ տեսակների եւ մանրանկարչութեան մէջ: Գրիգոր Խլաթեցու, Թորոս Տարոնացու, Թորոս Ռոսլինի նկարագրողած, Հաղբատի եւ այլ Աւետարաններում կարելի է հանդիպել նուան առատ պատկերների: Հայ եկեղեցու խորանների մեկնութիւններում նունները մեկնում են իբրեւ մարգարէների խօսքը, որոնք առակի նման, իրենց հաստ ու դառը կեղեկով ծածկում էին քաղցրութեան Աւետիսը, անմահութեան պտուղը՝ Քրիստոսին:

Ըստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների եւ արխիւի տնօրէն Տէր Ասողիկ քահանայ Կարապետեանի բացատրութեան՝ նուն-

նու կեղեկի մէջ պարփակուած կարմրագոյն պտուղը Սբ. Աւետարանն է, որն իր քաղցրութեամբ՝ աստուածային սիրով, գոհաբերութեամբ ու շնորհներով պարգեւել է փրկութիւն եւ հաւիտենական կեանք:

Հայ եկեղեցու հայրերը մեկնաբանում են, որ նուան իր հոգեւոր խորհրդաբանութեամբ նաեւ ներկայացնում է մարդու երկրաւոր ու երկնային կեանքը. դառը կեղեկն իր վեցաթերթ թագապսակով խորհրդանշում է երկրաւոր կեանքը, որը պէտք է պսակուած լինի աստուածային երեք շնորհների՝ հաւատքի, յոյսի, սիրոյ թագով, որոնք համապատասխանաբար առնչուում են Ամենասուրբ Երրորդութեան երեք Անձերին՝ Հօրը (հաւատք), Որդուն (յոյս) եւ Սուրբ Հոգուն (սէր): Իսկ նուան կարմրագոյն պտուղը խորհրդանշում է առաքիւնական գործերով (հատիկներ) զարդարուած անձի յաղթանակը՝ աստուածացումը (կարմիր գոյն) եւ Երկնքի արքայութեան անճառելի քաղցրութիւնը: Մեր եկեղեցու հայրերը հաւատացնում են, որ այդ աստուածային շնորհների ներգործութեամբ է, որ մարդը յաղթահարում է երկրաւոր կեանքի դառնութիւնը՝ փորձութիւններն ու նեղութիւնները եւ յաջողութեամբ պսակում հաւատքի բարի պատերազմը՝ մուտք գործելով Երկնքի Արքայութիւն. «Պատերազմեցի բարի պատերազմը, աւարտեցի ընթացքս, պահեցի հաւատքը:

Կաղանդի գիշերը հայոց եկեղեցիներին նուա է ուղարկուած նաեւ Արցախի եւ դա շատ գեղեցիկ անանդոյթ է՝ հայաստանեան հրաշք նուան հետ նաեւ Արցախի նուան է օրհնում՝ իբրեւ երկու պետու-

թիւններու միասնութեան նշան:

## Այբուբենը, Իբրեւ Կաղանդի Ծառի Ձարդ


Վերջին տարիներին Հայաստան եկած սուրիահայերը մշակութային բազմազանութիւն են բերել հայաստանեան իրականութիւն: Ուտեստէղենի, ձեռագործ իրերի, արեւմտահայկական մշակոյթի շերտերը կամաց-կամաց սիրելի են դառնում հայաստանցիներին: Այս օրերին երեւանեան ճաշարանների մէջ իրենց ուրոյն տեղն ունեն նաեւ սուրիահայերի ճաշարաններն իրենց կաղանդի ուտեստեղենով եւ կաղանդի գիշերուայ խրախճանքներով: Ճիշդ է, որ կաղանդի գիշերը այդ ձեռնարկներին դեռեւս միայն սուրիահայերը կամ ուրիշ երկրներից եկած հայրենադարձներ են մասնակցում, բայց հայաստանցիներն էլ անտարբեր չեն սուրիահայերի կենսակերպի հանդէպ: Նախատօնական ցուցահանդէսներին բազմաթիւ հայաստանցիներ են այցելում եւ գնում սուրիահայերի

տին, որ հայոց տառերի ստեղծումն էր: Հարիւրաւոր տարիներ առաջ գոյութիւն ունեցած պետութիւններ են կործանուել, պատմութիւնը հազարամէկ վայրիվերում է ունեցել, բայց հայոց գիրը անսասան է մնացել եւ հասել մեր օրերը, իբրեւ ազգի գոյութեան հիմնական



երաշխիք, իբրեւ մեր ինքնութեան զարդ: Ուրեմն, այսօր, օտար արժէքներից առաջ մենք մեր հրաշափառ այբուբենն է, որ պէտք է գուրգուրանք եւ փափայլենք, իսկ տօնական ծառի վրայ նրաչ ամէն մէկ գիրը իբրեւ զարդ, պարգապէս հրաշալի գաղափար է:

Մարալ Շէօհմէլեան-Պէրպէրեանը արեւմտահայի արիւնը կրող այն կանանցից է, ում շնորհիւ Հայաստանում վերականգնուած եւ տարածուած են հայկական ասեղնագործութեան մոռացուած աւանդոյթները: Նա ոչ միայն Մարաշի, այլեւ Այնթապի, Վանի, Ուրֆայի եւ հայկական յայտնի ասեղնակարերի գաղտնիքներն է սովորեցնում նաեւ հայաստանցի կանանց: Ցուցահանդէսներին միշտ կարելի է տեսնել Մարալի ձեռքի անկրկնելի աշխատանքները՝ մէկը միւսից ինքնատիպ: Նրա պատրաստած կաղանդի ծառը՝ հնագոյն թաղիքի վերամշակմամբ եւ տառերի հրաշագործ ստեղծմամբ արուեստի գլուխգործոց կարելի է համարել: Հայոց տառերը իր վրայ կրող կաղանդի ծառով էլ մաղթենք, որ Նոր տարին բարեբեր լինի հայոց համար՝ Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում, եւ հայը, կառչած իր արմատներին, կարողանայ յաղթահարել իր առջեւ կանգնած բոլոր մարտահրաւէրները եւ սերունդների երթը ապահովի հայոց գիր ու բանով:



պատրաստած ձեռագործ աշխատանքները, ուտելիքները, Մարաշի, Այնթապի ասեղնագործութեամբ գործուած ծածկոցները, ափսէների տակդիրները: Այս տարի Հայաստանում հաստատուած սուրիահայ Մարալ Շէօհմէլեան-Պէրպէրեանը հայոց այբուբենի տառերով Մարաշի ասեղնագործութիւն է կատարել կաղանդի ծառի խաղալիքների վրայ եւ ամբողջ մի ծառ զարդարել է այդ գեղեցիկ աշխատանքներով: Սա Հայաստանի մէջ, թերեւս այս տարուայ ամենագեղեցիկ եւ ամենաինքնատիպ տօնածառն է: Հայոց տառերի փառաբանումը՝ տօնական այս օրերին մէկ անգամ եւս մեր հայեացքն ուղղում է մեր պատմութեանը, մեծ Գիւ-

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԽԱՉԻԿ ԵՒ ԺԵՆԻԱ  
ՔԷՇԻՇԵԱՆ**



# Հայերի Ընկոյզարշաւը Լոս Անջելեսում՝

(Մի քիչ խնդուք՝ ամանորից առաջ)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Հայերէն ընկոյզ, պոպոկ, կա- կալ. ձղրպուր (այս վերջինը տա- րածուած է դարաբաղցիների մօտ) եւ այլ բազմաթիւ հոմանիշներով յայտնի մրգի անուանների մէջ ամե- նատարածուածը Պոպոկ անուա- նումն է: Թէեւ, Ընկոյզ ասելու դէպքում էլ ամէն մի հայ կը հասկանայ, որ խօսքը Պոպոկի մա- սին է:

Մենք՝ հայերս գերազանցօրէն տիրապետում ենք ընկոյզ օգտա- գործելու արուեստին: Դարեր շա- րունակ հայերն ընկոյզը օգտագոր- ծել են բազմատեսակ խմորեղէննե- րի, կարկանդակների, շոկոլադնե- րի (թուրմ), հալվաչի մէջ: Հապա ի՞նչ կ'ասէք Պոպոկի մուրաբաչի եւ աննման Շարոցի (սուճուխ) մա- սին:

- էլ ի՞նչ Նոր Տարի առանց Պոպոկի եւ Շարոցի...

Այդ համեղ ու անդարար չոր մրգի «Ընկոյզարշաւը» Լոս Անջե- լէսի հայութեան շրջանում սկսւում է խանութներում յայտնուելու առա- ջին իսկ օրուանից եւ տեւում է 2- 3 ամիս՝ մինչեւ գալիք Նոր Տարի: Եւ հայերն այն առատօրէն գնում են ոչ այնքան իրենց ընտանիքների համար, որքան Հայաստանում թո- դած իրենց հարազատներին:

Հիմա գանք «ընկոյզացաւով» մտահոգ մեր հերոսներին:

Հոլիվուդի Ջոնս (Jones) խա- նութի մերձակայ փողոցներից մէ- կի նորավարտ շէնքի առաջին հար- կի մէկ ննջասենեականոց բնակա- րանում իսկական տօնախմբութիւն է: Միրիահայ Մանուկ Սիմսիրեանն ու իր կիրը՝ տիկին Մաքրուհին, կառավարութեան դրամական օգ- նութեամբ (Section 8) նոր բնակա- րան են ստացել: Երեք արու գա- ւակների եւ ութ թոռների տէր են գրեթէ 50 տարուայ ամուսնական ճանապարհ անցած ամուսինները: Ժամ, պատարագի նաչող չկայ, շնորհակարան եւ բարի մաղ- թանքներով աւլի հեռախօսային զանգերը գալիս են աշխարհի տար- բեր միջօրէականներից՝ անդադ- րում ուրախութեան, խնդուքի, յի- շողութիւնների հաճելի միջոցորտ ստեղծելով լաւագոյնս կահաւոր- ուած սենեակում:

Վարպետ Մանուկը Հայաստան հր ներգաղթել Միրիայից 1960- ականների վերջերին: Քսան տարի Հայաստանում ապրելուց յետոյ, կնոջ հետ միասին եկել, հաստատ-



ուել էր Լոս Անջելէս, այն մտադ- րութեամբ, որ հետագայում էլ մէկիկ-մէկիկ իր շուրջը կը հաւա- քի երեք տղաների ընտանիքներին: Հանգամանքներն այնպէս դա- սաւորուեցին, որ նա կարողացաւ միայն փոքր տղայի ընտանիքին բերել «Լոս Արմէնոս»: Միջնեկը գնաց Ֆրանսիա (աղջիկն այնտեղ էր սովորում), իսկ աւագ որդին, ահա 20 տարի է չի կարողանում ծնողներին միանալ:

Խնջոքից յետոյ, առաւօտ կա- նուխ, երբ արեւը նոր էր բարձրա- նում հորիզոնի վրայ, վարպետ Մանուկը լողարանից ձայն տուեց կնոջը.

- Մաքրուհի՛... Մաքրուհի՛, - պատասխան չկայ: Յաջորդ անգա- մին՝ Մաքրուհի-Սրբուհի՛...

- Խենթեցա՞ր մարդ Աստու- ծոյ, ինչո՞ւ կը պոռաս, հիմա ի՞նչ պիտի մտածեն դրացիները...

- Ինչ կ'ուզեն թող մտածեն..., արքայութիւն է պէ՛տ ասանկ լո- գանք առնելը, հայդէ՛, դուռն ալ ջուր մը ցանէ վրադ...

- Ես ստոր ժամանակը ու- նի՞մ: Այսօր շատ հիւր կ'ունե- նանք: Ո՞ւրկէ շինեցիր սա Մաք- րուհի-Սրբուհին, չե՞ս ամչընար: Բնաւ չես օգտագործած այդ անու- նը:

- Ինչո՞ւ ամչնամ անուշիկս, նենէիդ անունը Սրբուհի չէ՞ր...

- էրկար ըրիր պարոնս..., հայդէ՛, դուրս ելի՛ր, առ սվոնք, չիւբնած, ամօթ է ամօթ, տարիքէդ ամչցիր, - այս ասելով Մաքրուհին ամուսնու վրայ նետեց նրա սպոր- տային ներքնաշորերը՝ բաղնիքի մէջտեղում մօրից մերկ կանգնած յախթանդամ տղամարդուն:

- Ինչո՞ւ պիտի ամչնամ կնիկ, հոս մեզմէ գատ մէկը չիկա, յետոյ, ի՞նչ է, առաջին անգա՞մ է, որ

ինծի ասանկ կը տեսնաս...

- Մի էրկարեր անամօթ մարդ, ինչո՞ւ երեկ զիշեր տղայիդ չախե- ցիր ամչնուն առջեւ, ինչ է թէ, քանի մը գաւաթ աւելի խմեր է:

- Քանի մը գաւաթ էր Մաք- րուհի, շատ էր: Կը յիշե՞ս, Հայաս- տան երգ մը կար, Յովհաննէս Բաղալեանը կ'երգէր, հիմա կ'եր- գեմ՝ դուռն ալ մտիկ ըրէ, - ոգեւոր- ուած իր յայտնագործութիւնից, առանց սպասելու կնոջ հրամանին, իր յուժկու բամբ ձայնով սկսեց երգել՝ «Մի հատը լաւ է, երկրոր- դը բաւ է, բայց լաւ իմացիր՝ երրորդը ցաւ է...»:

Մի քանի վայրկեան երգել- պարելուց յետոյ մեր Մանուկ աղան փլուեց բազմոցին:

- Ձգէ բէ՛, ձգէ կնիկս քիչ մը գուարճանանք: Այսօր տօն է մեզի համար: Քանի տարի սպասեցինք այս օրուան:

- Քեզի ո՞վ արգիւց, որ գուարճանաս, քանի անգամ ըսած եմ քեզի, որ չ'երգես, դուռն ականջ չունիս, դուռն միայն խօսէ, մի՛ երգեր: Պատիկ դիտողութիւն մը ըրի տղուդ վերաբերեալ՝ երգով- պարով պատասխանեցիր: Ի՞նչ եղեր է որ, ինքը խմեց՝ կնիկը կը քշէ օթոն: Հոս բոլոր կիներն ալ օթօ կը վարեն: Բան մը չըսես, խօսք չեմ ուզեր, հագուէ եւ խոհանոց եկուր, սուրճը զագօծախին վրան է, խմենք եւ Ջոնս մարքետ երթանք, գնում- ներ ունիմ ընելիք, այսօր ալ շատ եկող-գացող կըլլայ:

Հագիւ էր վարպետ Մանուկը սուրճի առաջին կումն առել, երբ նկատեց սեղանի անկիւնում դրուած թրքական արտադրութեան հալ- վայի դեռեւս չբացուած տուփը.

- Աս հելվէն ո՞ւրտեղէն մէջ- տեղ ելաւ կնիկ..., ես քանի՞ անգամ ըսած եմ, որ թրքական ապրանք

այս տունը պիտի չմտնայ, վերցուր սեղանին վրայէն, ո՞վ բերաւ, ըսէ նայիմ...

- Պոլսահայ Մանսիկը բերաւ, - վախուորած հայեացքով, աչքերը հեռացնելով ամուսնուց ասաց Մաք- րուհին եւ շարունակեց, - քանի մը շաբաթ առաջ Պոլիս գացած էր, անկէ բերած է:

- Ինչ որ է, մէկու մը նուէր տուր, թէեւ ես ալ խենթ կըլլամ հելվէյին համար, համա շաքարս համը կը հանէ կոր: Քիչ առաջ Ջոնս պիտի երթանք ըսիր: Դուռն ալ խանութին այս շաբթուան թերթը նայեցա՞ր, ի՞նչ աժանցած ապրանքներ կան: Թերթը տուր, անգամ մը աչքի անցունեմ:

Շաբաթաթերթը բացելուն պէս, հենց առաջին էջի վերին աջ անկիւնում աչքին ընկաւ Walnuts (Ընկոյզ) - \$ 0.99 ազդը.

- Կնի՛կ, շուտ ըրէ, սա ակնոցս գտիր, չեմ հաւատար..., ընկոյզ՝ եւ փառնդը իննիսունինը սե՞նթ, - անհաւատալի բան մըն է, թէրեւս 99-ին առջեւի մէկ թիւը մոռցած են դնել... շո՛ւտ, շուտ գտիր ակնոցս:

- Առ, սա գրողին տարած ակնոցը: Ապրանքիդ տէր եղիր:

- Ձէ, իրաւ է կնիկ, յստակ գրուած է՝ Walnuts (Ընկոյզ) - \$0.99, - մի քանի անգամ ազդը նայելուց յետոյ բարձրաձայնեց Մա- նուկը:

Սիմսիրեան ամուսինները մի քանի վայրկեան անց իրենց 12 տարուայ կամրի մեքենայով հա- սան Ջոնս խանութ.

- Աս ի՞նչ բան է կնի՛կ, առտու կանուխ, բայ ժամուն, եւ օթոն կեցնելիք տեղ չիկայ:

- Կեցիր, ես իջնամ, դուռն քովի փողոցը փարք ըրէ եւ եկուր:

Երբ մի 10-15 վայրկեան անց Մանուկը մտաւ խանութ, դժուա- րութեամբ գտաւ կնոջը խմբուած բազմութեան մէջ.

- Ո՞ւր ես այ կնիկ, մեռայ քեզի փնտռելով...

- Ո՞ւր պիտի ըլլամ, հոս եմ, ամէնն ալ ընկոյզի կը սպասեն: Երեկուանը՝ նոյն օրն իսկ, քանի մը ժամուան մէջ լմնցեր է: Հիմա նորէն պիտի բերեն եղեր:

- Հոս կեցիր, տեղէդ չշարժիս, խանութին մէջ մեքսիկացի գոր- ծաւոր մը կայ, զիս լաւ կը ճանչ- նայ, երթամ փնտռեմ, ան կը գիտ- նայ, թէ երբ պիտի բերեն ընկոյզի

▶▶▶

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.ԳԱԼՈՒՍ ԵՒ ԼԵՆԱ  
ՏԵՐՏԵՐԵԱՆ**



ՄԱՍԻՍ - 2019

# Հայերի Ընկոյզարշաւը Լոս Անջելէսում՝ (Մի քիչ խնդուք՝ ամանորից առաջ)

Նոր փարթին:

Մի քանի պտոյտ անելով խա-  
նութի մէջ, Մանուկը գտաւ գոր-  
ծաւորներէից մէկին, որին հարցրեց.

- Ամիգօ, ուե՞ր իդ Անտոնիօ...,

Այդչափ անգլերէն շատոնց  
սորված էր մեր հերոսը եւ ամիգո-  
յէն ճշդեց, որ Անտոնիոն պահեստն  
է: Մանուկը գնաց եւ պահեստին  
առջեւը կեցաւ. «Ուր որ է դուրս  
պիտի ելլայ», - մտածեց ան:

Իսկապէս էլ, մի քանի երկ-  
վայրկեանից բանջարեղէն-մրգեղէն  
արկղերով լի կառքը դռնից դուրս  
հրելով մէջտեղ ելաւ Անտոնիոն.

- Հա՛յ Անտոնիօ, ուե՞ն իդ  
քամինդ...,- ընկոյզ բառի անգլերէ-  
նը չիմանալու պատճառով մի քանի  
անգամ կմկմալուց յետոյ լիշեց հա-  
յաստանցիներին «պոպոկ»-ը:

- Օ՛, եայ...,- ձեռքը վեր  
բարձրացնելով ասաց Անտոնիոն.-  
ես հասկանում, - ցոյց տալու հա-  
մար, որ հայերէն էլ գիտի,- ժամ  
11-ին:

- Մաքրուհի, ի՞նչ կ'ըսես,  
սպասե՛նք,- շրջուելով կնոջ կող-  
մը՝ հարցրեց Մանուկը,- տասնըմէկ  
կըսեն, բայց ո՞վ գիտէ, թէ երբ  
պիտի գայ, դեռ մէկուկէս ժամ կայ  
մինչեւ այդ պահը: Հոս կեցիր,  
հիմա բան մը կը մտածեմ: Կրկին  
երթամ տղային քով:

- Հայտէ՛ կնիկ երթանք, ես  
ամէն բան կարգադրեցի, պէտք  
չունինք 2-3 ժամ հոս-հոն սլքտա-  
լու: Հոգ մի ընէր,- արդէն մեքենա-  
յի մէջ,- Անտոնիոյէն հեռաձայնին  
թիւը առի, 12-ի ատէնները հեռա-  
ձայն կընենք:

- Աֆերիմ, ինչ աղուոր տղայ  
է եղեր սա մեքսիկացին: Հեռաձայ-  
նին թիւն ալ տուաւ...

- Այո, տուաւ, մեքսիկացի է,  
ինչ է՝ չեմ գիտեր, Ամերիկայի  
հարաւէն եկողները ամէնն ալ իրա-  
րու կը նմանին:

Ժամը 12-ի մօտ, Մանուկը  
հեռաձայնեց Անտոնիոյին եւ ճշդեց,  
որ իսկապէս էլ դրանից մէկ ժամ  
առաջ ընկոյզը բերել են.

- Շուտ ելլանք կնիկ, ընկոյզը  
բերած են: Հիմա նայինք թէ ի՞նչպէս  
պիտի կարենանք ձեռք ձգել այդքան  
ժողովուրդի մէջէն: Դուն վար իջիր  
օթօյն, գնայ կարգի կեցիր, ես քովի  
փողոցներուն մէջ տեղ գտնամ օթոն  
փարք ընելու համար:

Այս անգամ բաւականին եր-  
կար տեսեց մեքենայի համար կա-  
յանելու տեղ գտնելը: Մի տան  
առջեւով անցնելիս տեսաւ, որ  
տանտիրուհին աւելով մայթի

եզերքն էր մաքրում: Մի պայծառ  
միտք առկայծեց պարոնիս ուղե-  
ղում: Մեքենան անմիջապէս կանգ-  
նեցրեց եւ ապակին իջեցնելուց  
յետոյ աղաչական տօնով ասաց.

- Աղջիկս, ի՞նչ կըլլայ, թոյլ  
տուր, որ օթոս կէս ժամով մը  
բակիր մէջ փարք ընեմ, Ջոնս  
պիտի մտնամ, ամբողջ թաղին մէջ  
կենալիք տեղ չիկայ:

- Խնդրե՛մ Հայրիկ ջան, էրեկ  
էլ էր հսպէս..., պոպոկ ես առնելու  
չե՞..., - ժպտալով ասաց երիտա-  
սարդ կինը:

- Հա՛, հա՛ աղջիկս, պոպոկ  
պիտի առնենք, կինս հոն խանութն է:

- Վա՛յ, քոռանամ ես, շուտ  
արա գնայ հայրիկ ջան, մեղք ա  
կնիկը, կէս ժամ չէ՛ կ'ուզես էրկու  
ժամ յետոյ արի, մէկ ա, մինչեւ  
իրիկուն էկող չկայ:

Հոգին բերանը հասած, երկար  
քայլելուց յետոյ, քափ քրտնքի մէջ  
կորած Մանուկ աղան հագիւ իրեն  
նետեց Ջոնս մարքեթից ներս:

- Ի՞նչ եղար այժմարդ, մեռա՛յ  
քեզի սպասելով, միտքես ամէն գէշ  
բան անցաւ:

- Մի հարցնէր Մաքրուհի,  
հոգիս ելաւ տեղ փնտռելէն, վերջէն  
անուշիկ տիկինի մը տունին բակը  
կեցուցի օթոս: Տեսայ, որ տունին  
առջեւը աւելով մայթին եղերքը կը  
մաքրէ, օթոս կեցուցի եւ խնդրեցի,  
որ կէս ժամուան համար արտօնու-  
թիւն տայ օթոս կեցնել իրենց  
բակին մէջ:

- Աղուոր ալ միջոցը գտեր է  
պարոնս..., մէկուսի՛ անամօթ...:  
Սոսկալի խառնակ վիճակ է, պոչ  
բռնել, կարգի կենալ,- անանկ բան  
չիկայ, ասաց Մաքրուհին:

- Ատ ի՞նչ ըսել է, ինչ է, օրէնք  
բան չիկա՞ց:

- Ես համբերութիւն չունիմ  
էրիկս: Եկուր երթանք, վազ ան-  
ցանք սա ընկոյզէն, վաղը միւս օր  
ընկոյզին գինը առաջուանը կ'ըլ-  
լայ՝ այն ատեն կ'առնենք:

Առանց կնոջը բան ասելու  
Մանուկը անմիջապէս քայլերն ուղ-  
ղեց պահեստի կողմը՝ Անտոնիոյին  
փնտռելու: Քիչ անց արագ-արագ  
քայլքով մօտեցաւ կնոջը.

- Հայտէ՛ կնիկ գացինք քէշի-  
րին քովը, Անտոնիոն քիչ վերջ 50  
փառուղնոց խոշոր տոպրակը  
(Չուայ-Չվայ) պիտի բերէ: Անցեալ  
տարի ալ նոյնը ըրինք, կը լիշե՞ս,  
սակայն այն ատեն փառուղը երկու  
դուարով առինք:

Հինգ վայրկեան չ'անցած երա-  
նելի ընկոյզի խոշոր տոպրակը

Ջոնս-ի մուտքին էր: Մանուկը  
գնաց մեքենան բերելու:

- Հոգնած ես երեւում հայրիկ  
ջան, էսքան տեղ քայլելով ես եկել,  
բա դու մեղք չե՞ս, մի սուրճ դնեմ  
խմի, հանգստացի յետոյ կը գնաս,-  
ասաց ծանօթ երիտասարդ կինը:

- Շնորհակալ եմ աղջիկս,  
ուրիշ անգամ, կինս հոն խանու-  
թին առջեւը ինծի կը սպասէ,-  
ասաց Մանուկն ու անցաւ մեքենա-  
յի դեկին: Երկու-երեք վայրկեանից  
խանութի դռանն էր:

- Մա՛րդ, կեցիր մէկու մը  
կանչեմ թող օգնէ, մինակդ ի՞նչպէս  
պիտի շալկես այս ծանր բեռը,-  
բացականչեց Մաքրուհին՝ տեսնե-  
լով, որ ամուսինը պատրաստում է  
յսկայ ծանրաբեռ ընկոյզի պարկը  
դնել ուսերին:

Մանուկը չստիպու տալով կնոջ  
յորդորը, մէկ շնչով վերցրեց ծանր  
բեռը եւ նետեց մեքենայի մէջ,-  
ասանկ կըլլայ անուշիկս..., հէ՛յ  
գիդի երիտասարդութիւն..., - յաղ-  
թական հայեացքը ուղղելով շուր-  
ջիններին՝ անցաւ մեքենայի դեկի  
առջեւ:

- Շուտ ըրէ տիկինս, սուրճ մը  
հասցուր, մեռայ,- ոտքը հագիւ տան  
մուտքին դրած՝ բացականչեց Մա-  
նուկը,- եթէ դուն հետս չըլլայիր,  
քիչ առաջուան կնոջը հետ պիտի  
խմեի սուրճը..., ինչ ալ անուշիկ,  
պուպրիկի պէս տիկին էր...

- Ո՞րչափ շուտ մտերմացեր  
ես..., ժամադրութիւն մը չ'առի՞ր  
արդեօք..., չիբնած, անամօթ մարդ,  
եւ չես ամչնար, հպարտութեամբ  
ալ կը պատմես, տարիքիդ նայէ...:  
- Ինծի նայէ, կարծեմ թէ նորէն  
սխալ ճամփուն վրան ես, փոխարենը  
երթալ կնոջը քով շնորհակալու-  
թիւն յայտնելու, էլիք պատմութիւն  
կը շինես, ամօթ է կնիկ, ամօթ:

- Լա՛ւ, լաւ, վազ անցիր,  
հայտէ, գործի անցնինք,- գզալով  
որ մի քիչ չափն անցաւ՝ կարճի  
կապեց տիկինը:

Երեք օր շարունակ վարպետ  
Մանուկը զբաղուած էր ընկոյզ  
կտրելով: Չորրորդ օրը սուրճի  
սեղանի շուրջ.

- Ապրիս ամուսինս- Մանուկի  
գլուխը շոյելով ասաց Մաքրուհին,-  
հինգ քիլոյի չափ զատէ Երեւան՝  
տղայիդ դրկելու համար, նոյքան ալ՝  
այստեղի տղուդ՝ վարդանին ընտա-  
նիքին համար մէկ կողմ դիր, մնաց-  
եալն ալ՝ թող մեզի մնայ:

Մանուկը դեռ չէր հասցրել  
որեւէ խօսք ասել՝ հնչեց հեռախօսի  
զանգը: Վարպետը արագօրէն վերց-

րեց ընկալուչը:

- Նշան, դո՞ւն ես, ինչ կայ,  
առտու կանուխ ի՞նչ է եղեր նո-  
րէն..., այո, լաւ, հասկցայ, տունն  
եմ, տեղ չունիմ երթալիք:

- Ի՞նչ կայ, ինչո՞ւ պիտի գայ  
Նշանը, այդ խաղամուրը,- հարցրեց  
Մաքրուհին:

- Տղաքը կարօտցեր են զիս,  
երեք օր է կեդրոն չեմ գացած:  
Ըսաւ որ, շատեր բացակայած են  
այս քանի մը օրը, հաւանաբար  
անոնք ալ մեզի պէս ընկոյզ գնելով  
եւ միջուկը գատելու գործով կրնան  
զբաղած ըլլալ:

Որոշ ժամանակ անց, հայկա-  
կան խոհանոցից գնուած քեբաբ-  
խորովածով եւ աղանդերներով ծան-  
րաբեռ, ուստա Մանուկի երեք  
ընկերները ներխուժեցին նրա բնա-  
կարանից ներս:

- Աչքերնիդ լո՛յս, թող մեր  
ոտքը խերով ըլլայ այս նոր բնա-  
կարանէն ներս, բարով վայելէք,-  
ասաց նիհարակազմ, երկարահա-  
սակ, Մաքրուհու ասած խաղամուր  
Նշանը:


- Ես եւ վահագն էլ ենք  
միանում պարոն Նշանի մաղթանք-  
ներին, միայն թէ առողջ լինէք եւ  
երկար տարիներ կարողանաք վա-  
յելել հարուստի հարմարութիւննե-  
րով հարուստ այս բնակարանը,-  
սա էլ Երեւանի համալսարանի  
նախկին դասախոս վազգէն Ենոք-  
եանն էր:

Երկու-երեք ժամ ուտել-խմե-  
լուց յետոյ բացուեց բլրտի սեղանը,  
որի մի անկիւնում տիկին Մաքրու-  
հին ընկոյզով լի յախճապակէ աման  
էր դրել:

- Էս քանի վախտը ուր որ  
էրթաս՝ պոպոկ դեմ կ'անեն, էս ի՞նչ  
պոպոքացաւ ա բռնայ մեր հայերին,  
ուր որ էրթաս՝ պոպոկի մասին կը  
խօսան, «պոպոկ առա՞րդ», «գիտե՞ս,  
Ջոնսում 99 սէնթ ա հա՛», պոպո՛կ,  
հա պոպոկ, յետոյ էլ պոպոկ կը դնեն  
սեղանին,- ասաց վահագը:

- Նախ՝ պոպոկ չէ բարեկամս,  
ընկոյզ է, եւ յետոյ՝ ինչո՞ւ կ'այցա-  
նես հայերուն, որ այդքան ընկոյզ  
կ'առնեն, դուն, ինչ է, Հայաստան  
ընտանիք, բարեկամ, հարազատ  
չունի՞ս, որ անոնց զրկես Նոր  
Տարուան այս օրերուն, ուր ընկոյ-  
զին գինը մեր դրամով քիլոն 40  
տոլարի կը հասնի:

- Չէ՛ չունեմ, ես մենակ մարդ  
եմ էս աշխարհում, ոչ էլ պոպոկ եմ  
սիրում,- ասաց վահագը:





ՄԱՍԻՍ - 2019

ԱՆՈՒՈՒՄԱԿԻ ՆՈՒՆԵՐ ...

«Շատ քիչ տուած կ'ըլլանք երբ մեր ստացուածքն տանք. Իսկական տուութիւն կը կոչուի այն, ինչ որ մեր անձերն կուտանք»

Խալիլ ժպրան

ԼԵՆԱ Ս.

Տարուան յատկապէս այս շրջանին մարդիկ կը մտածեն թէ ինչ նուէր պէտք է ապահովեն իրենց կողակիցին, գաւակներուն եւ կամ բարեկամներուն, ինչ որ թէ բնական եւ թէ ալ սպասուած եւ ուրախալի երեւոյթ մըն է: Շատ են գաղափարները, յատկապէս այս դարուս, երբ ամէն բան հասանելի է եւ ամէն ինչ առատ: «Թէքնոլոգի» բարիքները թող ողջ ըլլան...: Մարդ արարածն ալ նոյնքան արագ եւ սլացիկ կերպով անոր ետեւ կ'երթայ: Այլեւս բարոյականին, հոգեկանին եւ կամ աւելի կենսական հարցերուն ուշադրութիւն դարձնողները թիւը պակասած է:

- «Օ՛ ինչ կայ որ...», - «Օ՛ դուն մի մտահոգուիր...»

- «Օ՛ ինչ որ պիտի ըլլայ, պիտի ըլլայ»:

Մարդիկ իրենց խոր անտարբերութեամբ շտապ լուծումներ ունին արդէն, պատեհապաշտութեամբ եւ անձնասիրութեամբ ողողուած:

Այս տարի երկու Նկարներու տարբերակ մը կար «Ֆէյսպուքի» վրայ, որ քան ճիշտ պատկերը ցոյց կու տար մեր այս օրերուն: Մէկը քսան տարի առաջուայ նկար մէն էր, ուր մարդիկ սոնական սեղանին շուրջ ուրախ գուարթ իրար հետ կը հաղորդակցէին եւ բարի մաղթանքներ կը փոխանակէին, իսկ միւսին մէջ, այս օրերու իսկական եւ ցաւալի պատկեր մըն էր, ուր բոլոր սեղանակիցները իրենց բջիջալի հեռաձայնով զբաղած էին եւ իրար երեսին անգամ չէին նայէր:

Ուր մնաց մեր մտերմիկ հաւաքոյթներուն իսկական իմաստը, մեր ընտանեկան սովորութիւններու պահպանումը, բարոյական արժէքները, իսկական կարեկցութիւնը եւ սէրը, իսկական բարեկամութիւնները եւ հարազատութիւնը...:

Այնպիսի յիշողութիւններ կան եւ մենք այնպիսի դանկարժէք նուէրներ ստացած ենք մեր մեծերէն եւ հարազատներէն, որոնք հիմա ոչ հական կը սեպուին եւ կամ անհետեւ են բոլորովին:

Նոր նուէրներու ձանկի մը կարիքը կայ հիմա... մէջտեղ սով մը յառաջած է այս իրական արժէքներու չգոյութեան... հոգեկան սով մը...: Աշխարհը չարերով եւ անպիտաններով լեցուած է:

Ահա մեր նուէրներու ցանկէն եկէք նշենք գոնէ տասն կամ քիչ մը աւելին ...

Մեր անգին նուէրներէն...

- Սէր... Նուէրներուն հսկան: - Նուիրուածութիւն, որ ինքնին մեծ գոհողութեան ապացոյցն է:

- Ժամանակ եւ առիթ, սուղ նուէր մը, որ սակայն պէտք է միշտ ստեղծել:

- Ուշադրութիւն - միշտ լսել եւ ներկայ ըլլալ:

- Վստահութիւն - ներշնչել եւ շահիլ:

- Քաջալերանք եւ խրախուսանք - անյապաղ եւ անվարան կերպով:

- Առատաձեռնութիւն եւ պատրաստակամութիւն

- Բարի կամեցողութիւն

- Կարեկցութիւն

- Ազգասիրութիւն եւ արմատներու ամրապնդում

- Տիրապիւն եւ օրինակ

- Խաղաղասիրութիւն

- Մարդասիրութիւն

- Հաւատք եւ յոյս

Վերոյիշեալ նուէրները խառնութիւններուն մէջ մի փնտռէք, այլ ձեր հոգիներուն մէջ:

Այս անցողիկ աշխարհի չարութեան՝ միայն լաւութեամբ կրնանք լաղթել:

Գեղեցիկ ու լաւ արժէքները կեանք են եւ ուրախութիւն:

Ընտրութիւնը մերն է...:

Շնորհաւոր Նոր Տարի՝ 2019:

Հայերի Ընկոյզարշաւը Լոս Անջելեսում՝

Շարունակուած էջ 30-էն

- Ատոր համար ալ խելք չունիս,- հռչակով խօսքի մէջ ընկաւ Նշանը,- գիտե՞ս որ, ընկոյզը մարդուս խելքը կ'աւելցունէ, առ սա ընկոյզը եւ նայէ, ճիշդ ուղեղի ծալքերուն կը նմանի:

- Ճիշդ է ասում Նշանը,- սա էլ համալսարանի նախկին պրոֆեսորն է,- ընկոյզը, կամ որ միեւնոյնն է՝ պոպոկը հարուստ է վիտամիններով, մետաղներով, օգնում է շաքարով հիւանդներին, դանդաղեցնում է ծերացումը, եւ, եւջ... սա արդէն քեզ է վերաբերում պարոն Նշան,- ընկոյզը օգնում է տղամարդու սեռական կարողութիւնը բարձրացնելուն, այնպէս որ, եթէ օրական 7 ընկոյզ ուտես՝ ասածիդ պէս՝ «Ամէն ինչ բոմբայի պէս կ'ըլլայ...»:

Պրոֆեսորի վերջին արտայայտութեան վրայ սրտաբուխ ծիծաղի մի այնպիսի հզոր ալիք բաժրացաւ սենեակում, որ տանտիրինը անհանգստացած, խոհանոցից շտապեց տղամարդկանց մօտ.

- Ի՞նչ եղաւ Մանուկ, այս ի՞նչ աղմուկ է, դրացիները հիմա ի՞նչ կը մտածեն:

- Մտահոգիչ ոչինչ չկայ տիրին Մաքրուհի, տղաներն իրենց երիտասարդութիւնը յիշեցին,- Մանուկի փոխարէն պատասխանեց պրոֆեսորը եւ շարունակեց,- Մեր եւ մնացեալ հայ ընտանիքներում այս օրերին պատկերը նոյնն է: Բոլորի մօտ էլ ընկոյզացաւ կայ աւելի կամ պակաս չափով: Բոլորն էլ ցանկանում են տնտեսապէս օգտակար կիները Հայաստանում պարող հարազատներին եւ բնաւ էլ մեղադրելի չէ, որ նրանք իրենց պահանջարկից աւելի ընկոյզ են գնում, ես ընտանիք գիտեմ, որ երեք 50 փառնդանոց ընկոյզի պարկ է գնել:

Երեք արու գաւակի բազմանդամ ընտանիքներ ունի Երեւանում: Բանրանց չ'օգնի՞ տոնական այս օրերին, որպէսզի տան կանայք կարողանան ընկոյզէ խմորոգէներ պատրաստել: Շաքար, բրինձ, սիսեռ, քաղցրաւենիք, ընդդէմների շարքում էլ՝ ամենակարեւորը՝ ընկոյզ չուղարկի՞, էն էլ մաքրուած:

Իրական ճառի վերածուած պրոֆեսոր Ենդեանի ելոյթը խորը տպաւորութիւն թողեց ներկաների վրայ: Ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն, կամ առարկութիւն: Տեսնելով որ բաւական լուրջ է մթնոլորտը, պրոֆեսորն անցաւ կատակի.

- Դէ լա՛ւ, այդքան մի լրջացէք: Քանի որ այսքան երկար տեւեց ընկոյզային խօսակցութիւնը, ուզում եմ մի հարց ուղղել բոլորիդ. ինչպէ՞ս է կոչում ընկոյզ կոտրելիք գործիքը:

- Կոտրելիք,- ասաց Մանուկը,- կամ ալ ընկոյզ կոտրելիք:

- Կոտրելիքը յստակ չէ, ի՞նչ բանի կոտրելիք,- յստակ չէ, յաջորդը:

- Պոպոկաջարդիչ,- սա էլ վահագն է:

- Վատ չէ վահագ, բայց երկար է բառը... լաւ, լա՛ւ, ես կ'ասեմ ճիշդ անուանումը, որը շատ բնորոշ է ընկոյզ մրգի համար: Այսպէս ուրեմն. Ընկոյզ կոտրելու գործիքի անուանումն է՝ ՃՐԹԱՆ, ՃԼՐԹԱՆ: Լաւ է, չէ՞: Ընկոյզը կոտրելու ի՞նչ ձայն է գալիս՝ ճըրթ-ճըրթ...,- ուրեմն չափազանց բնորոշ անուն ունի ընկոյզ կոտրելիք գործիքը: Դէ՛, ուրեմն, բարեկամներ ուրիշներին էլ սովորեցրէք ՃՐԹԱՆ-ը, թող մէկ բառ էլ մտնի մեր հարուստ բառապաշարի մէջ: Այժմ եկաւ պահը բլոտ խաղալու:

Մինչեւ ուշ գիշեր լոյսը չմարեց Միսիւրեանների նորամուտ բնակարանում:

Official letter from the Ministry of Diaspora of the Republic of Armenia. The letter is addressed to the 'ՄԱՍԻՍ' community and discusses the 'Armenian Christmas' project. It mentions the 2018 survey results and the goal of creating a 'Christmas tree' of Armenians in Los Angeles. The letter is signed by the Minister of Diaspora, V. Sargsyan.

Official letter from the 'ՊԵՐԹՈՒՆՆ ԴՐԵՒԹ' community. The letter is addressed to the 'ՄԱՍԻՍ' community and discusses the 'Armenian Christmas' project. It mentions the 2018 survey results and the goal of creating a 'Christmas tree' of Armenians in Los Angeles. The letter is signed by the community leader, V. Sargsyan.



# Գոյութեան Տագնապն ու Կեանքի Մղունը

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉԵԱՆ  
Գրականագետ


1947-49-ի միջև Երուսաղեմի Բոնապարտի փոփոխությունները գրեց «Վերջին բռնակցում» վերջին գրքում, թերեւս, փարիզում անցկացրած իր կեանքը, այնտեղի անապահով արուեստագետներին. «Դրամատիկական կարգերը նրան դուրս չպրտեցին կեանքից, նա կեանքի լուսանցքի վրայ է միայն... Արուեստագետի եւ տիրոջ միջև բացակայում է մի վիճակ: Նրա գործերը զարդարում են պալատները, տաճարները, բայց ինքը նկուղներում է պարում՝ յաճախ մոռացված. նա հասկացում է չէ... Արուեստագետի նուրբ ու զգալուն հոգին ատում է օրհնքը, որովհետեւ տեսնում է, որ այն ծառայում է ուժեղներին ու հարուստներին, եւ, ահա, նա փախչում է օրհնքից, ստեղծում իր ուրոյն աշխարհը...» (11-12): Գրելիս, այլաձեւօրէն ներկայացնելով արուեստագետի եւ «ուժեղների օրհնքի» անհամադրելիությունը, միջին նա գտնէ ինչ-որ չափով նկատի չունէր աննկարագրելի ծանր գոյութիւնը ստալինեան դահճային միջավայրում: 1941-ի Յունիսի 23-ից 1943-ի Հոկտեմբերի 23-ը նա բանտարկուել էր «հակասովետական պրոպագանդա» տարածելու անհետեւ մեղադրանքով, բիրտօրէն զրկուել ստեղծագործելու հնարաւորութիւնից, ազատուել միայն Ներսիսեան դպրոցի իր ընկերներ Անաստաս Միկոյեանի եւ Կարօ Հալաբեանի միջնորդութեամբ: Դրանից յետոյ միայնակ, վարձով ապրում էր Օպերային մոտակայ Ստալինեան պրոսպեկտի պողոտայ (այժմ՝ Մեսրոպ Մաշտոցի պողոտայ) չէնքի վերջին շարկի փոքր սենեակում, մինչեւ 1946-ին Մանիկ Մկրտչեանի հետ ամուսնանալը: Նուիրութեան կատարելատիպ, Քոչարի ստեղծագործութեան խրախուսող ու պահպանող այդ կինը կիսեց ամուսնուն հասած բազում դառնութիւններն ու հարուածները: Ինքն էլ վկայում է. «Պատուէր չէին տալիս, նկարները չէին գնում, ոչ մի եկամուտ չունէր: Նիւթական անապահով վիճակը քիչ էր, սրան աւելանում էր բարոյական հալածանքը, «իզմ»-երի մեղադրանքը: Բոլոր ժողովներում քննադատում, դատափետում էին որպէս ֆորմալիստի, աբստրակցիստի, կոսմոպոլիտի: Նկարիչների միութիւնը՝ Արա Սարգսեանի գլխավորութեամբ, նիւ-

թական եւ բարոյական տեւորի էր ենթարկում Քոչարին» (Մասնորոգում, 2016, էջ 96-97): Այդ ամէնով հանդերձ, ճակատագիրը ինչպէս նրան: Քանակագործ Ղուկաս Չուբարեանը փաստում է. «Քոչարը երբեմն աներեւակայելի յանդուգն էր՝ ուղղակի սեփական կեանքին վտանգ սպառնալու աստիճան» (նոյն տեղում, էջ 56): Անհաշտ պահուածքով իր գլխին մշտապէս փորձանք բերելու վտանգից անկախ, դժուար չէ պատկերացնել, թէ ինչ կ'անէին միայն Ստալինի քանդակի համար. «Գիտէ՞ք ինչ, ընկեր Մանիկ, -ասաց Արան, - Քոչարը տաղանդաւոր տղայ է, բայց շատ տարօրինակ բաներ է անում, օրինակ՝ քանդակել է առաջնորդին՝ յոնքերի վրայ պատշգամբ, դէմքին՝ կոյունեսականներ, բանակայիններ, ճակատին՝ դրօշակներ...» (նոյն տեղում, էջ 92):

Իր մանկութեան ընկեր, գեղանկարիչ Գէորգ Գրիգորեանը, որին Ջիոտտօ է կոչել Երուսաղեմի Քոչարը, բնորդն էր «Գէորգ Գրիգորեանի դիմանկարը», «Բնորդը», «Տղամարդու մերկ մարմին», «Ղազարոսի Յարութիւն» նկարները: Ջիոտտոն հուժեղ տեղական բռնակցական կերպարի բնորոշ մարմնացում էր: Նրան այդպէս էլ ընկալում էր Քոչարը. «Այո, դու թիֆլիսում հալածուած, չընդունուած, թշուառութեան մասնուած մի նկարիչ էիր... մի Ջիոտտօ, որ անհուն սիրով եւ նուիրութեամբ եւ ամենախտեալական սիրով սիրում է նկարչութիւնը, որի համար նա իր կեանքը կը զոհի... պսակել էին գլուխը մարտիրոսի փշեպսակով. Դու արուեստի հաստացեալ ճգնաւորն էիր» (Մասնորոգում, էջ 155):

Փարիզում մասնաւոր հաւաքածուում գտնուող «Տղայի դիմանկարի» (1919) մասին գրուել է. «Քսան տարեկան հասակում Քոչարն ստեղծեց զարմանալի դիմանկար: Ըստ էութեան, մի պատանի մի ուրիշ պատանու էր նկարել... Քոչարի հանձարը հասկանալու համար պէտք է շրջել կտաւը: Դա վուշ գործուածք է՝ կոպիտ կարկատաններով, եւ այդ խախտու հենքի վրայ պատկերուած է սովալլուկ, հիւծուած մի պատանի, որն ասես ճամբարային գերի է: Սակայն նրա մէջ ինչ-որ վեհութիւն կայ, նա արժանապատուութիւնը պահող սպանական գրանդ

է յիշեցնում: Նկարը մտքի յաղթանակն է անշարժ նիւթի հանդէպ... Ֆրանսական մամուլը, նկատի ունենալով «Տղայի դիմանկարը», գրում էր նրա հեղինակի մասին. «Նա նախորդեց Ալբերտօ Ջակոմետտիի, Ֆրանսիս Գրիգորի, Կաֆկայի միգրացիային» (Հենրիկ Իգիթեան, Երուսաղեմի Քոչար, 2000): Թշուառութեան, անապահով, մուսկլ գոյութեան այս եւ վերոնշեալ գեղանկարչական վաւերացումների թոււմ 1919-ին Քոչարը նկարել էր փուլանշային գլուխգործոց «De Profundis»-ը (դժբախտութիւնից փրկութեան յոյան Աստուծոյ վրայ դրած, ճնշուածների աղօթք): Բախուելով աղետաբեր պատմաշրջանի ճակատագրական սպառնալիքներին, մարդն ընկաւ ահուելի կորուստների յորձապտոյտը, որտեղից դուրս չարտուելով՝ կանգնեց ոչնչի առաջ: Դա մարդկութեան պատմութեան խոշորագոյն՝ Առաջին համաշխարհային պատերազմի սարսափներ ու նաեւ ցեղասպանութիւն, բռնագաղթ, սով, համաճարակներ, հայրենագրկում ապրած հայ մարդու ընդհանրացում կերպար է: Պատերազմ, որի վերջում մասնակից պետութիւնների թիւը հասաւ 33-ի, աւելի քան 1,5 միլիարդ բնակչութեամբ, որին զոհ գնաց 10 միլիոն մարդ, վիրաւորուեցին, հաշմուեցին 20 միլիոնը, սովն ու համաճարակները հնձեցին եւս 10 միլիոնին: Պատերազմական թոհուբոհ մէջ թուրքիան 1915-ին երկրի 3 միլիոնի հասնող հայերից ցեղասպանեց աւելի քան 1,5 միլիոնին, մնացեալների գերակշռող մասն արտագաղթեց: Մինչ այդ, տարբեր տարիների հայկական կոտորածներում, միայն 1895-96-ին ցեղասպանուեցին շուրջ 300.000, բունի մահացեացուեցին 100.000, տարագրուեցին եւս 100.000 հայեր: Պատերազմի, ցարսպանութիւնների, հակադիր կողմերի բիրտ, արիւնալի բախումներով



Հոկտեմբերեան չեղափոխութեան եռացող քաոսի, կեանքին սպառնացող անվերջանալի վտանգների մէջ հասակ նետած Երուսաղեմի Քոչարի սերունդը յայտնուել էր ելք, հարմոնիա գտնելու տառապալից որոնումների անխուսափելիութեան առաջ: 1918-ին Կարօ Հալաբեանի հետ Մոսկուա մեկնելիս «ճանապարհին կարմիրբանակայինները նրանց իջեցնում են գնացքից... որոշում են գնդակահարել: Բայց յանկարծ յայտնում են՝ սպիտակ գուարդիականները յարձակուել են: Կարմիրբանակայինները նստում են մեքենայ ու շտապում ճակատ... «Մեզ մոյրաները փրկեցին», - ասում է Քոչարը» (Մասնորոգում, էջ 170--171):

Աստուծոյ դիմողին սովորաբար պատկերել են հայեացքը վեր յառած, մինչդեռ, վերից՝ ճակատագրի բեռի ահուելի ճնշման տակ հակուած աղօթողի գլուխն ուսերի հետ գրեթէ մի գիծ է կազմում: Բնականում գրեթէ անհնարին, գաղափարական խնդրադրման տեսակետից ճշգրիտ-խորիմաստ դիրք: Կառուցուածքն առաւելապէս յետագայում Քոչարի կիրառած վարից վեր սլացքին հակադիր, վերից վար է, հետզհետէ կրճատումով՝ եռանկիւնաձեւ: Եռանկեան վար ուղղուած երկու կողմի միացման



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԻԱՐ ՄԱՆՈՒԷԼ ԿԻՒՉԷԼԵԱՆ**



# Գոյուրեան Տագնապն ու Կեանքի Մղունը

Կէտում սպառուում է կերպարի՝ արդէն իսկ ճնշուած մարմնական ուժականութիւնը՝ հասնելով գրոյի-ողբերգական գոյից անցում չգոյ: Մարդը տեւում է մեկնելով առ ոչինչ: Նրա պատրանքները, սպասումները, ձգտումները, նպատակները գահավիժում, յայտնում են դատարկութեան առաջ: Նրա գոյութիւնն անհամատեղելի է սոցիալական աստիճանակարգում փոքրիշատէ կայուն վիճակի հետ: Պատմաշրջանի անխնայ դատի առաջ խորտակուած էին բոլոր լուսաւոր, վեհ գաղափարները: Չկարողանալով քննել առկայ կացութիւնը, հասկանալ՝ ով է ինքը, ինչի է ունակ, որն է գոյութեան իմաստը, «De Profundis»-ի կերպարն աղօթում է փակ աչքերով՝ թաղուած անելի թմբիրի մէջ: Հիւժուած, բարակ ձեռքերին հակադրուած են խոշորացուած դաստակները՝ ամուր միահիւսուած մատներով: Այդտեղ է խտացուած ներքին, զսպուած լարուածութիւնն ընդդէմ գոյութեանական իրացիոնալ տագնապի, կեանքի մղումի էներգիան: Թէեւ պատկերի վերից վար կառուցումով ուժականութիւնը սպառուում է հասնելով ոչնչի, սակայն լարուածութեան խտացումն աչք արտայայտութիւնը վարում, հիանալիօրէն հաւասարակչուում է կոմպոզիցիան եւ ամբողջացնում գաղափարական խնդրագրումը՝ անկում-վերելքի սպասման, ուղեգծով: Բացասումով աւարտուող, ինքնախաբեութեան մղող գոյութեան եւ ինքնահաստատման ճիգի հակադրութիւնը միայնացած աղօթողին կեանքի մեծ հոսանքի մէջ մտնելու, իր մարդկային-հասարակական ինքնութիւնը գտնելու հնար է տալու-գեռանկեան վարի կէտից սկսուող ՈՉԻՆՉԸ գիտակցութեան արթնացման վիճակ է, հնարաւորութիւն՝ նպատակ դնելու եւ հասնելու: Յուսաթափ ընկճեալ ընդարմութիւնից արթնացման, չգոյից գոյ անցման խնդիրն արդէն Քոչարը վճռել է «Ղազարոսի հարութեամբ» (1923): Այն վերամշակուել է 1919-20-ի «Փաթեթով բնորդը» նկարի հիման վրայ:

Պատումի աւանդական պատկերումները միջնադարեան մանրանկարներից ու սրբապատկերներից մինչեւ, ասենք, Վան Գոգ, օրինաչափօրէն բազմափիգուր են, առարկայական կարեւոր մանրամասներով: Մինչդեռ Քոչարի Ղազարոսը միայնակ է, կանգնած սեն-



եակի պատի առաջ, ձեռքին ոլորուած մի թուղթ: Քառօրեայ վախճանից յետոյ կենդանացած Ղազարոսն ինչո՞ւ էր յայտնուելու նման միջնադարում, ինչո՞ր թղթով: Անդրաշխարհից ելնելու թոյլտուութի՞ւն է դա, որով յարութիւն առածն ինչ-որ ատեանի առաջ հաստատուել է վերապրելու իրաւունքը: Թէ՞ երեւոյթին վերաբերող այլ բան, միեւնոյն է, Քոչարի նկարն իր արդիացուած-այլաբանական իմաստաւորումով Նոր Կտակարանի պատումի հետ ուղիղ առնչութիւն չունի: Վերում նկարն աւարտուում է սողագծերով թերթեր եզրափակող մարմարէ քիւով: Տողագծերը շարունակուում են Ղազարոսի կրծքի վրայ: Սրանք բաց «տեքստերն» են, ոլորուած թղթինը՝ փակ: Ընթերցումը մնում է դիտողին, ինչպէս միւս նման դէպքերում: Ղազարոսի մարմինն ասես մուծիացած է, ոսկրացած, որովայնը դատարկուած-ներսնկած: Դա հիւժուածութիւն է ոչ թէ քառօրեայ գերեզմանային, այլ աչքերկրային կեանքի տառապանքներից՝ վերոնշեալ նկարների շարքի կերպարներին յատուկ հիւժուածութիւն, էքզիստենցիալ նոյն սկզբունքով պատկերուած: Ձեռքին բռնած «փաստաթղթով» նա ոչինչ-չգոյից կը մտնի՝ լիարժէք կեանք: Ղազարոսի յարութիւնը սոսկ Քրիստոսի եւս մի հրաշագործութեան պատմութիւնն է, այլ յաւիտենական կեանքի արժանանալու արձանագրում: «Յիսուսը նրան ասաց. Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կ'ապրի:

Եւ ամէն, ով կենդանի է եւ ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնի» (Յովհաննէս, գլ. 11, 25-26): Քոչարի աղքատ Ղազարոսը միայնակ է մղձաւանջային գոյչգոյ-գոյ շրջապտոյտում: Միայնակ, որովհետեւ պատերազմի բոլոր ճակատներում, խաղաղ բնակչութեան կոտորածների, ցեղասպանութիւնների, մահատարած բռնագողթերի ճանապարհներին Քրիստոսին խաչում էին անընդհատ: Որովհետեւ սկիզբ էր առել համաշխարհային անախարհեպ օտարում-միայնացում-ոչնչացում, որովհետեւ այդպէս չէր կարելի ապրել, որովհետեւ այդպիսի կեանքը մարմնում է մահուան գերութեան մէջ: Որովհետեւ Ղազարոսի յարութեան հրաշքը կերպարուեստագետի վրձնով իրացած արժանաւոր, ստեղծագործ յաւերժութեան խորհրդանիշ է լինելու, կեանքի հաստատում՝ մահուան մերժումով: Քոչարը կանխագրում էր, որ անհեթեթ ու դաժան ճակատագրի հետ պայքարը երկար է տեւելու եւ ինչքան երկար, այնքան ամբարցնելու էր յաղթելու կամքը: Նրան ոգեկան վիթխարի ուժ էր տրուած, եւ նա յաղթանակեց:

Դարի յորձապտոյտում մարդու ճակատագրի արծարծման խնդիրը երիտասարդ Քոչարը վճռում էր իրականութեան գեղանկարչական արտացոլման խոր գագուցողութեամբ՝ իւրովի յանգելով հետեւութիւնների, որոնք բնորոշ էին ժամանակի մտքի այնպիսի իշխող ուղղութեան, ինչպիսին էքզիստենցիալիզմի փիլիսոփայութիւնն էր: Տպաւորութիւնն այն է, որ ողջ ստեղծագործական կեանքում նրան յատուկ փիլիսոփայական ներթափանցումները կարծես տրուած են առանց ճիգ ու ջանքի՝ ի բնութենէ: «De Profundis»-ը կատարում է մարմնամասերի շեշտուած, ցայտուն մշակումով՝ հնարաւորինս պահպանելով անատոմիան, նկատելի է միայն անրակի կորագծի վերածումը ուղղանկիւն եռանկեան, փոս ընկած ուսամկանի գծի հետ: Դրա եւ «Փաթեթով բնորդի» համեմատ «Ղազարոսի յարութիւնն» է գծուած նպատակային ակնառու ձեւախախտումներով: Պոլ Սեզանի արուեստով աւանդուած արտայայտչօրէն գատագատուած ձեւերի այսպիսի ընդհանրացումներով եւ «դեֆորմներով» Քոչարի կերպարուեստն ուղղում էր դէպի կուբիզմ: Ղազարոսի վիզը եւ իրա-

նը երկարացուած են գ դա այստեղ մահից կեանք, ոչնչից գոյութիւն յառնելու գաղափարի արտայայտման միջոց է: Տիրապետող գերեզմանային սառնութեան նշան մեղմ կապտաւուն, գորշ երանգներն են: Ղազարոսը կանգնած է վախճանուելու պահին կուլ գնացած (մահ), բայց փայլող, արցունքոտ (կեանք) աչքերով, մահ-կեանք իրարայաջորդ-միատեղութիւնում: Սա արդէն բաւական է՝ առանց այլ ֆիգուրների եւ գերեզմանային միջնադարի, յարութիւնը ներկայացնելու համար: Եւ ընդամենը սրանով էլ Քոչարը զարգացնում է ժամանակի միակողմանի ուղղութեանը հակառակ պտտուող առասպելական յարութեան սիւժէն: Դիտողին հասկանալի է, որ ծիածանաթաղանթները ետ կը գան, եւ Ղազարոսը մահից կը գայ կեանք. ընտրուած է թէ՛ նախորդող, թէ՛ յաջորդող դէպքերն ի յայտ բերող պահ: Պատմութիւն, որ «գրուած» է նկարի տողագծերում: Ժամանակի իրական ընթացքին գեղարուեստային այս հակառակումով Քոչարը ցուցանում է «De Profundis»-ի կերպարի ելքը XX դարի մահասփիւռ մղձաւանջից: Ճակատագրի ճնշումը կրող այդ կերպարի մարմնի վերին, թէք, բովանդակային կորագծից վար իրանի հորիզոնականին մօտ դիրքով կայուն ուղղահայեացութիւն չի հաստատուում: Դրա փոխարէն ցցուն ձեւերի անցումները դրսեւորող գծերը լարուած զսպանակի նման ուղղուելու պոտենցիալ ունեն վերից սեղմող ուժով անշարժացած կառուցուածքի զլխաւոր մասերում: Անշարժացումը, միաժամանակ, խախտում է պատկերին արտասովոր շարժում հաղորդող շեղակի կտրող լուսաստուերի շնորհիւ: Սեւ, սպիտակ եւ հողային ներկերով (օքրա, սիենա, ումբրա, առաւելապէս որոնցով կատարուել են եւ վերոնշեալ նկարները) կոլորիտն արտայայտիչն է գոյութեանական մղձաւանջի: Գեղանկարչական այսպիսի հրաշքով կնքուած, արտաքին շրջադրութիւնից փրկութիւն չսպասող մարդու թաքուն, անբարբառ տառապանքի, ներքին խռովքի ու բախման արտացոլումը դուրս է պրծնում առօրեական բնականութեան ափերից, մեկնում ողբերգականի վերիբախտի ոլորտը՝ ելնելու, ուժ ստանալու, վերածուած դարի իրադրային խոր հակամարտութիւնների ճշմարիտ արձագանքի:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՊԵՏՐՈՍ ԵՒ ԼԵՆԱ  
ԽՈՏԱՆԵԱՆ**



# Կեանքի Ջերմացնող Խթանը



Չախից աջ Շաւարշ Ղազարեան, Շահէն Բանդարեան Խեչօ Խեչումեան եւ Անուշաւան Դիլանչեան

## Ռ. ԿՈՐԻԻՆ

Վաղեմի ընկերների հանդիպում էր, հինգ ընկերներ ոչ այնքան տարիքի տարբերութեամբ, տարիներ նոյն քաղաքամասում կեանք ապրած՝ յուշերով թաթախուն: Երեքը Գլենդէլից հիւրաբար այցելուներ էին, որոնց ի պատիւ հանդիպում կայացաւ հիւրընկալութեամբ Շահէնի առանձնատունայգիում, որտեղ անգամներ նոյն մարդիկս հաճելի ժամանց, նաեւ համայնքի եւ քաղաքական հարցերով մտքերի փոխանակութիւն ենք ունեցել՝ յուզուել, քննադատել, անիծել բախտը հայի, բորբոքուել, Արցախով հպարտացել, յոյսեր կապել, երբեմն դառնացել...

Եւ հա՛ա այսպէս յարմար առիթ էր ստեղծուել ընկերները իրար շուրջ հաւաքուեն, իրար պատուեն՝ հաւատարիմ մնալ անցած ուղուն, նիստ ու կացին, փոխադարձ անկեղծ զգացումներին, աղ ու հացին:

Ընկերներ սիրալիր: Ընկերներ գործի ու աշխատանքի:

Ընկերներ ազգասիրութեան ու հայրենասիրութեան:

Ընկերներ ծառայասիրութեան ու նուիրուածութեան:

Ընկերներ ժողովրդասիրութեան ու մարդասիրութեան:

Ասուածը լոկ խօսքեր չեն, այլ խառնուածքում դաջուած հոգեմտածողութիւն, Աստուծով կը շարունակուի քանի մեր կեանքում արեւն է շողում:

Առաքինութեամբ օժտուած ըն-

կերը թանկ է եւ ներբողելու արժանի:

Այդ օրը, հոկտեմբերեան աշնան օր էր, կազմակերպութեամբ Խեչոյի, հինգ հոգի տեղաւորուած Շահէնի մեքենայում Նարմաք-Փեղարսանուց ճամբուեցինք դէպի Բումէհէն գիւղաքաղաքում գտնուող Շահէնի առանձնատուն-այգին՝ երեսուն կմ հեռավորութեան վրայ դէպի արեւելք: Մեր ընթացող ճամբան նախկինի քարտէզացած ճամբան էր, բայց անձանաչելի աչքի խփող զարգացած փոփոխութիւններով, աջ ու ահեակ գեղեցիկ երեսապատուած շէնքերով ու գործատեղիներով, կամուրջներով ու հրապարակներով, ծառատունկ եզրերով կանաչապատուած, ամալի երկու կողմերում նոր քաղաքամասեր բարձրադիր կառուցներով: Իսկապէս նկատելի են ճանապարհաշինութեան եւ կառուցողական տեմբերով աշխատանքներ: Թեհրանը չորս կողմերից անհաշիւ ընդարձակուել է նորանոր քաղաքամասերով եւ բազմաշարկանի շէնքերով եւրոպականացած քաղաքի տպաւորութիւն թողնելով, սակայն ամպակալած երկինքը հեղձուցիչ գազերով եւ խցանուտ ու ժխոր երթեւեկութիւնը լուրջ վրդովմունքի պատճառ են:

Մուտք գործելիս այգին (ինչու չէ նաեւ պարտէզ) նախշուն աշնան կենդանի պաստաւը ներկայացաւ հայեացքիս դէմ-դիմացը, պտտելիս նկատեցի ոչ լրիւ տերեւաթափ մրգածառեր եւ խաղողի վազեր գրեթէ ընդարմացած վիճա-

կում, միակ ծառը, որ կենդանի ժպտում էր հուր պտուղներով անհաս, ժուրի (persimmons) ծառն էր: Այգու տարածքն անինամ ծածկուած էր կենսազուրկ կոյտ տերեւներով ոտքերի տակ խարշափիւնով՝ մայր արմատից անջատուած ճակատագիր:

Միտում եմ աշունը իր գովեղանակով, այգեկուծով եւ մոծակ ու մլակ փախցնող մոլի քամիներով, երանի թէ մի աներեւոյթ ուժ էլ լինէր հայերի ջարդը ուրացող թուրք ղեկավարներին վերացնէր, այսպիսով աշխարհը կը փրկուէր ալիւնների եւ հրդողանների պէս բռնակալ եւ ֆաշիստ տարրերից, որով թէ միջին արեւելքում եւ թէ կովկասում խաղաղութիւն կը հաստատուէր: Միշտ պիտի պատրաստ լինենք օտարամէտ կապանքներից ազատ ու անկաշկանդ միասնական ոգով ու միատեղուած ուժով մեր դատը պաշտպանելու ու հետապնդելու:

Այգին աւելի քան երկու տասնեակ տարիների անցեալ ունի աստիճանաբար Շահէնի ջանքերով լրացուել է կառուցը վերնաշարկ սենեակով եւ ջրամատակարարման ու երկնագոյն գազի յարմարութիւններով: Շահէնը պարզ աշխատաւոր մակարդակից դէպի վեր է բարձրացել սերտ հետեւողական աշխատանքի շնորհիւ ստեղծելով իր սեփական գործատեղին վայելելով վերելակ սարքող արհեստաւորի համբաւը, նա վաստակի արդիւնքում նիւթական բարեկեցիկ վիճակ է ստեղծել ընտանիքի համար ունենալով փեսաներ, հարս ու թոռներ, հայկական շնորհալի ընտանիք: Նա գաղափարական ասպարէզում լծուած է ազգային-հասարակական գնահատելի ծառայութեան:

Ընկերներով կարգի բերելով միջավայրը, հուր-կայծակին գոռոց վառարանը պաղը ցրելու ջերմութեամբ: Նախ անուշաբույր թէյը պատրաստուեց, ապա խորովածը թշնջաց կրակարանում չազեցնելով մեր ախորժակը, այնուհետեւ կենացներ համեմուած քողցրահնչիւն երգերով: Դեհ, ո՞նց կը լինի կենացներ առանց թամադայի, այդ մէկը երբեք, որի պակասը բնաւ չզգացինք՝ քանի մեր մէջ ունենալով սիրելի Խեչոյին լիքը փորձառութեամբ: Կենացներ խմուեցին ուրախութեան ու լի բարեմաղթանքներով ուղղուած Անուշաւանին, Շաւարշին եւ Ռուբէնին ու շնորհակալութիւն Շահէ-

նին, ապա առաջարկ եղաւ Գլենդէլեան կեանքից տեղեկութիւններ փոխանցել:

Երբ փոքր էինք ոչ Ամերիկա անունն էինք լսել եւ ոչ էլ տեղն էինք իմանում, երբեք տներում Ամերիկա անունը ոչ հոլովուած էր, ոչ էլ մասին խօսուած էր, քիչ-քիչ որ մեծացանք դպրոց յաճախեցինք, աշխարհագրութեան դաս կարդացինք, նոր իմացանք Ամերիկան որպէս մի հսկայական ցամաքամաս շատ հեռուն է գտնուում: Երբեք ձգտում չի եղել Ամերիկա գնալ, Հայաստանին կպած Իրանը լքել եւ ապրել երկիր մոլորակի էն ծայրամասում՝ հեռու, շատ հեռու մի երկրում, որտեղից, ով գիտէ, հետագային Հայաստան ճամբորդելը մեծ դժուարութիւնների հետ կապուի:

Իրանի յեղափոխութիւնը 1979-ին դրականապէս յեղաշրջեց մեր աշխարհահայեացքը գերմեծերի եւ մեր Հայաստան աշխարհի նկատմամբ, շարունակ ժողովրդական քայլարշաւներում հնչեց ո՛չ Արեւելք եւ ո՛չ Արեւմուտք կապուածութիւն, ազատութիւն եւ անկախութիւն: Այս կարգախօսը ինձ եւս համակեց, սրտում եւ հոգումս դաջուեց, այն իմաստով որ Հայաստանը եւս տեսնել անկախ:

Յեղափոխութեան պատճառով գործազրկութիւնը տարածուած էր երկրում, երիտասարդներ՝ հայ, պարսիկ եւ այլն, ապագայի հեռանկար չտեսնելով արտագաղթի ճամբան էին բռնում ապաստանելով Ամերիկա որպէս իմիգրանթներ ներգաղթողներ, այնպէս եղաւ, որ Ամերիկա անունը հանապազ խօսակցութեան նիւթ էր տներում հեռախօսակապերով շարունակող: Իմ գաւազներն եւս իրենց անձնական որոշումով թողեցին մեր իրանահայերիս երկրորդ հայրենիքը եւ հաստատուեցին Ամերիկայում: Իմ մտածելակերպը միշտ այն է եղել, որ իրանը որպէս Հայաստանի սահմանակից հարեւան- երկիր մեր գաղութը պէտք է մնայ եւ գոյատեւի ջերմ կապերով Հայաստանի հետ որպէս երկու երկրների կապերը յաւերժացնող օղակ: Փառք Աստուծոյ մեր Իրանահայ գաղութի իշխանութիւնը իր առաջնորդ Սեպուհ սրբազանով իրենց ողջամիտ քաղաքականութեամբ յառաջընթացի կառուցողական դեր են խաղում Իրանի կեանքում վայելելով պետական պատասխանատու անձանց

Շար.ը էջ 43

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ՊԷՔԱՐԵԱՆ**



# «Ինչպե՛ս ժամանակները Կրճան Փոխուիլ»

«Դու՛ն այ՛ն չես՝ որ կը խորհիս թէ կրճան մճալ նոյնը միճել վերջ. ոչ մէկ բան կը մճայ յաւիտեան»:  
ժողովրդային ասացուածք



ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԱՆ

Արնոյտ Շուպենկերը ամերիկացի ծանօթ եւ համբաւ վաստակած Հոլիվուտի դերասան է, որ առաւելաբար կը մարմնաւորէ արկածախնդրական ժապաւէններ: Եթէ ան ատակ է այդ տեսակի ժապաւէններու մէջ դերեր ստանձնելու, բայց նաեւ որովհետեւ կը յենի երեւի իր ֆիզիքական ուժին եւ մարմնի մկաններուն եւ անոնց ցուցադրութեանը: Եւ իր այդ ուժը (եւ չափազանցուած ձեւով), ան դերեր կը ստանձնէ իր ֆիլմերուն մէջ, ուր կրնայ դէմ դնել ամբողջ բանակի մը եւ «Զախճախել» բոլորը: Եւ ինչ խօսք, որ սինեմարուեստի սիրահարներուն մօտ ան ունի (եւ երեւի ունեցաւ) երկրպագուներ, որոնք կը հիանան իր խաղարկութեան թէ մկաններու ու ֆիզիքական ուժի ցուցադրութեանը:

Արնոյտ ժամանակ մը եղաւ նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քայլիֆորնիայի նահանգի կառավարիչ: Եւ իր այդ պաշտօնի եւ դիրքի օրերուն ան հիմնած է մեծ պանդոկ մը, որուն առջեւ նաեւ կառուցած է իր արձանը: Երեւի յաւերժանալու եւ յաւերժացնելու համար իր անունը...: Եւ արձանը, որ ցոյց կու տայ իր մկանները եւ մարմնի ուժը: Այն՝ որուն վրայ ան հիմնեց իր բոլոր ասպարէզային այսպէս ըսած «յաջողութիւնները» եւ գոհացուց իր երկրպագուները: Եւ այդ օրերուն, երբ տակաւին կառավարիչ էր, պանդոկի տնօրէնութիւնը չէր ուշացած իր հիացմունքը ցոյց տալու Արնոյտին եւ ըսած. «Երբ որ ուզէք գալ եւ հանգստանալ այս պանդոկը ձերն է»:

Եւ եկած է օրը: Եւ տարիներու

զրոյտմին հետ՝ գլորած գացած է նաեւ Արնոյտի պատասխանատու պաշտօնը եւ դիրքը ու երեւի այսպէս ըսած իր ֆիզիքական ուժը եւ մկանները, որոնք կորսնցուցած են երբեմնի հիացմունքի այդ ուշադրութիւնը: Եւ երբ Արնոյտ օր մը ուզած է պանդոկի իջեւանել՝ ստացած է պատասխանը. «Պանդոկին մէջ տեղ չկայ»:

Արնոյտին բարկութիւնը (թէ նեղութիւնը) եւ կամ ալ սրտին ցաւը: Ան որոշած է իր արձանին տակ փռել վերմակ մը եւ պակուիլ նոյնինքն այդ տեղը...: Այս ընելով, երեւի ուզեց ան արտայայտել իր զայրոյթը եւ բարկութիւնը: «Ինչպէ՛ս ժամանակները կրճան փոխուիլ», ըսած է Արնոյտ:

«Երբ պատասխանատու դիրքի վրայ էի», կը շարունակէ Արնոյտ, «մարդիկ զիս կը յարգէին: Բայց հիմա որ դիրքի վրայ չեմ՝ մարդիկ զիս մոռցած են: Մի վատահիք ոչ ձեր դիրքին, ոչ ալ դրամին, ոչ ալ ուժին եւ ոչ ալ մտքին: Ոչ մէկ բան կը մնայ յաւիտեան», եզրակացուցած է Արնոյտ:

Ուրեմն ի՛նչ բանի պէտք է վստահիլ...: Եւ ի՛նչ բան կը մնայ յաւիտեան...:

Բայց կայ ուրիշ իրական կեանքէ տարբերակ մը, որ իմ փորձառութեան մէջէն է եւ ոչ ալ քաղուած ընկերային տեղեկատուութեան միջոցառումներէն՝ ինչպէս որ էր Արնոյտին պատմութիւնը:

\*\*\*

Օգոստոս 2018, Ուեյլինկթըն, Նոր Զելանտա: Պիտի խօսքի Միջին Արեւելքի Քրիստոնեայ ներկայութեանը մասին, եւ Աստուածաշունչի առաքելութիւնը այդ տարածաշրջանի մէջ: Կազմակերպողը Նոր

Զելանտայի Աստուածաշունչի Ընկերութեան մեր գրասենեակն էր եւ որուն հրաւիրուած էին մայրաքաղաքի տարբեր եկեղեցիներու ներկայացուցիչներ եւ ժողովուրդ: Ինծի նաեւ իմացուցին, թէ Նոր Զելանտայի Կաթողիկէ համայնքի Գարտինայ-Առաջնորդ ճոն Տիու արքեպիսկոպոսը նաեւ ներկայ պիտի ըլլայ ելոյթին:

Եթէ սրահը սկսաւ լեցուիլ, բայց ես կ'ուզէի տեսնել թէ ո՛ւր պիտի նստէր Գարտինայը, որովհետեւ ոչ մէկ տեսակի կարգադրութիւն տեղի ունեցած էր այս առնչութեամբ: Բայց չէ՛ որ ես կու գայի Միջին Արեւելքէն ու տակաւին Պէյրութէն: Ուր համայնքային դրութիւնը եւ անոր հետ առնչուած ամէն տեսակի «փրօթոքոյթի» կարգավիճակները պէտք էր ըստ պատշաճի կազմակերպուէր:

Ելոյթէն տար վայրկեան առաջ սրահէն ներս մտաւ Գարտինայը: Վիզէն կախած էր խաչը եւ ունէր կրակակաշի օձիքը: Միայն այդքան: Եկած էր իր անձնական ինքնաշարժով եւ առանց վարորդի: «Կրցայ տեղ մը գտել եւ ինքնաշարժս կառատունի մէջ շարել»,... ըսաւ Գարտինայը, «Բաւական խճողուած էր»:

Ինծի համար այս բոլորը նոր երեւոյթներ էին եւ երեւի տարօրինակ: Եւ դարձեալ մեկնելով իմ միջին-արեւելեան կենցաղէն եւ պատշաճեցումներէն: Բայց պէտք էր սպասէի տակաւին աւելի անակնկալներու:

Գարտինայը առանց ուղեկցութեան նստեցաւ ժողովուրդին հետ եւ երրորդ շարքին մէջ: Եւ ինձմէ խնդրեցաւ, որ ես նստիմ առաջին շարքը, որպէսզի աւելի դիւրին ըլլայ բեմ բարձրանալը, նկատի ունենալով որ պէտք էր դասախօսիչ: Բայց, ինչ խօսք, այդ մէկը եղաւ մէկ մեծ մարտահրաւէր՝ չընելու համար ճգնաժամ: Ես առաջին շարք, իսկ Գարտինայը... երրորդ:

Դասախօսութենէ ետք՝ Գարտինային խնդրեցին, որ յատուկ աղօթք մը մատուցէ Միջին Արեւելքի Քրիստոնեայ ներկայութեանը համար: Ե՛ւ աղօթքը ե՛ւ աղօթքին մէջէն դուրս եկած Գարտինային հոգին, ցոյց տուին անոր Քրիստոնէական ու հոգեւոր զօրաւոր գիտակցութիւնը եւ հիմքը: Շատ յստակ էր թէ Գարտինային համար ինչ էին իր կեանքի առաջնահերթութիւնները եւ թէ ինչ արժէքներ կ'ուզէր ան փոխանցել ժողովուրդին եւ համայնքին:

Ելոյթէն ետք ուզեցի խօսիլ Գարտինային հետ: Ուզեցի լսել

անոր կենցաղին, բայց նաեւ կեանքին եւ հաւատամքին մասին: Եւ իր կեանքի կոչումը եւ ծառայութիւնը ան դրաւ նաեւ մէկ նախադասութեան մը մէջ, ինչպէս որ ինք ըսաւ. «Ես պարզ KIWİ BLOKE մըն եմ»:

Գիուհին՝ Նոր Զելանտայի ազգային խորհրդանիշ թուշունն է: Իսկ Պլոքը՝ բարբառ է, որուն արտայայտութիւնն-նշանակութիւնը կը պարփակէ որպէս «պարզ անհատ»: Ան՝ Գարտինայը Նոր Զելանտայի իր ժողովուրդին, ինքզինք խորհրդանշեց իր երկրի ազգային թուշունով՝ պարզ անհատն է...:

Ու դարձեալ հարցումը: «Ի՛նչ բանի վստահիլ»:

Վստահիլ անոր, որ կը փոխուի ժամանակի հետ եւ յաւիտեան չի մնար: Թէ Այն՝ ու Անոր՝ որ մնայուն Արժէք է եւ որ կը մնայ յաւիտեան:

\*\*\*

2018 տարին արդէն անցաւ եւ կամ շուտով պիտի անցնի պատմութեան առանցքին: Եւ այս շրջանին միշտ ալ հետամուտ ենք նայելու անցած տարուան եւ երեւի տարիներուն եւ հարց տալ թէ ի՛նչ ըրինք եւ ի՛նչ շահեցանք ու կեանքէն ի՛նչ մնաց...:

Եւ այս հարցումներուն մէջէն արժէ միանալ մեծ բանաստեղծին եւ անոր նոյնքան մեծ հարցումին. «Կեանքէն ինծի ի՛նչ մնաց...»: Բայց ունինք ասպարէութիւնը, թէ այս հարցումը անպատասխան չմնաց: Եւ դարձեալ բանաստեղծը՝ «այն որ տուի ուրիշին...»:

Եւ բանաստեղծին պատասխանը իրական է եւ ոչ երբեք երեւակայական եւ կամ անհասանելի: Որովհետեւ կայ մեծ ապրող օրինակը «ուրիշին տալու» իրականութեանը՝ մէջը: Եւ այս մեր Քրիստոնէական Աստուածաբանութեանը հիմքը՝ Աստուծոյ մարդեղութեամբ իրականացած օրինակն է: Հոն ուր Քրիստոս աշխարհ եկաւ եւ իր կեանքը «ուրիշին տուաւ» որպէսզի «ուրիշը» աւելի նոր եւ աւելի տարբեր եւ յաւիտենական (ու ժամանակին հետ չվերջացող) կեանք մը ունենայ: Եւ այս նոր կեանքը մեծ Արժէքի վրայ հիմնուած է՝ ուր «ուրիշը» ես, դու՛ն եւ բոլորս այս Արժէքով կը նորոգուինք եւ նոր կեանք կը ստանանք ու կը դառնանք նոր ու նորոգուած մարդ: Եւ այս Արժէքի կեանքի իւրացումովն է որ մենք կը դառնանք «կարեւոր» անձեր՝ անկախ թէ ի՛նչ դիրքի ու համբաւի վրայ կը գտնուինք: Եւ

Շար.ը էջ 42

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅՈՎԻԿ ԵՒ ՍԵՂԱ ՌԸՉԵԱՆ**



ՄԱՍԻՍ - 2019

# 90-Ամեակ (1927-1928)

## S.S. Գեորգ Ե. Ամենայն Հայոց եւ S.S. Սահակ Բ. Կիլիկիոյ Կաթողիկոսներ Վերականգնում Կիլիկիոյ Աթոռին

«Մենք միանգամայն անհրաժեշտ եւ անյետաձգելի ենք համարում Սիրիայի հայոց թեմերու շուտափոյթ կազմակերպումը, որպէսզի Հայաստանեայց Եկեղեցու զաւակները չընկնեն կաթուղի եւ բողոքական միսիոնարների որոգայթների մէջ»

ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Վերականգնումի Ծրագիրը

Համաշխարհային Ա. Պատերազմէն ետք, թէեւ ազատած եւ Երուսաղէմէն ալ հրապարակապէս դուրս ելած Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը, մտահոգ էր իր անցեալի Սիրի Աթոռի ապագայով, որքան ատեն որ Սիւս վերադառնալ չկար այլեւս: Օսմանեան պետութիւնը պարտադրած էր զինք Երուսաղէմ «հաստատուիլ» եւ մոռնալ Սիրի հիմնական նստավայրը: Այդ խառնակ եւ անորոշ կացութեան մէջ Սահակ Բ. Կաթողիկոս ամէն ճիգ կ'ընէր 1916-ի իր Երուսաղէմէն շատ կարճատեւ կեցութենէն ետք, միայն 15 ամիս, յանակնկալ աքսորուելով դէպի Դամասկոս: Մտիպուած օժանդակութիւնը կը խնդրէր Սիւրիոյ եւ Լիբանանի Երուսաղէմապատկան երեք թեմերը Կիլիկիոյ Աթոռին փոխանցելու:

Նոյն մտահոգութիւնը ունէր նաեւ Ամենայն Հայոց Ս.Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսը որ 1924 թուին կը գրէր Սահակ Կաթողիկոսին հասկնալու համար Սիւրիոյ թեմերու կացութեան մասին: Թէեւ Կիլիկիոյ ամենէն հաստատ եւ կեդրոնական թեմը Բերիոյ (Հալէպ) թեմն էր որ կը մնար միակ յնարանը պատմական Աթոռին, Կաթողիկոսը կարիքը ունէր յաւելեալ թեմերու, կարենալ Կաթողիկոսական Աթոռը վերականգնելու: Տարի մը ետք, Գեորգ Ե. Կաթողիկոս կը կրկին կը գրէր Խապայեան Կաթողիկոսին «Կիլիկիոյ հայոց թեմի շուրջ եղած տարածայնութեանց մասին նրա իրաւասութեան խնդրի վերաբերեալ»:

Սահակ Կաթողիկոս Հալէպէն կը պատասխանէր Ամենայն Հայոց Կաթողիկոսին 1927 Ապրիլ 12 թուակիր, առանձին նամակ մըն ալ գրելով Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նախանդամ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարեանին, երկուքին ալ աւարտելով որ «մենք գլուխնիս հանգչեցնելու տեղ չունինք»: Միայն երկրորդ նամակին մէջն էր որ կը յայտնէր իր խնդրանքը

«ձանձրութիւն չտալու համար Նորին Սրբութեան», տալով Բագրատ արքեպիսկոպոսին հայոց մօտաւոր թիւը՝ 1500 անձ Լաթաքիոյ մէջ, եւ 3-4000 անձ Դամասկոսի մէջ, չլթաքցնելով իր յետին միտքը թէ «Կիլիկիոյ եւ Երուսաղէմի Աթոռներու եղբայրական համագործակցութիւնը միայն Սրբազան Հայրապետի օրհնալիք միջնորդութեամբ գլուխ կրնար ելնել»:

Սահակ Կաթողիկոս տակաւին չէր համարձակեր ուղղակի թեմերու փոխանցումի խնդրանքը գրաւոր կերպով յանձնելու Ամենայն Հայոց Հայրապետին: Ան նամակ մը եւս կը գրէր այս անգամ ուղղեալ Գեորգ Ե. Կաթողիկոսին արքեպիսկոպոսին, ներփակելով օրինակ մը իր «ԿՏԱԿ»-էն զայն յանձնելու համար Նորին Սրբութեան:

### Մայր Աթոռի Միջնորդութիւնը

1928 Դեկտեմբեր 25-ին Մայր Աթոռ առաջին անգամ միջնորդելով Երուսաղէմապատկան խնդրոյ առարկայ թեմերու հաւանական փոխանցումին ի նպաստ: Գեորգ Ե. Կաթողիկոսին եւ 1923 թուականէն Գեորգ Ե. Կաթողիկոսին նշանակուած Մայր Աթոռի Տեղակալ Խորէն արքեպիսկոպոս Մուրատբեկեան յանուն Կաթողիկոսին կը գրէր Եպիսկոպոսայ թեմի Առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակեանին, ներփակելով Ս.Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսի 1928 թուականի պաշտօնագիրը «զայն անձամբ մատուցանելու Ամենապատիւ Եղիշէ Դուրեան Երուսաղէմի Պատրիարքին, իմանալու նորա անձնական կարծիքը եւ գեկուցանել վեհափառ Հայրապետին»: Քաջ մը առաջ էր թալով, Տեղակալին նամակը կ'ըսէր թէ փոխանցման խնդիրը կը քննարկուէր «բազմակողմանի կերպով, լայն սկզբունքային տեսակէտով, ի նկատի ունենալով միայն Սիւրիայի հայութեան ազգային-կրօնական, եկեղեցական ու վարչական գործերի կազմակերպումը ու վարչաձեւի միութիւնը»:

Նոյն հարցի շուրջ Մայր Աթոռի Տեղակալը յանուն Գեորգ Ե.



Կաթողիկոսին կը գրէր Եղիշէ Պատրիարքին թէ «Մենք միանգամայն անհրաժեշտ եւ անյետաձգելի ենք համարում Սիւրիոյ հայոց թեմերու շուտափոյթ կազմակերպումը, որպէսզի Հայաստանեայց Եկեղեցու զաւակները չընկնեն կաթուղի եւ բողոքական միսիոնարների որոգայթների մէջ»: Իր կարգին, Խապայեան Կաթողիկոս 1927 Ապրիլ 27 թուակիր նամակով կը նախատեսէր «Լիբանանի եւ Սիւրիոյ երկու գլխաւոր թեմերու կազմութիւնը», եթէ իր խնդրանքին ընթացք տար Երուսաղէմի Հայոց Պատրիարքը, «առժամաբար» իրեն յանձնելով Պէյրութի եւ Դամասկոսի եկեղեցիները իրենց յարակից տեսուչներու բնակարաններով: Խապայեան գնահատանքի խօսք մըն ալ կ'աւելցնէր Դուրեանի նկատմամբ թէ «Երուսաղէմի ներկայ գահակալը անձիս պէս կը սիրեմ եւ կը յարգեմ իբրեւ ազգապարծանք անձնաւորութիւն՝ իր բազմակողմանի հմտութեամբ»:

### Գեորգ Ե. Կաթողիկոսի Վերջնագիրը

Այս կերպով յայտնի կը դառնար որ Մայր Աթոռը կը հետաքրքրուէր Կիլիկիոյ Աթոռի թեմական կազմակերպութեամբ, երբ նոյնիսկ 1929 Ապրիլ 30-ի Հայրապետական մասնաւոր յանձարարութեամբ Գահիրէն Երուսաղէմ կը մեկնէր Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակեան «Դուրեան Պատրիարքին յանձնելու համար Աթոռին ուղղուած կարեւոր գրութիւններ եւ խորհրդակցելու համար անոր հետ»: Թորգոմ արքեպիսկոպոսի իսկ վկայութեամբ, արդէն խնդրոյ առարկայ թեմերու փոխանցումը կատարուած էր երբ

ինք Երուսաղէմ հասաւ, զայն վերագրելով «Եղիշէ Սրբազան Պատրիարք Հօր վեհանձն ողջմտութեան», նոյնիսկ Գեորգ Ե. Կաթողի-կոսի նամակը ստանալէն առաջ:

### Թեմերու Փոխանցումը

Թեմերու փոխանցման առընչութեամբ Մայր Աթոռի եւ Կիլիկիոյ Աթոռի միջեւ փոխանակուած վերջին գրութիւնը կը կրէր 1929 Օգոստոս 12 թուականը, որով Տեղակալ Խորէն արքեպիսկոպոս Մուրատբեկեան կը գրէր Սահակ Բ. Կաթողիկոսին թէ «դարերի ընթացքում հովանաւոր ու պաշտպան է հանդիսացել իւր շրջանակի մէջ մնացած հայութեան համար, իսկ այսօր, դժբախտ բերմունքների հետեւանքով իւր հօտը փոխադրուած է այլուր»: Նամակը Խորէն արքեպիսկոպոս կը փակէ «ի սրտէ բարեմաղթութեամբ եւ ցանկութեամբ որ Աթոռիդ յարատեւութիւնը ապահովէ միշտ օժանդակ գործակցութիւնը Ընդհանրական Հայրապետին հետ»:

### Վաւերագրական Տեղիք

Կարելոր է նաեւ անդրադառնալ այն բացառիկ հատորին՝ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան Ս.Տ. Սահակ Բ. Խապայեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս 1891-1940» հրատարակութիւն Ռսկան Երեւանցի Հրատարակչութեան, Երեւան 1997, Սանդրո Բեհբուղեան՝ խմբագիր-արխիւիստ: Վաւերագիրներու սոյն հատորը կ'ամփոփէ 590 էջերու մէջ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի կեանքին ու գործունէութեան վերաբերեալ անտիպ

Շար.ը էջ 43

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԻԱՐ ԱՐԱ ՏՈՍԹՈՒՐԵԱՆ



### Կեանքի Փառքը

ՎԵՐ. ՏԻԳՐԱՆ ՇԱՆԼԵԱՆ

Տիեզերքը շարունակական փոփոխություններով շարք մը կը ներկայացնէ մեզի: Աշխարհի սկիզբէն ի վեր ամբողջ բնութիւնը անընդհատ զարգացումի մէջ է: Բուսական աշխարհը իր բիւր գեղով եւ պերճանքով շարունակ դէպի զարգացում կը դիմէ: Քաղցրալար մեղեդիներով դայլայլող թռչուններ, ահագին պորակներ, դղրդեցնող վայրի գազաններ, լայնատարած ծովերու եւ ընդարձակ ովկիանոսներու մէջ սրբաշու ընթացող կենդանիները՝ ամենափոքրէն այնքան փոքր, որ յիսուն միլիոնը մէկ ցորեն չի կշռէր, մինչեւ այն ահագին կէտձուկը որ երբ ալիքներուն վրայ նիրհէ հեռուէն դիտողին կապոյտ շուրերուն վրայ տարածուած կղզի մը կը թուի, կը ձգտին դէպի զարգացում: Բնութեան հարգատ գաւազը, Աստուծոյ ստեղծագործութեան գլուխ գործոց եղող մարդն ալ բնաւ գուրկ չէ մնացած այդ ազդեցութիւններէն եւ էական պայմաններէն. ան ալ տիւ եւ գիշեր կը ջանայ հասնիլ բարգաւաճումի վերջին սահմանին եւ այս դէպի զարգացում ձգտումին ամենէն հզօր ազդակներէն մէկը եղած է փառքի սէրը մարդուն մէջ: Ամէն մարդ փառասէր է քիչ կամ շատ, եւ թերեւս ամէն մարդու իրաւունքն ալ է այն: Սակայն շատեր կը փնտռեն կեանքի փառքը աշխարհին ու անոր վայելքներուն մէջ, որուն վախճանը դուրսի խաւարը եւ կորուստն է:

Ոմանք ամէն ջանք ու տաղանապ յանձն կ'առնեն մեծ հարստութեան եւ համբաւի հասնելու համար, հագին կը տիրանան անոր եւ ահա «ունայնութիւն ունայնութեանց» գոռացող փողին ազդարար ձայնը կը լսեն ու յուսահատութեան անյատակ անդունդին մէջ կը խորասուզուին: Հազիւ կ'ըսեն «արդ ո՛վ իմ անձս կե՛ր, իմէ՛ եւ ուրախ եղի՛ր», եւ ահա նոյն գիշերը իրենց հոգին կը պահանջուի:

Խումբ մը երիտասարդ հրավառ կը փնտռեն զայն ֆիզիքական հանգիստի ու անդորրութեան մէջ. սակայն գուարճութիւններու, գազիր հաճոյքներու սէրը եւ շուտով հարստանալու բուռն տենջանքը թառամեցուցած է շատերու կեանքը: Եւ ոմանք թէպէտեւ բնաւ դիտաւորութիւն ունեցած չեն ինքզինքնին մամոնային նուիրելու, բայց ջանացած են ընել ինչ որ

Քրիստոս ինքը անկարելի հուշակած է. կը ջանան շարունակ ծառայել իրենց Արարիչին՝ Աստուծոյ եւ մամոնային միանգամայն:

Այս կեանքը երիտասարդին համար գեղեցիկ ու ոլորապտոյտ ճամբու նման է ուր ամէն բան վարդազոյն կը տեսնէ, եւ որուն երկու կողմերը տարածուած քաղցրաբոյր ծաղիկներ կը հրապուրեն զինք: Այսպէս ան աշխարհը կը նկատէ լոկ իբրեւ զբօսավայր մը՝ ուր կը մտնէ ապագայ երջանկութեան ու հաճոյքներու համար մեծամեծ յոյսերով: Եւ քաղցրահամ պտուղներուն համը առնելով, աւելի խանդոտ կ'աճապարէ աւելի յառաջ երթալու եւ հասնելու հոն՝ ուր կ'երեւակայէ թէ ամէն բան աւելի գեղեցիկ պիտի ըլլայ: Հետզհետէ յառաջ կ'երթայ եւ ահա սաղարթախիտ ծառերը կը սկսին տժգունիլ, անուշահոտ ծաղիկները կը սկսին թառամիլ, պտուղները կ'աներեւութանան, եւ մէջ մըն ալ կը տեսնէ որ հասած է անապատային ամառութեան մը մէջ: Մեծ բան մըն է երիտասարդ ըլլալ ունենալ ազնիւ սիրտ, սիրտ մը ճշմարտութեան ընդունակ. եւ ոչ թէ ունակութիւններէ կաշկանդուած, կանգնիլ կեանքի սեմին վրայ լի եռանդով եւ յոյսով: Քրիստոնէութեան զրահովը պաշտպանուած եւ վսեմ ու վեհանձն նպատակներով ներշնչուած գործել:

Դարձեալ հազարաւորներ բերաւոր բաներու մէջ կը փնտռեն իրենց կեանքի փառքը: Միջախէլ Անճելօ եւ Ռաֆայէլ կը զգային զայն գտած ըլլալ բնութեան գեղազուարճ տեսարանները նկարելուն մէջ: Ուրիշ մը իր մենարանին մէջ փակուած վեհ քերթուածներ զարդրելուն ու քաղցրալուր մեղեդիներ յորինելուն մէջ: Կեսար եւ Նաբոլէոն կարծես կը տիրանային անոր քանդելուն, աւերելուն, իրենց դրացի ազգերը նուաճելուն ու աշխարհակալութեան մէջ:

Եւ սակայն Նազովրեցի Յիսուսին նայեցէք, այն երկնառաք երիտասարդին, ուր իր փառքը կը փնտռէր մոլորեալ ոչխարը բարերար հովիւին խնամքներուն յանձնելուն եւ զանոնք առատ արօտավայրեր եւ յաւիտենական կեանքի շաւիղները առաջնորդելուն մէջ, եւ շարունակ «Միրեցէք գիրար» քարոզելուն մէջ, եւ յիրաւի գտաւ ու կը վայելէ զայն: Երջանկութիւնը ու փառքին պսակը հոգիին

Շար.ը էջ 43

### Սիրոյ, Աշխատանքի եւ Հզօրացման Ամանոր, Յոյս Աստուծոյ

Ռ. ԿՈՐԻԻՍ

Ահա նոր տարեմուտի շեմին ենք կանգնած մուտք գործելու եւ գիրար շնորհաւորելու, ինչպէս ընդունուած սովորութիւն է նուէրով ենք ներս մտնում թէ՛ տնեցիներին ուրախացնելու եւ թէ՛ մեզ հոգեպէս գոհ եւ բաւարարուած զգալու համար: Ամէն ընտանիք իր տունն ու օջախն ունի, համայն հայ ընտանիքների միասնական տունը Հայաստանն է, բոլոր հայերի պապենական տունը, պարտինք մեր բոլորիս տանն՝ հայրենիքին էլ նուէր տալ, նուէրը լինելու է զանազան տեսակի եւ բնույթի, ինչպէս նիւթական, արուեստից ստեղծագործութիւն, գիտական գիւտ՝ պաշտպանողական եւ տարբեր բնագաւառներին առնչուող, անշահախնդիր ծառայութիւն, վերելքի եւ բարգաւաճման համար աշխատանք, իշխանաւորների համար հայրենիքի եւ ժողովրդի շահերը անձնականից վեր դասելու նպատակայայ քաղաքականութիւն, հայրենիքի եւ ազգային արժէքների պաշտպանութիւն մեր հողերի եւ Յեղասպանութեան պահանջատիրութեան հետեւողական աշխատանք, քաջալերանք մեծահարուստներ գան եւ ներդրումներ կատարեն: Մեր նիւթական նուէրները կարող ենք երբ ցանկանանք Հայաստանի Համահայկական Հիմնադրամին նուիրել, այսպիսով արդարացրած կը լինենք մեր հայ լինելը, հայօրէն ապրելը, եւ այսպիսով կը լինենք հպարտ մեր ճոխ եւ հարուստ հայրենիքով ուրախացողներ:

Հայրենիքը մինչ այսօր գոյատեւել է իւրաքանչիւր դարաշրջանի խիզախ, հերոսական եւ նուիրատու սերունդների կողմից, աշխատենք մենք էլ մեր հերթին նուիրատու լինել որեւէ բնույթով ու արարքով հայրենիքի ծաղկուն կեանքին, որպէսզի յետագայ սերունդների քաջալերանքի ազբիւր դառնանք եւ պատուով չիշուենք:

Այս գալիք տարին հաւանաբար մեր հայութեան կեանքում աննախադէպ իրադարձութիւնների ակնատեսը կը լինենք: Ինչպէս բնութագրուեց՝ թաւշեայ յեղափոխութեամբ, ժողովրդի կամքով ու պահանջով Սերժ Սարգսեանի վարչակարգը վերջ գտաւ, յեղափոխութեան ղեկա-

վար՝ Նիկոլ Փաշինեան իր համախոհներով կազմեցին ժամանակաւոր կառավարութիւն: Սերժ Սարգսեանի օրօք երկիրը կողոպտող ու թալանող որոշ մարդիկ ձեռփակալուեցին եւ բանտերը նետուեցին, մարտի 10-ի հարցով Ռեբերթ Քոչարեանը կալանաւորուեց եւ ազատագրուեց, սակայն հոկտեմբեր 27-ի Ազգային ժողովի մէջ ահաւոր սպանութեան մասին դեռ սպասում ենք պատուիրատուի անունը յայտարարուի: Այն պետական գործիչները, որոնք իրենց անձնական շահերի համար ծառայում են օտարներին եւ ծածուկ դաւաճանութիւն են անում, նրանք պէտք է խստագոյնս պատժի ենթարկուեն:

Դեկտեմբեր 2018-ին կատարուած Ազգային ժողովի կուսակցութիւնների ընտրութիւնները համարձակ քայլ էր դէպի թափանցիկ ընտրութիւններ, կաշառակերութեան եւ կաշառքի դէմ պայքարը Նիկոլ Փաշինեանի ժամանակաւոր կառավարութեան ձեռքբերումներ պէտք է ընդունել եւ գնահատել: Ժողովրդի ընտրութեան մասնակցութիւնը անմխիթար էր 48 տոկոսով, ինչու այս անտարբերութիւնը, թերեւս վստահութեան պակասը լինի, թէ չքուէարկողների հայրենիքի ճակատագրի նկատմամբ անհետաքրքրութիւն: Ուսումնասիրութեան կարիք, վիճակը պարզելու եւ վերացնելու: Կուսակցութիւններից ինչո՞ւ չՅԻ եւ Սասնայ Մուրը չընտրուեցին, կարելոր էր նրանց մասնակցութիւնը: Թող ժողովուրդը խուռնեւրած ընտրութիւններին մասնակցի եւ արդարօրէն ու գիտակցօրէն ընտրի նրան, որ կը ծառայի երկիրն ու ժողովրդին, դա անշուշտ իշխանաւորների ղեկավարելուց կախում ունի: Եթէ իշխանաւորը սիրեց երկիրը եւ անմնացորդ ծառայեց երկիրն, ազգին եւ ժողովրդին, իմացէք որ ժողովուրդ կայ մէջքին կանգնած եւ սիրուած, ուր սէր կայ, այնտեղ կեանքն է ճառագում, յոյս Աստուծոյ սիրով, աշխատանքով եւ նուիրուածութեամբ մեր սպասելիքներն ու ցանկութիւնները իրականութիւն կը դառնան, Հայաստան կ'ունենանք հզօր եւ խաղաղ:

Ահա այս մտածումներով դիմաւորենք 2019-ը ազգային ռազմավարութեամբ ծառայող մարտահրաւէրները չհզօրացնելու համար:





ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ  
Middle Eastern &  
European Cakes  
Delicious Pastry  
For All Occasions  
(Glendale, Anaheim & Pasadena)



ՄԱՍԻՍ - 2019

Ձանգեգուր

Քարտ արցունք է, քարտ ժպիտ Քարտ ծաղկունքի քնքշանք է  
Քարտ անպրոպ է ու ծիածան է Քարտ մագաղաթ, քարտ մատեան է  
Երազներիս քարտ ծաղիկ ու քարտ հեքիաթ

Համո Սահեան

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Մեղմուժ էր արեւի կարմիր քուրան, նրա բոսոր ճառագայթները ալլեւա չէին հրկիզում մեր ճանապարհի ուղին, հեռու լեռների լանջերին լենած, իր հնոցի հրաշափառ կարմիրն էր շող տալիս նրանց երեսին: Սլանում էին երկաթուղու շարժակազմի բեռնակառքերը, շտապում հասնելու իրենց վերջնագծին: Բեռնակառքի ուղեկցողը բարձրաձայն կանչում, որ հատում էինք խորհրդային Հայաստանի նոր սահմանը, այն սահմանը, որ գծուած էր աշխարհի թատերաբեմ ելած նոր գաղափարախօսութիւն ու նոր կարգեր կրող պետութեան ու իրենց բարեկամ թուրքի կողմից: Սեղմել էին Արմին-Հայ արի մարդկանց ցեղի հայկազուն թագաւորների աշխարհների մի ափ հողի վրայ՝ «Քար» էին դարձրել հայոց սահմանները: Ինչքան սեղմեցին, այնքան ցեղի ուժականութիւնը հզօրացաւ, աղամանդացաւ: Արմին-Հայի հանձարից ճառագած լույսի, իմաստութեան, գիտութեան արեւները բոցավառուեցին, լույսի հեղեղ անձրեւեցին հեռու-հեռու-աշխարհներ, աստղերի հետ խօսեցին, նրանց վար բերին իրենց Արա ատուծոյ լեռան մի բլուրին: Կեղծապատիր, կարմիր զգեստ հագած խառնածին, խաշնարած անապատային գորշ գայլեր, առանց իրենց սահմանի, նոր սահմանների էին հաւակնել, թողել էին իրենց գարշապարի տակ առնել բնիկ, ազնուազարմ հին-հին ցեղեր ու ազգեր:

Հայ նոր գաղափարակիրները ասել էին՝ այլեւս ոչ մի սահման, աշխարհի մէկ վեցերորդի վրայ կայ միայն մէկ սահման: Արմինները, իրենց ծննդաբանական ժառանգականութեամբ հաւատացել էին խօսքի ճշմարտութեանը, բունն էին հաւատացել, պաշտել տիեզերքի խորհուրդը գրկած հին ու նոր աստուածներին: «Նոր գաղափարախօսութիւն սոցիալիզմը, դեռեւս մարդկութեանը օգուտ չտուած, մեր տունը, մեր սահմանները քանդեց» պիտի աւետէր հայ բանաստեղծ՝ իմաստուն Աւետիքը: Տեսա՞ք, յետոյ ի՞նչ պատահեց:

Իրար զուգընթաց մետաղեայ սահուն գծերի վրայ սլացող գնաց-

քի յոգնած անիւները կանգ էին արել: Վերջին կայարանն է, յայտարարեցին, Հայոց Սիւնեաց աշխարհի Բակուր Նահապետի Ձանգեգուր գաւառի Ղափան քաղաք էինք ժամանել: Հայոց Կիլիկիայի ազատագրական կռուից եկած Հայկական կամաւորական լեգէոնի կապորալ, Լագիսեան գերդաստանի Պօղոս աւագի կրտսեր տղայ՝ Արմենակը, կնոջը, հինգ զաւակներին ու քրոջը ՀԱՅԱՍՏԱՆ էր բերել: Ղափան, հին Կապան քաղաքը խուստուժի լեռան ստորոտին:

Խուստուժի լեռ, արարչութեան բազում տարրեր իր մէջ ամբարած, իր ստորոտի գոգաւորութիւնում գրկել է փոքրիկ մի քաղաք: Աղամամութիւն էր, լուսընկայ աղջնակը դեռ չէր հասցրել իր սպիտակ անուշ դէմքի ցոլքից ճառագած կաթնաթուր լոյսը սփռել հազար գոյնի Ձանգեգուրի լեռների վրայ: Մէկ շաբաթեայ ճանապարհի յոգնաբեկ մարմնի ոտքերով տոփեցինք Ձանգեգուրի հողը. Սիւնեաց աշխարհի Սիսական Բակուր Նահապետի իշխանազունների, Դաւիթ Պէկի քաջերի յաղթական ոգիների հուրը սարսուռով լցրել մեր հոգիները: Ուղեկցողը ընթրիքի հրաւիրել մեզ, ժողովրդական գործիքների նուգախումբը մեր պատուին, մեզ համար դեռեւս անձանթ մեղեդիներ էր հնչեցրել, զգում, ընկալում էինք հայոց երգի ելեւէջները, նուագարանների հնչիւնները: Ափսոս յոգնած էինք, որ գուարթանայինք, երգի ոգին պայթէր մեր սրտերում, Արմենակ հայրը պարի ելնէր, պիտի տոփէր հայրենի երկրի հողը, այնպէս՝ ինչպէս, Մուսա լեռան գետակի ափի Սօսի ծառի ստուերին ազգակիցների հետ իր պարը:

Արեգակի արդար լույսի մեր առաջին առաւօտն էր, հոսող ջրի ծորակ կար երկաթուղու շարժակազմի բեռնակառքին մօտիկ: Սառնորակ ջրով երեսս ցօղեցի, ափերով ջուր ըմպեցի, մտաբերեցի, որ մի տասնամեակ առաջ վերջին անգամ ըմպել էի Մուսա լեռան իմ հայրենի աղբիւրի անապակ ջուրը, ըմպել էի ժայռից բխած, ծննդավայր Եօղունուղ գիւղի Սազըզի ձորակի լազգրսենց անտառակի սրտից յորդացած՝ լազգրսենց Սարգիսի փորած աղբիւրի արցուն-



քանման վճիտ ջուրը: Մօտիկ ձորից վազում էր լեռան բարձունքից ուժականութիւն հաւաքած պղտորած ջուրը, գահավէժ հոսք վերցրած, արագավազ յորձանքով շտապում ցած, քիչ անց հատելու նոր գծուած հայոց սահմանը, կենարար ջուր բաշխելու, ո՞ւմ... Հայոց լեռներն ու անտառները իրենց մէջ ամբարած ջուրը ցած էին հոսում՝ ումից գաւթուած դաշտերը ոռոգելու... Պիտի կասեցնէին այդ ջրերի հոսքը, լցնէին ջրամբարներում՝ հայրենի ցորենի դաշտերը, այգիները ողողելու, Շամիրամի պարտէզներ բարձրանալու: Երկու անձանթներ մօտեցել էին բեռնակառքին, ուշադիր դիտել արդէն ցած իջած նոր հայերին: Մօտեցայ, նրանց ողջոյնեցի արեգակի լույսով, հարց ու փորձ արեցին, ասացին՝ արդեօք չէի՞ք ցանկանայ իրենց բնակավայրում բնակութիւն հաստատել, խնդրեցի հայրիկիս համաձայնութիւնը: Մի բեռնատար մօտեցաւ բեռնակառքին, մեր սնդուկները ու կապոցները բարձեցինք: Խմբից եւս երկու ընտանիքներ միացան մեզ, մէկը՝ Յունաստանից ներգաղթեալ, միւսը Մուսա լեռան Եօղունուղ գիւղից համագիւղացի՝ Ղամբարեան Աւետիս ու Եսայի եղբայրների ընտանիքները:

Բեռնատարների թափքերին բազմած, անցնելով Ողջի գետի կամուրջը, գնում դէպի նոր բնակավայր: Կարճ ժամանակ անց առաջին գիւղամիջումն էինք՝ Արծուանիք գիւղ, Բարգուշատ լեռնաշղթայի արեւմտեան լանջին: Այդտեղ էր վերջանում լերկ լեռնալանջը՝ իր ահարկու գանգուածում ամբարած բազմամետաղների հանքանիւթի հազուագիւտ տարրեր: Կարմիր տէրերը այն անյազ շահագործում էին, կիսամշակուած վիճակով անդադրում տանում միութեան գործարաններ, որպէսզի նրա

տէրը այն չկարողանար տեղում գտէր:

Մի առիթով ծանօթի տանն էի, խօսակցութեան ընթացքում միտք յայտնեցի, թէ ինչու համար Հայաստան աշխարհի մետաղական հանքերը այդքան յախուռն հետախուզում են, արդեօք յետագային այն Հայ ժողովուրդին օգտակար չէ՞ր լինելու: Ձէի ճանաչում խօսակիցներիս, նրանցից մէկը Մեղրի գաւառի կուսակցական շրջանային կոմիտէի առաջին քարտուղարը եղել, ուղղակի սպառնազին բղաւեց՝ «Ինչ է, կարծում ես խորհրդային իշխանութիւնը փրօ՞ւելու է, առարկեցի, որ նման բան չէր «Միտք բանիս» իմաստը: Սխալուել էի, բախտաւոր էի, որ այն տեղեկացուած չէր եղել «Ազգային Ապահովութեան Կոմիտէի» արդէն մի անգամ նրանց կողմից գողւաջուած էի: Սակայն, այդ գրոյցից երկուտասնամեակ յետոյ, ընթերցողը իմանում է ինչ պատահեց այդ շարի կայսրութեանը, փլուեց, լաւ է նրա փլատակների տակ չմնաց Հայաստանը, կանուխ էին գնացքից թռել:

Ղափան, Արծուանիքից էր սկսում Բարգուշատի լեռնաշղթան, հսկայածաւալ ու ամեհի տեսքով լեռնազանգուած՝ Բարգուշատը, իր ծոցում ամբարած ունէր մոլորակի բազմաթիւ հազուագիւտ ու ցրուած մետաղների տարբեր տարրեր: Բարգուշատ, ամրանիստ ու տիրական լեռնաշղթան Սիսական աշխարհն է իր ափին պահած, գնում գեղամայ ծովի ջրերը պատնէշելու: Սեւանայ ծով՝ գեղամայ լեռներով գօտեպնդուած կապոյտ չքնաղ գեղեցկուհի, աստղեր իրենց մէջքերին պարբունած «Իշխան»ներ, երկնքից պոկուած մի անամպ կապոյտ կտոր, գիշերներին աստղերն էին Հայոց



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ  
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՌՈՒԲԷՆ ԵՒ ՇՈՂԻԿ ԵԱՂՍՁԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2019

# Ձանգեզուր

Հին աստուածների հետ այնտեղ իջնում՝ նրա սառնորակ ջրերում հովանում: Դարերով այնտեղ ամբարուած երկնքից իջած շաղոտ ջրերի կուրծքը պիտի պատրէին, նրա հանդարտ կոհակների հանգիստը խռոված, կատաղի յորձանքով ներքեւ հոսեցնէին՝ բազում ջրանիւներ պտտեցնելու, յանուն ինչի՝ պիտի ասէին գալիք սերունդները:

Արծուանիքի մօտակայքից սկսում են Ձանգեզուրի փարթամ կանաչով զուգուած կուսական անտառները, բեռնատարները շնչակտուր հեւքով բարձրանում, ճանապարհը ուղղակի միարձուգ անտառների մէջ, անցնում ձորերով ու ձորակներով: Ձանգեզուրում էինք, ձորերից մէկում հինաւուրց վանքի վիթխարի զանգերի որոտահին ձայնի արձագանգն ունկնդրում, գաւառակի աչք տարածքը զանգերի երկիր՝ Ձանգեզուր էին անուանել: Ուրիշ մի պատուհի համաձայն, թշնամու մի զօրախումբ մօտեցել գիւղերի տարածք, ժողովուրդին զգուշացնելու համար վանքի զանգերն էին հնչեցրել, առաջնորդը ասել էր՝ «Ձանգերը ի զուր են հնչում թշնամին մօտ է», որից շրջանի անուանը կոչել էին՝ «Ձանգեզուր»:

Օգոստոսի տաք ամիս, անտարբեր անցնել հողի ընդերքից պայթած աղբիւրների մօտից ու սառնորակ ջուր չըմպել, անկարելի էր: Բեռնատարի վարորդը իւրաքանչիւր նման աղբիւրի մօտ կանգ առնում, բոլորը իջնում, ցածրանում ջրի հոսքի առաջ, ափերով ջուր ըմպում: Այդ անտառները իմ ծննդավայր Մուսա լեռան խիտ ու մացառոտ անտառների նման էին, այստեղ դժուար էր պատասպարուել ու կռիւ տալ թշնամուն: Մի քանի ժամուկ ընթացքից յետոյ բեռնատարները կանգնել էին ագերիթուրքերով բնակեցուած Շուռնուխի գիւղին մօտիկ փայտամշակման գործարանի բանաւանի փայտաշէն երկար տների մէջտեղի հրապարակում: Ամբողջ աւանը ոտքի էր, կանչում էին՝ «Թագա կալան» (Նոր եկած) հայեր են եկել: Այդ լեռնական հայերը այդպէս կոչեցին մեզ մեր ամբողջ կեցութեան ընթացքին, սակայն երբեք ոչ այնպէս, ինչպէս այլամերժ ու արհամարական իմաստով անուանել էին եկող հայերին՝ մայր ոստանի ու այլ շրջանների շէնների ու քաղաքների բնիկ հայերը...:

Ժամանակաւորապէս տեղաւո-

րել գործարանի ակումբում, մինչեւ որ իւրաքանչիւր ընտանիքի յատկացրել մէկ սենեակ, որ հագիւ բաւականացնում անկողինները նրա յատակին փռելու: Գործարանի սնօրէնի կիրն իմանալով հայրս բժիշկ է՝ նրան հարցրել արդեօք վասպուրականցի՞ էր, հօրն էր փնտրում որբացած, ծնողազուրկ Հայ կիրն, նա նորէն որբացաւ...:

Ակումբում մեր կեցութեան ընթացքին գործարանի հաշուին կերակրեցին մեզ, մեր պատուին ժողովրդական գործիքների համերգ եղաւ, Գորիս քաղաքի խումբ էր, ասացին Գուսան Աշոտն է: Մայեթ Նովայի, ձիւանու, Շերամի գուսանական աւանդույթը շարունակող Գուսան Աշոտ, Ձանգեզուր աշխարհի գաւակ, նրա երգի ու նուագարանների հնչիւնները, բանաստեղծական խօսքի հետ տիրել Հայաստան աշխարհին, նրանից դեռ շատ հեռուներ, տիրաբար մուտք գործել Հայ հանճարների տաճար: Նրա երգը ու բանաստեղծական խօսքը իր ծննդավայրի հմայքը, Խուստուփի ու Բարգուշատի լեռների վեհութիւնը հաղորդել սերունդներին: Ինչքա՞ն փառաբանել իր աշխարհը, Աշոտ, փառք քեզի, քու երգի խոյեանքների արձագանգը քու հայրենի Ձանգեզուրի հովիտներում ու լեռներում, Հայոց աշխարհում միշտ կը հնչեն: Աշոտ, քու աշխարհում հիմա անէացել է թաթարի ուրուակաւնը: Պատիւն արժանաւորացն է, Աշոտ քեզի է, Արմին-հայերի լոյսի իմաստութեան հսկաներինն է:

Գործարանում աշխատանք էին առաջարկել: Ներգաղթածների բոլոր աշխատունակ անձինք համապատասխան աշխատանքի լծուեցին՝ հօրաքոյրս, մայրս, տասնըհինգ տարեկան քոյրս բանուոր եղան, հայրս՝ Լազիսեան աւագ Պողոսի տղայ սօքթոր Արմենակը, որպէս նախկին զինուոր հրացանը ուսին գործարանի ելքի դարպասին պահակ կանգնել: Գործարանի տնօրէն արցախցի Եղիշէ Բալայանը, որպէս ուսեալ տղայ առաջարկել էին զորիս քաղաքի գործադիր կոմիտէ գնալ՝ յարմար աշխատանքի ընդունելու: Ծանապարհով անցնող մի բեռնատարի վարորդին միջնորդել Գորիս քաղաք տանել էին: Նկատելով, որ օտար մարդ էի, բեռնատարի վրայ եղած մարդիկ հարցուփորձ անում էին՝ եկած երկրիս մասին: Երեկոյան միջին բեռնատարը Գորիս էր ժամանել, խնդրել էի մեզ հետ ճամբորդող մի

տարեց կնոջ ուղեկցել ինձ քաղաքի հիւրանոց՝ «չեղաւ ասեց, մեր քաղաքում հիւրն աստուծոյնն է» ստիպել իր հետ գնալ իրենց տուն գիշերելու: Բազմամղամ ընտանիք էին, սիրով դիմաւորեցին, հարցրեցին եկածս երկրի, տեղի ընկերային վիճակի, օտար երկրներից հայրենք վեադարձի մասին: Յաջորդ առաւօտ, իր մանչի նման, քսան երկու տարեկան տղային ձեռքիցս բռնած... տարել քաղաքային գործադիր կոմիտէ, ներկայացրել գործկոմի նախագահ՝ Կարապետեանին, խնդրել ինձ ու մեր ընտանիքին աշխատունակ մարդկանց աշխատանքի տեղաւորել: Երբեք չեմ մօռացել այդ այնքան բարի կնոջը, չեմ մոռացել նաեւ Կարապետեանին, որի բարի միջնորդութեամբ ինձ Շուռնուխ գիւղի դպրոցում Անգլերէն լեզուի ուսուցիչ նշանակել, հայր սօքթոր Արմենակին հիւանդապահ ու պատասխանատու շրջակայ վեց գիւղերի բուժական կեդրոններին: Ես էլ՝ որպէս լեռնականի գաւակ, սիրում եմ նրանց, նրանք բարի ու հիւրընկալ են, իրենց լեռների պաշտամունք ունեն: Նրանք քաջ են, անվեհեր, հայրենասէր, իրենց լեռներին փարած, միշտ պատրաստ նրանց պաշտանութեան համար թշնամու դէմ կռուի ելնելու: Այդպէս էին եղել Մասնայ ծուրը, Մուսա լեռցի լեռնականները, Ձէթունի արի մարդիկ, Մասունցիները, Ձանգեզուրցիները:

Գործարանում զարմացել էին մեր ճշդապահութեանը ու աշխատասիրութեանը: Մի քանի ամիս յետոյ բնիկները հօրիցս պարտքով դրամ էին խնդրում: Մեր հանգէպ տաճած բարձր յարգանքի, հաւատարիմ ու բարի վարքի պատճառով, իրենց տներից բացակայութեան ատեն, ապահովութեան համար ինձ կամ հօրս խնդրում իրենց տներ գիշերել: Շրջակայ գիւղերի Հայ ու ատրպէյճանցիներ նաեւ յարգանք տածում սօքթոր Արմենակի նկատմամբ, նրան միշտ գլխաբաց տեսնելու համար «Պաշը Աչըզ Տօքթոր» այսինքն «Գլխաբաց Տօքթոր» էին անուանել: Շուռնուխի դպրոցը, Անգլերէն էի դասաւանդում, հայերի ու ատրպէյճանցիների առանձին դասարաններ էին, որոշ չափով Թուրքերէն լեզուի իմացութեամբ, նրանց դասարաններում էլ էի դասաւանդում: Տնօրէնը՝ Մուրթուզ ու ուսմասվարը Ագերի էին: Բնականոն յարաբերութիւններ էին հայերի ու նրանց միջեւ, եղբայրս՝ Շուռնուխի Նուրի անունով տարեկից մի ագերիի հետ էր մտերմացել, այն շարու-

նակուել էր երկար տարիներ: Չեմ մոռացել դպրոցի ագերի մի ուսուցիչի այն հարցումը, «Պողոս, արտասահմանում էլ ասում են, որ երկիր մոլորակը կլոր է ու արեւի շորջն է պտտուում»: «Խելքին աշեցէք» երբեք զարմանալի չէ, նրանք անցեալում ու հիմա էլ ցնդաբանում են, ուսման մէջ էլ ոչ առաջադեմ: Երեւան տեղափոխուելուց յետոյ էլ տնօրէն Մուրթուզը այցելում էր ինձ:


Աշուն էր, ոսկի աշուն, վառուում էր Ձանգեզուրը, նրա այնքան լանջերի կրակի ծովերը հոսում մինչեւ Շուռնուխի, քամին նրա կայծերը տանում հեռուներ: Խաբկանքով թէ վախով մտել անտառներ, կոխել գետինը, ունկնդրել նրա խշվշալի անուշ հնչիւնը:

1948 Դեկտեմբեր 31, «Նոր Տարի»ն էր գալու Շուռնուխի: Ընթրում էինք, տխուր էր նոր տանը: Ոչ մի սօնական պատրաստութիւն, ո՞րտեղից էինք գնումներ անելու, գործարանային խանութում ոչինչ...: Նոր տարուայ ձմեռ պապը հաստատ մեր տուն էր գալու, ի՞նչ իմանար Արմենակի ընտանիքն ո՞ւր էր հանգրուանել...: Գլխահակ մտորում էր տան տիկին Ջարուհին: Իրենց կորցրած երկրի տնում մի քանի օրեր շարունակ պատրաստում էր տարբեր ձեւերի բոկեղներ, սիրուն ու համով «Պանիր հաց», փիլաւ, սեղանին չիր ու համիչ, իրենց ընկուզէնի ծառից ընկուզ, վազրֆի իրենց պարտէզից նարինջ ու մանտարին: Այդ երեկոյ Եօղունօլուգի գիւղամիջեան ճանապարհի հրապարակում խարոյկ էին վառում, դաբնի երկար ոստերի կանաչով զարկում էին կրակին, կանաչն էր վառուում, անուշ բոյրով լցնում եկեղեցին ու գիւղը: Արմենակն էր զարկել կրակին, խարոյկի բոցերից ափով կայծեր հաւաքել՝ տարել Ջարուհիի կարմիր այտերին շաղ տուել: Խարոյկ, կրակ, իրենց հին աստուածների պաշտամունքի յուշն էր, հազար-հազար դարերից հասել Մուսա լեռան լանջերի գիւղեր, եկեղեցիներում կրակ վառել, մոմի կրակի լոյս, մօտեցել նրան՝ ափերով լոյս քաղել, ողողել իրենց երեսները, ակները սրբել նրա լոյսով:

Արմինները պաշտամունք էին նուիրել լոյսին, կրակին, աստուածացրել, Արա կոչել այն:

Արմենակի գաւակները արթուն էին, սպասում էին հայրը նուէրներ կը բաշխել իրենց, ո՞րտեղից...: Արմենակ հայրը տան դռան սեմի փոքրիկ պատշգամբ

▶▶▶





# Զանգեզուր

Ելել՝ աղմկում էր բանալանը...: Արմենակ փոքրերին գրկած, մեծերի հետ ելել իրենց տան առաջի բացատ: Շարք էին կազմել, հորաքոյր Նեկտարը Ջարուհի հարսի հետ Մուսա Լեւոն իրենց գիւղի շուրջ պարի երգերն էին թնդացնում, պարում էին մեծ ու փոքր, դողում էր բանալանը, նրա բնակիչները եկել հաւաքուել նրանց շուրջ բոլորը, ծափ էին տալիս, նմանակում նրանց պարի շարժումները, իրենք էլ շարքեր կազմած Մուսա լեւոն պարն էին բռնել: Շուռնուխի լանջին լուսինն էր իջել, այնքան մօտիկ, կարծես ահա գալու էր մեզ հետ պար բռնելու: Պարի շարքին միացել գործարանի տնօրէնի վասպուրականցի կինը, այնպէս էլ պարում, կարծես Մուսա լեւոն լինէր, գարմանալու չէր՝ Արմին-հայերը բոլորը Հայկական Սրբազան Լեւոն շխարհից էին: Բանալանի մարդիկ էլ Ջանգեզուրի իրենց պարերը կատարեցին, պար ու երգ, բանալանը նման Նոր Տարի, երբեք չէր տօնախմբել, «Թագա կալան» հայերի հետ պարեցին, երգեցին մինչեւ որ արեւը իր առաջին շողերը կը փռէր Ջանգեզուրի անտառների երեսին: Զարուհին խնդրել էր Արմենակին, իրենց երկրի սովորութեան նման, նոր տարուայ առաջին օրը եկեղեցի գնային: Արմենակ, գարմացած նայել նրան,

-Զարուհի, այս երկրի Երեւան մայր ուստանից հարաւ ոչ մի գործող եկեղեցի, մօռացել էին իրենց Աստուծոյն, իրենց հաւատքը, երկիրը չէր արտօնում ...:

Ջանգեզուրում Արմենակի տան առաջին գարունն էր: Հագարամեայ ծառերն էին սկսել փթթիլ, լեռների լանջերն էին կանաչ գոլգոռել: Անտառում ծաղկում էին տանձենիները, սալորենիները, խնձորենիները որպէս սպիտակ նորահարսեր կանգնած անհամբեր սպասում գարնան տաքուկ հեւքին: Կարմիր ծաղկած հոնի տուններն էին կրակի բոցերով շող տալիս, կարմիր ծաղիկները պիտի ընկնէին, նոր սիրուն ծաղիկներ արեւին պիտի բացուէին, մայրանային, կարմիր հոներ ժպտային արեւին: Գործարանի տնօրէնը թելադրել էր բանուորական աւանի տարածքում հող մշակել, բարիք ցանել: Նա ո՞րտեղից իմանար, որ մենք հողի գաւակներ էինք, հող էինք մշակել մեր հայրենի Մուսա լեւոն աշխարհում, Շամիրամի պարտէզներ արարել: Ես ու հայրս այնքա՛ն

այնքան լուրիկ, լուբիա, կաղամբ, գետնախնձոր հողի կուրծքին տուինք, ինչքան որ ցանել էին գործարանի ամբողջ աշխատողները: Այդ անձուկ տարիների ամրանը, ձմրանը, յաջորդ գարնանը սնուցինք գանգեզուրեան աղբիւրների պաղ ու մաքրամաքուր ջրով սնած հողի բարիքներով:

Ամրանը, Ջանգեզուրի անտառները բնութեան պարգեւած բարիքներով էին առլցուն՝ խնձոր, սալոր, զկեր, հոն, մոշ, մարգագետնի խոտերի մէջ թաքնուած անուշահամ ու բուրբուխ մորի, այլ, նրա նմանը չիք աշխարհում, մանաւանդ տանձ, համեղ վայրի տանձ: Հարուստ էր Ջանգեզուրի կենդանական աշխարհը՝ արջ, այծեամ, մուֆլոն (հայկական ոչխար) քարայծ, եղնիկ, նապաստակ: Արջերը գիշերներին մեր բանջարանոց «այցեցելում»: Հայրս, մի իրիկուն մեր բանջարանոց գնացել, յանկարծ հրացանի կրակոցներ, շտապել էի այնտեղ... հայրս էր կրակել բանջարանոց եկած արջի վրայ, բարեբախտաբար վիրաւոր արջը փախել էր, չէր չանդգնել յարձակուել կրակողի վրայ: Արարայի լեւոն բարձունքի թուրքի խրամատները փլած հայկական կամաւորական լեզոնի կապորալ Արմենակը պատրաստ էր նաեւ մենամարտելու վիրաւոր գազանի հետ:

Բանուորական աւանի որսորդների հետ գիշերով, ցերեկով արջի ու նապաստակի որսի գնացել: Նապաստակ որսացել եմ: Սակայն, անփորձ, ջահել որսորդս բախտաւոր եղել արջի չհանդիպել: Չմեռ էր, ձիւնը ծածկել էր Ջանգեզուրի դաշտերն ու լեռները, նրա սպիտակ քօղի տակ նորաբոյս ցորենի ծիւրերն էր բուն մտել: Բանալանի որսորդ Արտաշ առաջարկել էր գիշերը իրենց հետ Մագրայի դաշտում նապաստակի որսի գնալ: Պարզկայ ցուրտ գիշեր էր, լուսինը իր կաթնաթիւր երեսի լոյսն էր շողում դաշտի վրայ, կարծես ցերեկ լինէր: Իրարից հեռու կանգնած՝ հսկում առանձին տեղանքներ, երկար հսկեցի, նապաստակ չերեւաց: Հեռու էի միւսներից, վտանգաւոր էր մենակ լինելը, երկու կրակոց արձակեցի, մօտեցան, ասացի հեռու նապաստակ երեւաց, կրակեցի, վրիպել էի: Առաջարկեցի վերադառնալ: Զարմանահարաչ պատմութիւններ էին պատմում: Խմբային որսորդութեան ատեն ընկերները նկատել էին, իրենց որսընկերոջ դիմաց արջ կանգնած, մի

քանի քայլ ետ գնացել, նորէն մօտեցել, թքել նրա երեսին, այդպէս էլ երեք անգամներ, որսընկերները կրակել էին հեռացող արջի ուղղութեամբ՝ չէին կարողացել խոցել: Մօտեցել էին որսորդին... վախից պապանձուած եղել, նրան տարել էին հայրենի Բարձրաւան գիւղ, խնձոյք կազմակերպել, թմբուկ գարկել, որսորդը հագիւ էր սկսել կցկտուր խօսել:

Պիթիւսցի Ղարաօղլանեան ծնողների գաւակ իմաստուն Հայ հսկայ Սարոյեանը մի հաւաքի առիթով գոռացել էր՝ «Ուր որ ըլլաս, Հայաստան պոռայ»: Շատ հեռու էի նետուել իմ ծննդավայր Մուսա լեւոն շխարհ: Հոգուս արթնած խօսքով՝ գրում եմ Ջանգեզուր աշխարհում իմ կեցութեան ընթացքում կեանքիս երջանիկ մի հատուածի մասին, բազմանդամ ծնողներիս հետ Ջանգեզուրի այդ լեռնաշխարհում ապրած մի քանի տարիների յուշերից պատառիկներ, մասամբ հաղորդակից դարձնել նաեւ այդ լեռնաստանի վեհութեանը, նրա լեռնական մարդկանց վեհանձնութեանը:

Գորիս քաղաքում դեռեւս պահպանուել էր այն տունը, որտեղ իջեւանել էր քաջերի-քաջ, առասպելական դիւցաճուն Անդրանիկ Փաշան: Վանաձորի մատոյցներից՝ երեսուն հազար գաղթական հայերին, իր գորախմբի պաշտպանութեամբ բերել Ջանգեզուր: Այդ տան պատշգամբից, բոցաշունչ գորավարը հայրենաշունչ խօսքով ալեկոծել գանգեզուրցիների սրտերը, գորակոչի խօսք ուղղել գանգեզուրցիներին, նրանց ու իր գորամասի հետ արշաւելու դէպի Արցախ, այդ երկրամասը ազատագրելու ազերի-թուրք հրոսակներից: Գորիս, քրոջս այցելութեան ատեն բարձրացել այդ պատշգամբ, երեւակայութեանս պատառին տեսել սպիտակ ձիուն հեծած գրոհի գնացող Փաշային, ունկնդրել քաջի խօսքը:

Անդրանիկ, իր գորամասի ու Ջանգեզուրի գինեալների հետ արշաւել Արցախ, ազատագրել Շուշի ամրոցը, իր յաղթանակի երթին ընդառաջ ելել Բաքուն գաւթած Անգլիացի գորավար Թոմսոնի պատուիրակները: Անդրանիկին տեղեկացրել էին, որ պատերազմը արդէն վերջացել, ինչու էր կուռի ելել դաշնակիցների դէմ: Անդրանիկ թուրքին երբեք չէր հաւատացել, սակայն հաւատաց դաշնակից գիւնուորի խօսքին, դադարեցրեց գիւնուորական արշաւը, վերադարձաւ Գորիս: Ափսո՛ս, նորէն խաբոււմ էին Արմին-հայերին:

Գորիսում, անգլիացիների հետ

ժողովի նստել Բանակցութիւնների սեղանին Ռուսաստանի դրօշակն էր: Նրանց այն հարցումին, թէ ինք որ կողմին էր ներկայացնում, յանդուզն խօսքով պատասխանել՝ «Ռուսաստանին, կովկասի լեռներից հարաւ Ռուսաստանն է նուաճել, երկար տարիներ տիրել նրան, նա ամպայման կը վերադառնար»: Ջանգեզուրի արի մարդիկ քաջին վայել տօնախմբութիւններով ճանապարհել Անդրանիկին ու իր գորարխումբին, անկախ հռչակուած Հայաստան գնում, վեց հարիւր տարիների դադարից յետոյ լուսահեղեղ կանթեղ էր վառոււմ «Արայի Լեռ Արագածի քառագագաթին»:

Դժբախտութիւն եմ ունեցել 1949 թուականի Յունիս ամսուայ վերջին ակնատեսը լինելու Ջանգեզուրի հայերի ցուրտ երկիր աքսորին: Աշխատանքի բերումով Ղափան էի գնում, ճանապարհին աքսորականների բեռնատարերի շարասիւններ, նրանց թափքերին վարսերը զգգոլած կանայք, խելակորոյս դէմքերով տղամարդիկ, իրենց մայրերին կծկուած սարսփահար եղած մանուկներ, «Տուն եմ ուզում» աղիաղորմ կանչով մանուկներ: Ղափանի երկաթուղու կայանան, վշտահար ամբոխ, որի տեսարանին ակնատես լինելու համար առիւծի սիրտ պիտի ունենայիր: Նախկին դատաւոր Վարդուշ Մանասէրեան, շատ «Արդար դատելու» համար հասուն տարիքին, մեղայ քեզ... տեսողութիւնից զրկուել էր, պատմում էր, որ աքսորից կարճ ժամանակ անց հանրապետութեան դատախազը ընդհանուր ժողովի ատեն յայտարարել, որ այդ աքսորը ինքը համարել էր ոչ արդարացուած ու ոչ էլ օրինական: Սակայն, ինքն այն կատարել էր ի պաշտօնէ, այդ սպորէն արարքի համար ինքնակամ պաշտօնակութիւն էր յայտարարել, մեկնել Հայաստանից: Այդ տղամարդը դատախազ Յովհաննիսեանն է եղել, ահա քեզ այդ ժամանակների հազուագիւտ առիւծասիրտ հայկագուն այր, ըստ նախկին դատաւոր կնոջ պատմածի, նորէն պաշտօնի էին կոչել նրան:

Միւսեաց աշխարհը եղել էր կապոյտ ակներով Գեղամայ-Սեւանայ ծովից մինչեւ Արաքսի ու Կուր գետի ափեր՝ Ուտիք, Արցախ աշխարհ, Ջանգեզուր գաւառ, տիեզերական աստուածների հետ հաղորդակցած բանաստեղծ-երգիչների Գողթան գաւառ, որտեղ օտարազգի մի պարթեւ ոչ միայն լռեցրեց

Շար.ը էջ 43





**ՄԱՍԻՍ - 2019**

**Նիկոլը ժողովրդի «Ծառան» է**

Շարունակուած էջ 10-էն

Համայնավարների օրօք) Սկանդի- նաւեան երկրները մեծամասամբ:

Իշխող փաթեթները յետգն- ման արդարացի եղանակն էլ գիտենք, միայն քաղաքական կամք է հարկաւոր:

Ոչ մի հայրենասէր իշխա- նութիւն, իր երկրի ազգային

հարստութիւնը եւ ռազմավարա- կան օբյեկտները այնպէս քամուն չէր տայ, ինչպէս հայաստանի իշ- խանութիւնները վերջին 20 տա- րում: Ինչպէս տնտեսական այնպէս էլ քաղաքական ասպեկտով այդ ամէնի խայտարակ վկայութիւնն է, գազի գնի բարձրացման վերաբեռ- եալ տրագի-կ'ոմեդիան կապուած Պուտին-Փաշինեան հանդիպման հետ:

**Յո՞ երթաս Յ.Յ. Հիմնադրամ**

Շարունակուած էջ 12-էն

Թիւններ չեն պատրաստեր, որպէս զի աշխարհասփիւռ հայութիւնը թելեթոնի քանի մը ժամերու ըն- թացքին միաւորուելու կապուել իրար հետ: Ինչպէ՞ս պատահեցաւ որ հայ ժողովուրդի 70 տոկոսը կազմող սփիւռքահայութեան հնա- րաւորութիւնները հայրենիք հասց- նելու փոխարէն, հանգանակուած \$35 միլիոնին \$30 միլիոնը կու գայ հայրենիքի մի քանի գործարարնե- րէն: Ու դեռ քանի մը ամիս առաջ,

դարձեալ հայրենի քանի մը գոր- ծարարներ \$600 միլիոնի խոս- տումներ կու տային...

Մենք կը մնանք համոզուած, որ հիմնադրամը աւելի արդիւնա- ւէտ կառուց կը դառնայ, երբ կը գործէ արդարութեան, ժողովրդա- վարութեան եւ օրէնքի գերակայու- թեան հիմունքներով առաջնոր- դուող Հայաստանի մէջ մեր առաջ- նահերթութիւնը այդ պէտք է ըլ- լայ: Մեր տունը, Հայաստանը այդ հիմունքներով պէտք է կառուցենք:

**Թուրքիոյ Քիւրտերու ճգնաժամը Աթաթուրքէն Սինչեւ Սուլթան երտողան**

Շարունակուած էջ 19

կան բանակը պիտի շարունակէ քիւրտ մարտիկներու հետապնդու- մը ամէն տեղ: 2012 թ. նոր բանակ- ցութիւններ տեղի ունեցան Էրտո- դանի եւ Օջալանի միջեւ եւ անոր հետեւեցաւ խաղաղութեան շրջան մը, որ վերջ գտաւ 2015 թ. Սուրիոյ պատերազմի պատճառով: Քիւրտ- տեր 2012 թ. Սուրիոյ Քամիշլի, Գուբանի եւ Աֆրին քաղաքներուն մէջ ինքնավար շրջաններ հիմնե- ցին, եւ յայտարարեցին թէ անկա- խութեան չեն ձգտիր, սակայն պա- տերազմի շարունակութիւնն ու քիւրտերի ու դերը ՏԱԻՇ-ի դէմ լարուածութիւնը աւելցուց Թուրք- իոյ եւ քիւրտերու միջեւ: Յուլիս 2015 թ. թրքական Սորոշ քաղաքին մէջ ՏԱԻՇ-ի կողմէ անձնասպա- նութիւն մը տասնեակ քիւրտերու կեանքը խլեց, թուրքերը յանցաւոր սեպուեցան եւ անոր դէմ քիւրտերը երկու թուրք ոստիկաններ սպան- նեցին Ուրֆայի մէջ: Թուրքական օդային հարուածները որոնք ուղղ- ուած էին Սուրիոյ քրտական ջո- կատներուն դէմ շարունակուեցան ՔԿԿ-ի հետ կապ ունենալու պատր- ուակով: Իրաքի քիւրտերը ուղե- ցին միանալ Սուրիոյ քիւրտե- րուն հետ, որպէսզի միասին ՏԱ- ԻՇ-ի դէմ պայքարին, սակայն էր- տողան այդ քայլը Թուրքիոյ դէմ ուղղուած համարեց եւ Դեկտեմբեր 12, 2017-ին ան շեշտեց, որ իր երկրի սահմաններուն վրայ անկա- րելի է քիւրտական պետութիւն կառուցել: Յիշենք որ ներկայիս Թուրքիան Սուրիոյ մէջ քիւրտա- կան քաղաքներ եւ տարածքներ գրաւած է, քիւրտ մարտիկները չէզոքացնելու եւ անոնց կապերը

ՔԿԿ-ին հետ կտրելու համար: Քիւրտերը փորձեցին մասնակցիլ թուրքիոյ քաղաքական կեանքին մէջ եւ 2012-ին հիմնեցին «Ժողո- վուրդներու Ռամկավարական կու- սակցութիւն» որը 2015 թ. յաղթա- նակ կրեց եւ Թուրքիոյ խորհրդա- րանը մտաւ 78 երեսփոխաններով:

Այնուամենայնիւ, պետութեան հետ փոխմբռնման բոլոր փորձե- րը ձախողեցան, եւ այդ կուսակցու- թեան ղեկավարները այս կամ այն պատճառով բանտարկուած են, վեր- ջերս թուրքական կառավարու- թիւնը Տիարպէքիի շրջանի քիւր- տական տարածքները, Սուր քա- ղաքը եւ այլ շրջաններ աւերկանե- րու վերածեց եւ դեռ հակամար- տութիւնները կը շարունակուին: Քիւրտերու ինքնութիւնը ոչնչաց- նելու բոլոր փորձերը ոչ մէկ ար- դիւնք չտուին եւ անոնք կը շարու- նակեն իրենց պայքարը:

Ժամանակին, 1890 թ., հա- միտեան ջոկատները հիմնուեցան Ապտուլ Համիտ II կողմէ, անոր անդամներու մեծ մասը քիւրտ հեծեակներ էին, որոնք իրենց շրջա- ներուն մէջ համիտեան կոտորած- ները կատարեցին եւ աւելին անոնք ուրիշ շատ մը քիւրտ ցեղախում- բերու հետ միասին թալեաթի հետ մաս կազմեցին 1915 թ. հայոց ցեղասպանութեան ծրագիրին եւ հայուն տունն ու տեղը գրաւեցին, եւ Աթաթուրքի օրով անոր հետ գործակցեցան յոյս ունենալով որ իրենց ազգային իրաւունքներուն պիտի տիրանան: Սակայն թուրքը թուրք է, անոնց ալ հայոց դառն բաժակէն խմցուց եւ դեռ կը խմցնէ. քիւրտերը կ'ըմպեն նոյն այն դառն գաւաթէն, որ հայերուն ըմպել տուին թուրքերուն հետ միասին:

**2018 Տարուայ Գլխաւոր Իրադարձութիւնները**

Շարունակուած էջ 25

տարիներ բռնութեամբ, խարդախութեամբ ու ընտրակեղծիքների միջոցով Հայաստանի քաղաքացուց խլուած քուէի իրաւունքը այսօր վերականգնուեց եւ քաղաքացին կրկին հնարաւորութիւնն ունեցաւ իր ազատ կամքով բուժարկելու իր նախասիրած թեկնածուի օգտին, վերիմաստաւորելով իւրաքանչիւր բուէն: Իսկ սա անտարակոյս թաւշեայ յեղափոխութեան մեծագոյն նուաճումներից մէկն է:

**«Ամենամեծ Մարտահրաւերն է՝ Չղաւաճանել Յեղափոխութեանը»**

Շարունակուած էջ 14-էն

թեան վերաբերեալ, ինչպէ՞ս է նա յա- րաբերուում աշխարհի հետ:

- Մեծագոյն յարգանք եմ տա- ծում, քանի որ կարծում եմ՝ Հնդկաս- տանը վերջին տարիներին աշխար- հին այլ կերպ է ներկայանում: Հնդկաստանի հեղինակութիւնն աշ- խարհում շատ աւելի դրական է, աւելի դինամիկ ու նորարար: Եւ այդ ամէնը՝ նաեւ շնորհիւ վարչա- պետի գործունէութեան:

Յուսով եմ՝ մենք առիթ կ'ունե- նանք հանդիպելու եւ քննարկելու մեր երկրների միջեւ յարաբերութիւննե- րի զարգացումը: Ես մեծագոյն յար- գանքով եմ վերաբերուում նրան:

- Կպատմե՞ք կլոպալ ռիսկերի քուանտային վարքագիծի վերաբե- րեալ Ձեր գրքի մասին:

- Դա 21-րդ դարի իրականու- թեան մասին է, որը շատ տարբեր է լինելու: Տարբեր են լինելու ոչ միայն ռիսկերը:

Քուանտային վարքագիծը դա- սական է, ինչպէս եւ 21-րդ դարը, որը արմատապէս տարբերուելու է այն ամէնից, ինչ մենք տեսել ենք 20- րդ դարում: Քուանտային վարքա- գիծը նշանակում է նաեւ, որ մենք շատ փոխկապակցուած ենք, իրա- դարձութիւնները տեղի են ունենում անմիջապէս: Կլոպալիզացիան հա- տելու է կարմիր գիծը, եւ հնարաւոր չի լինելու այն կանգնեցնել: Մակրո կլոպալիզացիան վերածուելու է միկրո կլոպալիզացիայի:

Մենք թեւակոխում ենք սրըն- թաց էլուցիայի դարաշրջան: Գա- ղափարները, ոգեշնչումը, հասանե- լիութիւնը նախապատուելի են կու- սակցութիւններից, կազմակերպու-

թիւններից, համակարգերից եւ այլն: Մենք ապրելու ենք բացարձակապէս այլ աշխարհում: Ֆրանսայում նա- խագահ Մակրոնը կարճ ժամանակ անց ունեցաւ հազարաւոր հետե- ւորդներ: Սա էլ մի քուանտային վարքագիծ օրինակ է, երբ մարդիկ փոխկապակցուած են եւ նրանց սպա- սումները պէտք է արդարացուեն այսօր, ոչ թէ հինգ տարի յետոյ, այլ՝ այսօր, վաղը:

Հնդկաստանը մէկն է այն երկր- ներից, որտեղ մարդիկ օր-օրի աւելի մեծ հնարաւորութիւն են ունենում հաղորդակցուելու: Այն պլանները, որ վարչապետը, կառավարութիւնն ու արդիւնաբերողներն ունեն Հնդկաս- տանի հետ կապուած եւ որոնց մասին ես լսել եմ ու կարդացել, ֆենոմենալ են եւ նախորդ դարաշր- ջաններից տարբեր: Այսպիսով, բա- րի գալուստ 21-րդ դար:

- Դուք գիտնական էք, դեսպան, Դուք յայտնի »տետրիս« խաղի համա- հեղինակն էք, դուք առաջնորդել էք երկիրը յեղափոխութեան ժամանակ: Ինչ է լինելու յաջորդիւ:

- Ես չեմ առաջնորդել յեղափո- խութիւնը: Ես պարզապէս փորձել եմ այն դարձնել ապահով, որպէսզի յեղափոխութիւնն իրականանայ խա- ղաղ ճանապարհով:

Ես նախագահ եմ ընտրուել 7 տարի ժամկետով եւ դեռ ունեմ պաշտօնավարելու 6 տարի՝ մի աշ- խարհում, որն աւելի ու աւելի քուանտային վարքագիծ է դրսեւո- րում: Քանի որ շատ եմ մտածում այս աշխարհի մասին, յուսով եմ, որ իսկապէս կհասկանամ, թէ ուր է շարժում այս աշխարհը, եւ թէ որն է լինելու իմ երկրի ու ժողովրդի տեղն այս աշխարհում:

**«Ինչպէ՞ս ժամանակները Կրնան Փոխուիլ»**

Շարունակուած էջ 35

տակաւին որքա՞ն ընդունուած եւ կամ ոչ՝ մարդոցմէ ու հաւաքականու- թենէ: Որովհետեւ այս նոր կեանքի Արժէքը «վստահելի» է եւ ժամանա- կի սլացքին հետ սահմանափակուած չէ: Եւ որ նաեւ այս կեանքը անձնա- կեդրոն եւ ինքնամիտի ու ինքը իր մէջ կեանք մը չէ եւ չի կրնար ըլլալ: Եւ «ուրիշին տալը» կը սկսի անձէն, որ կը նորոգուել եւ ապա կ'անցնի ու կը փոխանցէ՝ իմա կը կերտէ նոյնը ուրիշին համար: Կարելի չէ, որ եթէ անհատը ինք չէ նորոգուած կրնայ նորոգել ուրիշը: Եւ այս երկկողմանի իրականութեան մէջէն է որ պէտք է տեսնել թէ Քրիստոնէական «ուրիշի տալը» կեանք մըն է, որ նաեւ կը նորոգէ մարդկութիւնը եւ հաւաքա- կանութիւնը եւ ուր նոյն այս նոր ու նորոգուած մարդը անդադար կ'ար- տադրէ Արժէքի վրայ հիմնուած նոր կեանք(եր) եւ այս իր համապարփակ հասկացողութեանը մէջէն:

Արնոլտը իր ապրած փառքի օրերէն ետք ապրեցաւ ու երեւի տակաւին կ'ապրի յուսախաբու- թիւնը...: Նոյնիքն, իր իսկ շինած կեանքին եւ անոր համբաւին մէջէն, որ սահմանուած էր ժամանակի պայ- մաններուն մէջ: Գարտիստը կ'ապրի իր պարզ անհատի կեանքը, իր իսկ

բառերով՝ «Գիւրի Պլուքը»...: Բայց կ'ապրի կառչելով իր իսկ կեանքին համար հիմքը դարձուցած հաւատ- քովը: Հաւատքի գիտակցութեամբը որ կ'անցնի բոլոր ժամանակները:

«Ինչպէս ժամանակները կը փոխ- ուին»: Այո, բայց կայ Արժէքը որ չի փոխուի: Եւ բոլոր ժամանակներուն մէջէն եւ որ իրական դարձաւ Աստու- ծոյ աշխարհ գալովը: Եւ նոր կեանքի գիտակցութեամբը: Հոն ուր Քրիստոս՝ մարդեղացած իր կեանքով՝ ստեղծեց նոր կեանքը մարդուն համար, որ յաւիտեան է եւ չի փոխուի:

Եւ ընտրանքը մերն է: Արնոլտին համբա՛ւը: Ո՛ւժը՝ դի՛րքը: Ու անոր պատճառաւ յուսա- խաբութիւնը: Թէ Գարտիստային «պարզ մարդու» կեանքը: Որ հիմն- ուած է նոր կեանքի Արժէքին ու անոր հաւատամքին եւ հիմքին վրայ:

Արժէքը՝ ու Արժէքի այս կեանքը: Որ պէտք է ապրիլ, ապրեցնել եւ կերտել: Կերտել նոր Արժէքի կեանքերը:

«Այն որ տուի ուրիշին»: Քրիս- տոս մեզի տուաւ Արժէքի կեանք մը: Եւ եթէ այս կեանքը մեզի համար է եւ որ նաեւ պէտք է որ տանք ուրիշին: Բոլորին:

Եւ այս արժէքով է, որ կեանքեր կը կերտենք: Իմ, քու եւ անպայմա- նօրէն բոլորիս: Եւ որ «ժամանակնե- րու հետ չի փոխուի...»:

«Շնորհաւորուած եմք ընտրութիւններուն յաղթանակած կուսակցութիւններին, եւ մաղթում, որ նորընտիր Ազգային ժողովն ու ապագայ կառավարութիւնը անմիջապէս կը լծուեն հայրենիքի առաջ ծառայած բազում մարտահրաւէրների յաղթահարման գործին, յանուն ժողովրդավար, սոցիալապէս արդար ու բարգաւաճ Հայաստանի»:



ՄԱՍԻՍ - 2019

Վերականգնում Կիլիկիոյ Աթոռին

Շարունակուած էջ 36-էն

փաստաթուղթեր որոնք կարեւոր նպատակ կը բերեն Հայ Եկեղեցւոյ ընդհանրապէս եւ Կիլիկիոյ Աթոռին յատկապէս՝ հայոց պատմութեան դժուարին դարաշրջանի լուսաբանման համար: Մեր վերելի Կիլիկեան Աթոռի վերականգնումի հակիրճ տեղեկութիւնները հիմնաւորեցինք սոցն հատորի համապատասխան 10 վաւերագրական գլուխներէն քաղելով, նամակներ եւ կոնդակներ, որոնք են՝

ա) Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի նամակը Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւասութեան տակ որոշ թեմեր դնելու առաջարկութիւնները մասին (25 Դեկտեմբեր 1928):

բ) Սահակ Բ. Կաթողիկոսի նամակը Մատթէոս արքեպիսկոպոս Մատթէոսեանին իր «Կտակ»ից մէկ օրինակ ուղարկելու Ընդհանրական Հայրապետի դիրորութիւնները իմանալու ցանկութեամբ, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պահելու եւ Հայ Եկեղեցին կաթողիկոսութեան վտանգից փրկելու վերաբերեալ (22 Հոկտեմբեր 1928):

գ) Սահակ Բ. Կաթողիկոսի նամակը Խորէն արքեպիսկոպոս Մուրատբեկեանին՝ էջմիածնից ուղարկուած նամակներն ու կոնդակները ստանալու Դամասկոսի, Պէյրութի եւ Լաւողիկէի վիճակները Կիլիկիոյ Կաթողիկոսութեանը յատկացնելու հաւանութիւն խնդրելու մասին (22 Մայիս 1928):

դ) Սահակ Բ. Կաթողիկոսի նամակը Մատթէոս արքեպիսկոպոսին Սիրիայում եւ Լիբանանում հաստատուած կրօնական համայնքների, հայ եկեղեցու ընդհանրական, Երուսաղէմի միաբանութեանը միջնորդելու եւ կենսական այլ հարցերի մասին (17 Օգոստոս 1928):

ե) Գաբրիէլ Նորատունկեանի նամակը Սահակ Բ. Կաթողիկոսին՝ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռի Սիրիայում վերահաստատման մասին (5 Յունիս 1924):

զ) Սահակ Բ. Կաթողիկոսի

նամակը Ազգային Պաշտօնական նախագահին՝ Սիրիայի հայութեան վարչակրօնական կազմակերպութեան հարցերի մասին (10 Մայիս 1924):

է) Գաբրիէլ Նորատունկեանի նամակը Եղիշէ Պատրիարք Դուրեանին Պէյրութում Սահ Կաթողիկոսական Աթոռի վերահաստատման անհրաժեշտութեան եւ տարուած աշխատանքների մասին, հարցը ուղղակի բանակցութիւնների միջոցով լուծելու խնդրանքի մասին (19 Ապրիլ 1924):

ը) Եղիշէ Պատրիարք Դուրեանի նամակը Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսին Կիլիկեան Աթոռի Լիբանան վերահաստատման ձեռնարկին հաւանութիւն տալու, երկու Աթոռների միջեւ մտերիմ յարաբերութեան ստեղծման, էջմիածնի Ընդհանրական Հայրապետութեան եւ Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական գլխաւորութեան պահանջման մասին (28 Մարտ 1924):

թ) Սահակ Բ. Կաթողիկոսի նամակը Եղիշէ Պատրիարք Դուրեանին Սիրիա Լիբանան հաստատուած 100,000 հայերի ազգային-եկեղեցական կազմակերպութեան եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարատեւութիւնը ապահովելու համար ֆրանսական կառավարութեան հետ բանակցելու եւ Երուսաղէմի իրաւասութեան տակ գտնուող որոշ եկեղեցիներ ժամանակաւորապէս իրենց տրամադրութեան տակ դնելու խնդրանքի վերաբերեալ (14 Մարտ 1924):

ժ) Սահակ Բ. Կաթողիկոսի նամակը Գ. Նորատունկեանին Պէյրութում, Դամասկոսում եւ Հալէպում ազգային միութիւններ ստեղծելու, թաղային խորհուրդներ ընտրելու, ազգային պատուիրակութեան ներկայացուցիչ դուրսորդ Մեղքոնեանի գործունէութեան թուլացման եւ քաղաքական կուսակցութիւնների նպատակների մասին (11 Փետրուար 1924):

Սոցն գրութիւնս կը փակեմ յուսարով որ ատաղջ նիւթ հայթայթած կ'ըլլամ Կիլիկեան Աթոռի յետ-եղեռնեան վերականգնումի կարեւոր հանգրուանին:

սիրոյ հետ:

Ուստի ո՛վ մարդ, դուն որ այսչափ մտաւոր կարողութիւններով եւ բարոյական նկարագիրով օժտուած ես, գիտցիր թէ անասուն մը չես, որուն մտքին մէջ անասնական համակրութիւններ եւ կիրքեր կը տատանին: Քու կեանքիդ փառքը մի՛ դնէր երբէք աշխարհային վաղանցուկ բաներու վրայ, որոնք փոքր նաւակի մը պէս լեռնահանգոյն, բարձրացող փրփրադէզ պիտի ներուն խաղալիք կ'ըլլայ: Քեզի համար կեանք մը կայ անվախճան, կեանք մը Աստուծոյ եւ հրեշտակներուն ընկերակցութեան մէջ. փնտռէ քու Տէր Աստուծոյդ կեանքիդ բոլոր օրերուն մէջ: Լայն բաց հոգիդ մաքուր եւ սուրբ զգացումներու առջեւ, փարէ Փրկչին, եւ Ան այս մահառիթ տատակներէն պիտի ազատէ քեզ անվթար եւ ապահով. պիտի մօտեցնէ, պիտի տանի քեզ կեանքիդ իրական փառքին, յաւիտենականութեան, եւ Աստուծոյն:

Ձանգեզուր

Շարունակուած էջ 41-էն

բնութեան փառաբանման նրանց երգերը, այլ նաեւ մարեց նրանց արմենական հանճարներից յորդած մագաղաթների լոյսը: Արմին-հայ արի մարդկանց աշխարհի թագաւորութեան անկումից յետոյ՝ նոր թագաւորութիւններ էին հիմնադրուել Սիւնեաց աշխարհում: Կուր ու Արաքս գետերի միջեւ տարածքին թագաւորել էին Սիւնեաց աշխարհի Սիսական նահապետի ժառանգներից՝ Առանչահիկները, որտեղ, ըստ յոյն պատմաբան Ստրաբոնի, նոր թագաւորութեան սկզբին արդէն ամբողջութեամբ բնակեցուած եղել հայախօս Արմին-Հայ բնակչութեամբ: Նման մի «խօսուն» եզրակացութիւն յայտնել նաեւ Ռուսաստանի պատմութեան կաճառի ակադեմիկոս՝ Զախարով, ուղղուած նախագահ Կորպաչովին, ի պատասխան Արմին-Հայ պատմաբան՝ Մարտիրոս Գաւուքճեանի հարցումին:

Հրճուանքով ու գուարթ հոգով վերապրում եմ Ձանգեզուր աշխարհում կեցութեան չուշերս: Շուռնուխի աւանից բացի եղել եմ նրա շէներում, որտեղից հասել են ինձ Դաւիթ Պէյկի, Մխիթար Սպարապետի, Տէր Աւետիքի, Արցախի մելիքների խոցեանքների արձագանքները: Առասպելական Շաքի, նրա ջրերում լողացող մերկ աղջիկը, ի տես մի անցորդի, ամօթխածութիւնից սահել էր բարձունքից,

Կեանքի Ձերմացնող Խթանը

Շարունակուած էջ 34-էն

եւ պարսիկ ժողովրդի յարգն ու պատիւը:

Մի ժողովրդական առած կայ ասում է՝ որդին ճամբորդութեան գնայ հայրը հետը, գանձը՝ գնայ տէրը հետը: Ընտանիքը քայքայուելուն դէմ եմ, ինչ գնով եղել է ընտանիքը պէտք է պահել առոյգ, մանաւանդ մեր հայ իրականութեան տեսանկիւնից շատ կարեւոր է եւ օրհնաբեր: Ուստի կինս եւ զաւակներս գնացել էին, հակահայկական եւ հակակրօնական բնոյթ կը կրէր չմիանայի նրանց: Ահաւասիկ տաս տարուց վեր է, որ ապրում եմ Գլենդէլում, գոհ եւ ուրախ եմ ընտանիքիս մօտ եմ գտնուում, սակայն միշտ իրանն ու իրանահայութիւնը մտապատկերումս են երախտապարտ հոգեբանութեամբ երկու տարին մէկ այցելելով իրան:

Ամերիկան իր գրաւչութեամբ մագնիսի պէս տարբեր ցեղի ժողովուրդներին իր հովանու տակ է քաշում, որոնցից նաեւ հայեր են: Որոշ ներգաղթողների համար ազգային մշակութիւն պահպանումը անքան հարց չէ եւ լուծուում են տիրող իրավիճակին, սակայն մեր հայերիս համար անընդունելի եւ դատապարտելի է, նկատելով որ քիչ ենք, բազմանալու կարիք ունենք հայ դատի պայքարը յաջողութեամբ տեղ հասցնելու համար: Այս ուղղութեամբ ցաւօք աշխատանքները թոյլ են, եղած միջոցներից չենք օգտուում անտարբերութեամբ երեսի վրայ ձգելով, ահնայատ է որոշ պաշտօնով մէկերը փափուկ աթոռները պահելու համար ազգի գործերին անուշադիր են, այդպիսի անպատասխանատու մարդիկ

իր երկար վարսերից ջուրը հոսել, վերածուել փրփրակէզ արեւափայլ ջրվէժի: Օսմանցի թուրքեր հասել Ձանգեզուր, որոնց դէմ մարտի ելած լեռնականներ ու Դաւիթ Պէյկի քաջագուն մարտիկներ վռնտել նրանց: Արցախ աշխարհի Գիւլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդի, Դիզակի մելիքներ նաեւ յաղթական կուխներ մղել իրենց աշխարհ հասած թուրք աւագակների դէմ: Պարսից Շահը նրանց յորջորջել՝ «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է»: Կանգնել եմ այդ աշխարհի աւերակ բերդերի փլած որմերի առաջ, կարծես ես էլ մարտի նետուած լինէի թշնամու դէմ, գէնքի շաշիւններով, պատեանից հանած սուրով հալածել թշնամուն: Եթէ լինէիք աւերուած Բաղաբերդի հրապարակում, պիտի տեսնէիք երկնի կապոյտին գնացող կրակի ու ծուխի գալարներ, գիր ու թուղթ չտեսած թուրքը այլու՞մ էր արմին-հայերի մտքի ու հոգու տաճարներից ճառագած տասը հազար մագաղաթներին գրուած մատեանների լոյսը: Խորհուրդների կարմիր երկրին մայրամուտ տանող խիզախ մարդիկ նորէն մարտի ելան, վռնտեցին թաթարներին, խորտակեցին Խորհրդային երկրի գծած սահմանները, Ձանգեզուրը հասաւ իր ջրապատնէշ քայլամուրը անցնող Մայր Արաքսին, իրենց գէնքերը պաղեցրին նրա ջրերում... քրտնած մարմինները հովացրին:

պիտի հեռացուեն: Մենք մեր հայկական հեռուստակայաններից թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ հայրենիքում պահանջում ենք առաւել բարոյական արժէքներին կարեւորութիւն տան, ոչ թէ ցինիլ եւ անբովանդակ ծրագրերով անյուսալի հայկականութիւնից կտրուած բիզնեսային բովանդականութիւն դարձնեն: Կայանները հոգները չեն հայկական դաստիարակութիւնը, մեր անաղարտ մշակոյթը, լեզուն եւ մեր ազգային ուսուցիչութեան պահանջները բարձրաձայն հնչեցնելու քաղաքականութիւնը, օրնիբուն մերկ կանաչք են ցոյց տալիս, գովազդեր եւ մեր մշակոյթին ոչ յարի անորակ եւ շեղիչ ծրագրեր եւ կինոժապաւէններ: Ասում են՝ Խաչն ով է գորացնում, պարզ է, թէ՛ տէրը: Այո՛, իւրաքանչիւր հայ պէտք է նախանձախնդիր լինի իր ազգային արժէքների պահպանման մէջ, եթէ ոչ տխուր ապագայ է սպասում մեզ հայկականութիւնից զրկուած:

Սիրելի՛ ընկերներ, դեռ չխօսեցի մեր մատաղ սերնդի մասին, որ առաւել վարժուած են օտար լեզուով խօսել՝ տնից սկսեալ մինչեւ դպրոց եւ փողոց: Ամուսնալուծութիւնների եւ խառն ամուսնութիւնների մասին դեռ չսասցի եւ ուրիշ շատ անհանգստացնող երեւոյթներ, այս վիճակը քիչ թէ շատ սփիւռքեան գաղթօջախներում նշմարելի է, լուրջ ծրագրերի կարիքն է զգացուում մեր կազմակերպութիւններից եւ իշխանաւորներից:

Ահա այսպէս մի քանի ժամեր հին ընկերներս քով-քովի հայից խօսեցինք եւ մտահոգութիւններ:





**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
 ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ  
 ՍՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ  
 ՄԱՂԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ  
 ԵՐՉԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵԲԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԴԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ  
 ՔԷՕՐՈՂԼԵԱՆ**